ՁԵՌՆԱՐԿ

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ 21 -ՐԴ ԴԱՐԻ ՇԵ-ՄԻՆ

Էջմիածին - 2010

ՁԵՌՆԱՐԿ

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ 21 -ՐԴ ԴԱՐԻ ՇԵՄԻՆ

UNFPA "COMBATING GENDER-BASED VIOLENCE IN THE SOUTH CAUCASUS" PROJECT, ARMENIA

ՄԱԲՀ «ԸՆԴԴԵՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ »
ԾՐԱԳԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

Էջմիածին – 2010

Այս ձեռնարկի հրատարակումը իրականացվել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» հայաստանյան ծրագրի աջակցությամբ:

Publication of this Manual was supported by UNFPA/ Armenia "Combating Gender-Based Violence in the South Caucasus" project.

«Հայ ընտանիքը 21-րդ դարի շեմին»	"Armenian Family on the Edge of 21st Century"
Ձեռնարկ հոգևորականների համար	Manual for Clergy
©2010 Միավորված ազգերի բնակչության հիմնադրամ	© 2010 United Nations Population Fund

ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիր	UNFPA "Combating Gender-Based Violence in the South Caucasus" project
Պ. Ադամյան 14, Երևան, Հայաստան	14 P. Adamyan St., Yerevan, Armenia
Հեռ.՝ +374 10 54 17 92	Tel.: +374 10 54 17 92
էլ. Փոստ՝ sargizova@unfpa.org	E-mail: sargizova@unfpa.org

Այս ձեռնարկը մշակել է եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամը ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում, Տեր Շահե աբեղա Անանյանի և Լիլիթ Զաքարյանի հեղինակությամբ:

This Manual was elaborated by the World Council of Churches Armenia Round Table Foundation within the framework of UNFPA "Combating Gender-Based Violence in the South Caucasus" project authored by Rev. Fr. Shahe Ananyan and Lilit Zakaryan.

Շապիկը՝ «Սուրբ ընտանիք»: Հեղինակը՝ Բարտոլոմե Էստեբան Մուրիլլո (1617-82)
Front cover: "Saint Family", painting by Bartolome Esteban Murillo (1617-82)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Թեմա I.

Գենդերային տեսության ներածություն

- Ծանոթություն հիմնական հասկացությունների հետ
- Գենդերային կարծրատիպեր
- Գենդերային նորմեր
- Գենդերային նույնականություն
- Գենդերային սոցիալականացում
- Գենդերային համակարգ
- Գենդերային խտրականություն

Թեմա II.

Գենդերային հիմնահարցեր. գլոբալ և տեղային դրսևորումներ

Թեմա III.

Գենդերային բռնություն

- Գենդերային բռնության երևույթը
- Գենդերային բռնության տեսակները
- Ներընտանեկան բռնություն

Թեմա IV.

Հայ Եկեղեցու ավանդն ի նպաստ ներընտանեական սիրո և խաղաղության

- Տղամարդ և կին. սեռային տարբերություն և քրիստոնեական բարոյականություն
- Տղամարդու և կնոջ դերերի ընկալումն ըստ Հայ եկեղեցական ավանդության
- Պսակի խորհրդի իմաստը. խրատ պսակադրվողներին
- Մեղքը և առաքինությունն ընտանեկան կյանքում
- Ամուսնությունն ըստ Հայ եկեղեցական իրավունքի

ՀԱՎԵԼՎԱԾ I

Գենդերային հավասարության և գենդերային բռնության հարցերը միջազգային, տարածաշրջանային և Հայաստանի Հանրապետության իրավական փաստաթղթերում

Հավելված II

Աստվածաշնչյան վկայություններ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով... արու և էգ ստեղծեց նրանց» (Ծննդ. Ա 27):

Այս անպաճույճ խոսքերով է Աստվածաշունչը ներկայացնում արարչության մեծագույն հրաշագործությունը՝ անծայրածիր տիեզերքում միակ հայտնի բանական արարածի ստեղծումը:

Խիստ անորոշ և խորհրդաբանական մեկնությունների կարոտ, փիլիսոփաների և աստվածաբանների համար անգամ դժվարըմբռնելի «Աստծո պատկերին» զուգահեռ, մարդը ներկայացվում է ծայրաստիճան որոշակի և ակնհայտ, անգամ մանուկներին հասկանալի «արու և էգ» հատկանշումով: Սրանով հատկական կերպով շեշտվում է մարդու կապվածությունն ինչպես Աստծուն, այնպես էլ կենդանական աշխարհին, որով նա դառնում է կապող օղակ արարչի և արարչության միջև:

Անսեռ և սեռականությունից վեր Աստված «իր պատկերը» կրող մարդուն օժտում է անօտարելի սեռականությամբ և տեսնում, որ այն «բարի է»: Անայլայլելի և անփոփոխելի Աստված մարդու մեջ դնում է արարչության կարողունակությունը. սեռականությամբ նրան վերարտադրվելու, փոխանցվելու և փոփոխվելու, նաև վերանորգվելու և կատարելագործվելու հնարավորություն է ընձեռում: Այդ պատճառով է, որ «տղամարդը թողնելու է իր հորն ու մորը և պետք է իր կնոջը միանա, և երկուսը պետք է մեկ մարմին լինեն» (Ծննդ. Բ 24):

Տարբերության մեջ միություն՝ այս է Տիրոջ արարչադիր իղձը, որ իրականանում է ամուսնական սիրո միությամբ, որտեղ սեռերի տարբերությունը որևէ ստորադասություն կամ գերադասություն չի

ենթադրում, իսկ միությունն էլ չի վերացնում սեռերի զանազանությունը, և նմանությունը չի վերածում նույնության:

Ամուսնական սիրո միությունը սոսկ սեռական ցանկության բավարարություն չէ, այլ աստվածային միեղինության սկզբունքի հաստատում, որի նպատակն է «տղամարդու և կնոջ կատարյալ միությունը՝ ամբողջական և կատարյալ մարդու ստեղծումով» (Վ. Սոլովյով): Այդ իսկ պատճառով տղամարդու և կնոջ միջև ի բնե կա այդ ցանկությունը՝ իր թերիությունը լրացնելու, միավորվելու և ամբողջանալու:

Ուստի միայն տղամրդը կարող է լրացնել կնոջը, իսկ միայն կինը՝ տղամարդուն: Տղամարդը ոչինչ չի կարող տալ տղամարդուն, և կինը՝ կնոջը. նրանք չեն կարող լրացնել միմյանց, քանի որ ոչ թե տարբեր են, այլ՝ նույն: Հետևաբար, ամուսնությունը միայն երկու սեռերի մեջ է հնարավոր. ոչ միայն հնարավոր, այլև անհրաժեշտ, որն իբրև միության փաստացի ապացույց՝ պսակվում է որդեծնության շնորհով, նոր մարդու արարումով:

Սա նշանակում է, որ սեռական կողմնորոշումը նպատակ ունի սեռերի այդ միությունը երաշխավորելու և մարդուն բնական ճանապարհով դեպի այդ միեղինությունը մղելու, ոչ թե կենդանական մակարդակի բնազդային ցանկությունները բավարարելու:

«Խորհուրդն այս մեծ է», ասում է Պողոս առաքյալը (Եփես. Ե 32), որ նշանակում է, թե այն աստվածադիր է և աստվածահաստատ, և ցանկացած թյուր կարծիք և այլընտրանք ամուսնության խորհրդական հասկացության հանդեպ պարզապես ըմբոստություն և ապստամբություն է Աստծո հանդեպ:

«Աստծո միացրածը մարդիկ թող չբաժանեն» (Մատթ. ԺԹ 6): Աստծո միացրածից բացի ցանկացած այլ կարծեցյալ «միություն»

ինքնին արդեն բաժանության և պառակտման պատճառ է դառնալու ոչ միայն փորձողների, այլև իրենց շրջապատողների համար:

Ցանկանանք և մաղթենք ուրեմն, որ սույն գրքույկը կօգնի մեր երիտասարդներին ավելի ճիշտ և ավելի ամբողջական հասկանալու սեռականությամբ իրենց տրված աստվածային օրհնությունն ու քաղցրությունը՝ ներընտանեկան սիրո և խաղաղության պայմաններում:

«Աճեցեք և բազմացեք, լցրեք երկիրը և տիրեցեք դրան» (Ծնն. Ա 28):

Տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյան
Հայ Առաքելական Եկեղեցու Շիրակի Թեմի Առաջնորդ

ՄԱՍ Ա

1. Գենդերային տեսության ներածություն

Ծանոթություն հիմնական հասկացությունների հետ

Յուրաքանչյուր հասարակություն անհնար է պատկերացնել առանց երկու սեռերի՝ կանանց և տղամարդկանց: Հասարակության մեջ կանանց և տղամարդկանց դերի և տեղի վերաբերյալ պատմության ընթացքում տարբեր երկրներում ձևավորվել են տարբեր պատկերացումներ, որոնց հիման վրա էլ զարգացել են զանազան տեսություններ: Այդ բոլոր տեսություններում հասարակության մեջ կանանց ու տղամարդկանց տարբերությունը բացատրվել է նրանց կենսաբանական առանձնահատկություններով, կանայք անտեսվել են կամ նրանց նկատմամբ խտրականություն է դրսևորվել: Այդ ամենը հանգեցնում էր մարդուն միայն տղամարդու հետ նույնացնելու ավանդույթին: Պատահական չէ, որ լեզուների մեծ մասում մարդ և տղամարդ բառերը նույնն են (անգլերեն՝ “man”, ֆրանսերեն՝ “homme”, գերմաներեն՝ “mann”):

Կանանց ու տղամարդկանց սոցիալական տարբերությունները բազմաբնույթ են, և դրանց մեծ մասը պայմանավորված չէ սեռային պատկանելությամբ, կենսաբանությամբ: Շատ հետազոտողներ գտնում եմ, որ սեռերի միակ էական տարբերությունը սերնդի վերարտադրության գործում նրանց դերաբաժանումն է:

Կանանց և տղամարդկանց տարբերությունները մատնանշելու համար հաճախ օգտագործում են երկու հասկացություններ՝ «սեռ» և «գենդեր», որոնք անհատին բնորոշում են տարբեր տեսանկյուններից:

Կենսաբանական սեռ ասելով նկատի ունենք անատոմիական, ֆիզիոլոգիական, բիոքիմիական և գենետիկական բնութագրերի ամբողջությունը, իգական և արական սեռի ներկայացուցիչների օրգանիզմների տարբերակման հիմքը:

Մինչդեռ *«գենդեր»*[1] տերմինը վերաբերվում է կանանց և տղամարդկանց սոցիալական, հոգեբանական և մշակութային բնութագրերին ու առանձնահատկություններին, հասարակության մեջ նրանց զբաղեցրած դիրքին և նրանցից ակնկալվող վարքի նորմերին:

Գենդերը սոցիալ-մշակութային նորմերի համակցություն է, որը հասարակությունը պարտադրում է մարդկանց՝ նրանց սեռին համապատասխան: Գենդերը բացահայտում է կանանց և տղամարդկանց գործունեության ձևերի, վարքի և զգայական բնութագրերի տարբերությունները: Գենդերն ունի տնտեսական, պատմական, կրոնական, սոցիալական,

[1] «Գենդեր» եզրույթը 1968թ. առաջարկել է Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Ստոլլերը: Անգլերեն **“gender”** նշանակում է քերականական սեռ: Հայ իրականություն այս եզրը մուտք գործեց ռուսական գրականության միջոցով: Ռուսերենում **“ջ”** հնչյունի բացակայության պատճառով, «ջենդերը» դարձել է «գենդեր»:

քաղաքական և մշակութային հատկանիշներ: Այդ հատկանիշները քարացած չեն, այլ փոփոխվում են ժամանակի ընթացքում՝ ենթարկվելով մշակութային ազդեցության:

Մարդը ոչ միայն ծնվում է որպես իգական կամ արական սեռի ներկայացուցիչ, այլև իր ամբողջ կյանքի ընթացքում կրում է տվյալ հասարակության ազդեցությունը, «կերտվում» որպես կին կամ տղամարդ: Հետևաբար, կանանց և տղամարդկանց գենդերային տարբերությունները առաջանում են սոցիալական գործունեության ընթացքում, ներառում յուրաքանչյուր հասարակությանը հատուկ սոցիալական և մշակութային նորմերը, որոնք պարտադրվում են կանանց և տղամարդկանց՝ ստիպելով նրանց կատարել որոշակի **գենդերային դերեր**: Կատարել այս կամ այն գենդերային դերը նշանակում է ունենալ տղամարդուն կամ կնոջը համապատասխան արտաքին տեսք, հագնվելու ոճ, շարժուձև, խոսք, ստանձնել հասարակության մեջ այդ գենդերին հատկացված գործառույթ, ունենալ որոշակի սոցիալական կարգավիճակ և այլն:

Գենդերը ներառում է «գենդերային կարծրատիպեր», «գենդերային նորմեր», «գենդերային նույնականություն» հասկացությունները:

Գենդերային կարծրատիպեր /ստերեոտիպեր/

Կարծրատիպ են անվանում մարդկանց և երևույթների մասին կանխակալ կարծիքը, որը բխում է ընդհանրացված դատողություններից և ակնկալիքներից: Կարծրատիպային կարող են լինել վարքագծի, սովորությունների, կենսակերպի մասին պատկերացումները:

Գենդերային կարծրատիպերը մշակույթում ձևավորված համեմատաբար կայուն, ընդհանրացված պատկերացումներն են կանանց ու տղամարդկանց և համապատասխանաբար՝ նրանց վարքի վերաբերյալ:

Գրեթե բոլոր հասարակություններում «տղամարդ» հասկացության հետ կապում են ուժը, իշխանությունը, տոկունությունը, կերակրողի դերը, խրախուսելի սեռական փորձը, անկախությունը, ազատությունը, հարձակվողականությունը, հանդգնությունը, կոպտությունը, կուռ տրամաբանությունը, իսկ «կին» հասկացության հետ՝ թուլությունը, ենթակայությունը, զիջողականությունը, ընտանեսիրությունը, առաքինությունը, հավատարմությունը, նրբազգացողությունը, գեղեցկությունը և այլն: Կան շատ տարածված արտահայտություններ, որոնք գալիս են հաստատելու վերը նշվածը: Ընդ որում, նշմարվում է մի օրինաչափություն. այն, ինչ վերագրվում է տղամարդուն, դրական է գնահատվում, այն, ինչ կնոջը՝

բացասական: Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ ինչպես կինը, այնպես էլ տղամարդը կարող են կուռ տրամաբանություն ունենալ, լուրջ կամ դատարկ խոսակցություններ վարել, լինել բամբասկոտ կամ զուսպ, բայց կարծրատիպային մտածողությունը ծնել է հետևյալ արտահայտությունները՝ «տղամարդկային տրամաբանություն», «տղամարդու խոսք», «կանացի խոսակցություն», «կանացի տրամաբանություն», «կանացի բամբասկոտություն» արտահայտությունները: Դժվար չէ նկատել, որ տղամարդուն վերագրվողը դրական իմաստ է պարունակում, իսկ կանանց վերագրվողը՝ բացասական:

Գենդերային կարծրատիպերը արտահայտվել են նաև ժողովրդական ասացվածքներում՝ տարբեր մոտեցումներ ցուցաբերելով կանանց և տղամարդկանց նկատմամբ: Այսպես, օրինակ՝ «Տղան տան սյունն է, աղջիկը՝ օտարի», կամ «Տղեն տան հուր ա, աղջիկը՝ գնացական ջուր ա», «Աղջիկը որ կա՝ ալնի թիքա է», «Կնգա ծամը հերկեն կըլնի՝ խելքը կարճ, մարդու միտքը հերկեն կըլնի՝ ծեռ (ձեռքը) կառճ»[2]:

Գենդերային կարծրատիպերն ունեն հետևյալ առանձնահատկությունները՝

- դրանք շատ կայուն են, վաղ են յուրացվում և մեծ դժվարությամբ փոփոխվում.
- միևնույն հասարակության տարբեր սոցիալական շերտեր կարող են ունենալ տարբեր կարծրատիպեր՝ պայմանավորված ազգային առանձնահատկություններով, կենսապայմաններով, տարիքով, կրթությամբ.
- կան ընդհանրական գենդերային կարծրատիպեր, որոնք բնորոշ են տարբեր աշխարհագրություն ունեցող գրեթե բոլոր հասարակություններին, ինչպես նաև միևնույն հասարակության մեջ տարբեր սոցիալական խմբերին:

Այս ամենով հանդերձ, գենդերային կարծրատիպերը մեկընդմիշտ տրված չեն, դրանք ձևավորվում և արդյունավետ գործում են որոշակի մշակույթի շրջանակներում՝ նրանցից դուրս երբեմն կորցնելով իրենց իմաստն ու գործառույթները: Կարծրատիպերը կարող են փոփոխվել ժամանակի և տարածության մեջ: Տղամարդիկ և կանայք իրականության փոփոխությանը զուգընթաց փոխում են իրենց պատկերացումները, վարքային մոդելները. ձևավորվում են նոր կարծրատիպեր: Օրինակ՝ հայ հա-

[2] Կ. Բազեյան, Գենդերի էթնոմշակութային առումները //Գենդերային հետազոտություններ, N9, 2002, ՀԿԿԱ, էջ 73-74:

սարակության գենդերային կարծրատիպերն Արտաշեսյանների թագավորության շրջանում և թուրք-պարսկական տիրապետության շրջանում նույնը չեն եղել: Ավելին՝ գենդերային կարծրատիպերը զգալիորեն փոփոխվել են վերջին 20 տարիների ընթացքում: Այն, ինչ առաջ կարող էր անհարիր համարվել կնոջը կամ տղամարդուն, այժմ սովորական երևույթ է դարձել:

Գենդերային նորմեր

Գենդերային կարծրատիպերով են պայմանավորվում գենդերային նորմերը:

Գենդերային նորմերը վարքի որոշակի կանոններ են, որոնք պարտադրվում են մարդուն՝ կախված նրա սեռից:

Դրանք թելադրվում են հասարակության կողմից՝ տվյալ ժամանակաշրջանում «իսկական տղամարդու» և «իսկական կնոջ» վերաբերյալ իշխող պատկերացումներին համապատասխան: Գենդերային նորմերը սերմանվում են մանկուց, իսկ հետագայում ամրապնդվում զանազան սոցիալական ինստիտուտների միջոցով (մանկապարտեզ, դպրոց, բուհ, հասակակիցների խումբ, աշխատանքային կոլեկտիվ և այլն):

Գենդերային նույնականություն

Գենդերային նույնականությունը մարդուն բնութագրում է այս կամ այն սեռին պատկանելու տեսանկյունից և ելնելով այն հանգամանքից, թե ինչպես է իրեն զգում մարդը որպես կին կամ տղամարդ տվյալ հասարակության մեջ:

Գենդերային նույնականության համար նշանակություն ունի անհատի սոցիալականացման փորձը: Երեխան վաղ հասակից է յուրացնում, թե ինչ է նշանակում լինել կին կամ տղամարդ, ինքնորոշվում է որպես կին կամ տղամարդ և փորձում իր վարքը համապատասխանեցնել հասարակության գենդերային կարծրատիպերին ու նորմերին:

Երբեմն այն շփոթում են սեռադերային նույնականության հետ, մինչդեռ «գենդերային նույնականությունն» ավելի լայն հասկացություն է, քանի որ ներառում է նաև **գենդերային դիսփլեյը**:

«Գենդերային դիսփլեյ» եզրն առաջադրել է ամերիկյան սոցիոլոգ, Իրվին Հոֆմանը (1922-1982): **Գենդերային դիսփլեյը** տղամարդկանց և կանանց գործողությունների ու փոխհարաբերության՝ հասարակության կողմից թելադրված նորմերի հետ կապված արտահայտությունների բազ-

մազանությունն է: Մարդու անունը, արտաքին տեսքը, ձայնը, խոսելաձևն ու շարժուձևը, զգացմունքների արտահայտման ոճը ներկայացնում են գենդերային դիսփլեյը, որը թույլ է տալիս նույնականացնել մարդուն կնոջ կամ տղամարդու հետ:

Ինչպես վերը նշեցինք, գենդերը ձևավորվում է սոցիալական պրակտիկայի ընթացքում: Դա ավելի լավ հասկանալու համար անդրադառնանք ևս մեկ հասկացության՝ «գենդերային սոցիալականացմանը»:

Գենդերային սոցիալականացում

Սոցիալականացումն այն բոլոր սոցիալական գործընթացների ամբողջությունն է, որոնց շնորհիվ անձը, յուրացնելով որոշակի նորմերի և արժեքների համակարգ, դառնում է հասարակության լիիրավ անդամ: Սոցիալականացումն անձի ձևավորման գործընթաց է, որը սկիզբ է առնում ծննդյան պահից:

Գենդերային սոցիալականացումը հասարակության գենդերային մշակույթի յուրացումն է անձի կողմից և սեռերի տարբերությունների սոցիալական կառուցումը: Գենդերային սոցիալականացման ընթացքում անձը յուրացնում է տղամարդկային և կանացի վարքի մոդելները, հարաբերությունները, նորմերը, արժեքները և գենդերային կարծրատիպերը:

Առանձնացվում է գենդերային սոցիալականացման երկու փուլ՝



Առաջնային սոցիալականացման փուլ կամ հարմարեցում (ադապտացիա) է համարվում այն փուլը, երբ անհատը հարմարվում է գոյություն ունեցող նորմերին ու դերերին: Այն սկսվում է դեռ մանկությունից, երբ երեխան վարվելակերպի կանոնները յուրացնում է ոչ գիտակցաբար, նույնիսկ հարկադրված: Դա շատ կարևոր փուլ է, քանի որ մանկության շրջանում յուրացրածը խորն է արմատավորվում, դանդաղ է փոփոխվում և կյանքի հետագա փուլերի հիմք է դառնում:

Երկրորդային սոցիալականացում կամ վերասոցիալականացում է կոչվում այն, երբ, հասնելով որոշակի տարիքի, անհատը գործում է գիտակցաբար և քննադատաբար է մոտենում իրեն հրամցված գենդերային կարծրատիպերին: Տեղի է ունենում նախկինում յուրացված նորմերի վերագնահատում և հաճախ՝ նաև փոփոխում:

Սոցիալականացումը տեղի է ունենում **սոցիալականացման ինստիտուտների** միջոցով (ընտանիք, նախադպրոցական հիմնարկներ, ուսումնական հաստատություններ, եկեղեցի, շրջապատ, աշխատանքային կոլեկտիվ, ԶԼՄ և այլն): Սոցիալականացման բոլոր փուլերում հասարակության ներգործությունն անձի վրա տեղի է ունենում կա՛մ անմիջականորեն, կա՛մ հատուկ խմբերի՝ **սոցիալականացման գործակալների** միջոցով (ծնողներ կամ ընտանիքի մյուս անդամներ, հարևաններ, ընկերներ, հոգևորականներ, հասակակիցներ, ուսուցիչներ, դասախոսներ, լրագրողներ և այլն):

Այդ ազդեցությունն իրագործվում է **սոցիալականացման տեխնոլոգիաների** միջոցով (լեզու, կրոն, կրթություն և դաստիարակություն, արվեստ, նորաձևություն, մշակույթ, գովազդ, խաղալիքներ, հեքիաթներ, երգեր, ասացվածքներ ու առածներ, առասպելներ և այլն):

Առաջնային սոցիալականացման փուլում առավել նշանակալի են ընտանիքը, հասակակիցների խմբերը, նախադպրոցական հաստատությունները: Հետագայում՝ վերասոցիալականացման փուլում, երբ նոր մշակութային տարածք է յուրացվում, հաճախ տեղի է ունենում նորմերի և վարքագծի օրինակների վերանայում, գլխավոր դեր են խաղում ուսումնական հաստատությունները, զանգվածային լրատվամիջոցները, կրոնը, ինտերնետը, գովազդը և այլն:

Գենդերային ադապտացիան կարող է լինել կամավոր և ստիպողական: **Կամավոր** ադապտացիան մարդու ներաշխարհին գենդերային նորմերի և արժեքների միահյուսվելու սահուն, անկոնֆլիկտ գործընթաց է: **Ստիպողական** ադապտացիան երևակում է այն բախումը, որն առաջանում է անձի անհատականության և հասարակության կամ սոցիալական խմբի կողմից ընդունված նորմերի և արժեքների միջև: Դրա պատճառները վեր հանելու համար անհրաժեշտ է ծանոթանալ ևս մեկ հասկացության՝ «**գենդերային ռեժիմին»**: Այն հասարակական ինստիտուտների ներսում հաստատված գենդերային կարգն է, որը հիմնվում է աշխատանքի բաժանման, կառավարման հիերարխիայի, սոցիալական կառուցման վրա: Օրինակ՝ բանակի, բանտի, ընտանիքների և այլ սոցիալական ինստիտուտների գենդերային ռեժիմներն ունեն իրենց առանձնահատկությունները և կարող են էապես տարբերվել:

Ինչպես վերը նշվեց, սոցիալականացման հաջորդ, **վերասոցիալականացման** փուլում տեղի է ունենում գենդերային դերերի, նորմերի և արժեքների վերանայում: Հասունացման հետ աճում է անձի ընտրության հնարավորությունը, նա կարողանում է գնահատել իրեն ներկայացվող պահանջները, նույնիսկ շեղվել հասարակության կողմից «հաստատված» չափորոշիչներից, այսինքն՝ ապրել ապասոցիալականացում:

Հայաստանում աղջիկների և տղաների գենդերային սոցիալականացման գործընթացն ունի մի քանի առանձնահատկություններ՝

- Աղջկա սոցիալականացումն երկար ժամանակ կատարվում է ընտանիքում, իսկ տղաները շատ շուտով մղվում են պատանեական խմբեր, ուր և յուրացնում են տղամարդկային վարքի առաջին դասերն ու առնականության կոդեքսը:
- Աղջիկներին սովորաբար ներշնչվում են այնպիսի որակներ, ինչպիսիք են համեստությունը, մեղմությունը, քնքշությունը, ամաչկոտությունը, ողջամտությունը, հավատարմությունը, հոգատարությունը, ուշիմությունը և այլն:

- Տղաներին է վերապահվում հաջողակությունը, ձեռներեցությունը, համարձակությունը, եռանդը, բարձր մրցողունակությունը, իշխանության ձգտումը, կարիերան, փող վաստակելու ունակությունը և այլն:

Գենդերային սոցիալականացման կարևոր ինստիտուտներից է ընտանիքը: Այստեղ է երեխան ստանում միջսեռային փոխազդեցության առաջին փորձը: Ընդ որում, ընտանիքում գենդերային սոցիալականացումը տեղի է ունենում ինչպես նպատակաուղղված դաստիարակության, այնպես էլ սոցիալական ուսուցման մեխանիզմի միջոցով: Սոցիալական ուսուցման մեխանիզմի միջոցով երեխան իր եղբայրների և քույրերի հետ շփման ընթացքում, դիտարկելով ծնողների հարաբերությունները, յուրացնում է հասարակության կողմից իր գենդերային դերին պարտադրվող չափորոշիչները: Այդ չափորոշիչների շնորհիվ է, որ տղաները հակվում են ակտիվության, ինքնուրույնության, մրցակցության և կարիերայի, իսկ աղջիկները՝ զիջողության, պատասխանատվության, կախվածության:

Գենդերային սոցիալականացման համար մեծ նշանակություն ունի ընտանիքի գենդերային ռեժիմը: Ընտանիքի գենդերային ռեժիմի վրա ազդում է ընտանիքի կառուցվածքը՝ ընդլայնված (մեկ ընտանեկան տնտեսության մեջ, բացի ծնողներից և երեխաներից, միավորված են տատիկը, պապիկը և այլ անդամներ) և միջուկային կամ նուկլեար (ծնողներ և երեխաներ), որը կարող է լինել լրիվ և ոչ լրիվ (դե ֆորմացված): Ոչ լրիվ ընտանիքում դե ֆորմացիան կարող է լինել երկու տեսակի՝ զուտ կառուցվածքային և հոգեբանական: Օրինակ՝ եթե ընտանիքում հայրը բացակայում է, դա բացասաբար է անդրադառնում հատկապես տղաների սոցիալականացման վրա: Բայց բացասական հետևանքներից կարելի է խուսափել, եթե մորը հաջողվի ընտանիքում կայուն հոգեբանական մթնոլորտ ապահովել: Ի դեպ, երեխաների վրա բացասաբար է անդրադառնում նաև ընտանիքի անառողջ մթնոլորտը: Եթե ծնողներն անընդհատ կոնֆլիկտներ են ունենում, երեխան հոգեբանական կամ ֆիզիկական բռնության ականատես է, ապա դա խիստ բացասաբար է անդրադառնում և՛ տղաների, և՛ աղջիկների սոցիալականացման վրա:

Տարիքի հետ սոցիալականացման կենտրոնը ընտանիքից տեղափոխվում է հասակակիցների խումբ, և թուլանում է ծնողների հետ զգացմունքային կապը (այդ երևույթն ավելի ընդգծված է արտահայտվում տղա երեխաների դեպքում): Սկսվում է վարքային մի փուլ, որն անվանում են *«էմանսիպացիայի ռեակցիա».* երեխան ամեն առիթով փորձում է հաստա-

տել իր անկախությունը: Տղաները այդ դեպքում, հակվելով հասակակիցների շրջապատին, յուրացնում են վարքի կոշտ կանոններ: Նա, ով չի համապատասխանում այդ չափորոշիչներին, ծաղրուծանակի, երբեմն էլ կոպիտ ճնշման է ենթարկվում շրջապատի կողմից: Ընդ որում, հասարակությունը տղաներին ավելի խիստ պահանջներ է ներկայացնում, քան աղջիկներին: Տղաների «կանացիությունն» ավելի մեծ պարսավանքի է արժանանում, քան աղջիկների «առնականությունը»:

Գենդերային սոցիալականացման կարևոր ինստիտուտներից է կրթական համակարգը՝ իր հաստատություններով: Ընդ որում, գենդերային սոցիալականացման վրա ազդում է ոչ միայն կրթության բովանդակությունը, այլև դասավանդման մեթոդիկան և ուսումնական հաստատության գենդերային կառուցվածքը: Հաճախ հենց այդ ինստիտուտներում է առաջանում գենդերային անհավասարությունը: Դպրոցում դա ավելի շատ կապված է դասագրքերի բովանդակության և ուսուցիչների գենդերային կարծրատիպերի հետ: Այսպես օրինակ՝ «Հայոց պատմության» 5-ից 8-րդ դասարանների դասագրքերում խիստ ընդգծված անհավասարակշռություն կա կին և տղամարդ պատմական դեմքերի ներկայացման հարցում: Գերակշռում են տղամարդիկ կամ տղամարդկային զբաղմունքների խորհրդանիշները: Կանայք, հայտնվելով պատմության ստվերում, դուրս են մնում նաև քաղաքականությունից, և երեխաների գիտակցության մեջ ամրագրվում է այն թյուր պատկերացումը, թե այդ ոլորտում դեր ունեն միայն տղամարդիկ: Սովորողների գիտակցության մեջ ձևավորվում է ակտիվ, նվաճող, պաշտպանող, ստեղծագործող տղամարդու կերպարը: Կանայք օտարվում են ոչ միայն պատմությունից և քաղաքականությունից, այլև մյուս հասարակական ոլորտներից: Կարծիք է ձևավորվում, թե կանայք մշակույթում որևէ ներդրում չունեն և չեն ունեցել:

ՁԼՄ-ներն իրենց լայն լսարանի և դրա վրա ներգործման մեծաթիվ շնորհիվ նաև գենդերային սոցիալականացման գործուն ՁԼՄ-ները կարևոր ազդեցություն կարող են ունենալ գենդերային կարծրատիպերի վրա, առավել ևս, որ լրագրությունը, որպես մշակույթի և զանգվածային գիտակցության արտահայտման միջոց, հնարավոր չէ առանց կարծրատիպային պատկերացումների: Հայտնի է, որ կարծրատիպերը մշակվել են դարերի ընթացքում կրոնի, բանահյուսության, առասպելաբանության և պատմական փորձի ներգործությամբ:

Հասունացման հետ աճում է անձի ընտրության հնարավորությունը, նա կարողանում է վերանայել իրեն ներկայացվող պահանջները, նույ-

2 Ձեռնարկ

նիսկ շեղվել հասարակության կողմից «հաստատված» չափորոշիչներից, այսինքն՝ *ապասոցիալականացում* ապրել: Բայց անգամ հասուն տարիքում շատ դժվար է ձերբազատվել գենդերային կարծրատիպերից և գենդերային նորմերից:

Գենդերային համակարգ

«Գենդեր» եզրույթը հասկանալու համար կարևոր է նաև ծանոթանալ «գենդերային համակարգ» հասկացությանը, որը միջսեռային և ներսեռային հարաբերությունների ամբողջությունն է: Այն ներառում է մասնավոր ու հասարակական ոլորտների գենդերային չափումը, գենդերային աստիճանակարգը (հիերարխիան) հարաբերում է սոցիալական այլ աստիճանակարգերի հետ և ընդգրկում գենդերային տեխնոլոգիաներն իրականացնող սոցիալական ինստիտուտները: Գենդերային համակարգը տարբեր հասարակություններում տարբեր է, բայց մեծ մասում տղամարդկայինը/առնականը (բնավորության գծերը, վարքի մոդելները, «տղամարդկային» մասնագիտությունները և այլն) համարվում է առաջնային, գերիշխող և արժեքավոր, իսկ կանացին/իգականը՝ երկրորդական, ստորադաս և ոչ այնքան արժեքավոր: **Ներկայիս հասարակությունների մեծ մասում գենդերային համակարգը սեռի սկզբունքով սոցիալապես կառուցված անհավասարության համակարգ է:**

Գենդերային խտրականություն

Գենդերային խտրականությունը մի գործելակերպ է, երբ մեկ սեռին տրվում է նախապատվություն մյուս սեռի համեմատությամբ: Այդ նախապատվությունները կարող են ամրագրված լինել օրենքում, և այդ դեպքում խոսքը բացահայտ խտրականության մասին է: Այսօր երկրների մեծ մասում հաստատվել է գենդերային հավասարություն, սակայն խտրական գործելակերպը պահպանվում է: Այդ դեպքում գործ ունենք թաքնված կամ անուղղակի խտրականության հետ:

«Գենդերային խտրականություն» ասելով՝ հասկանում ենք «սեռի հիմքով **ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում**, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում տղամարդկանց և կանանց՝ անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու

իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը»[3]:

Խտրականության վերոհիշյալ սահմանումը բխում է մի շարք հասարակությունների իրական կյանքից: Այսպես, որոշ երկրներում կանանց և տղամարդկանց տարբերակման սկզբունքը կարող է արտահայտվել, օրինակ, հետևյալում՝ որոշ երկրներում կանանց համար բացառված է բարձրագույն կրթություն ստանալը: Մի շարք երկրներում կանանց օրենքով արգելվում է հայտնվել հանրային վայրերում ժամը 18^{00}-ից հետո: Դա արվում է կանանց բռնությունից պաշտպանելու համար, բայց փաստացի սահմանափակում է նրանց իրավունքները[4]:

ՀՀ Սահմանադրությունն արգելում է սեռի սկզբունքով խտրականությունը: Սակայն դե յուրե ամրագրված սահմանադրական իրավունքները չեն բացառում դե ֆակտո խտրական գործելակերպը:

Իրական կյանքում խտրական գործելակերպերի հիմքում ընկած են՝

- գենդերային կարծրատիպերը, հասարակությունում և ընտանիքում դրանց հիման վրա գենդերային դերերի ավանդական բաշխումը, որը պահպանվում, ամրապնդվում և վերարտադրվում է հայրիշխանական հասարակական բոլոր ինստիտուտների կողմից.
- տղամարդկանց և կանանց անհավասար դրությունը տնտեսական ոլորտում.
- որոշումների ընդունման մակարդակի քաղաքական պաշտոնների և պետական իշխանական մարմինների ոչ հավասար մատչելիությունը տղամարդկանց և կանանց համար:

Գոյություն ունեցող խտրականությունը հաճախ չի ընկալվում որպես այդպիսին՝ հասարակությունում կնոջ դերի վերաբերյալ արմատավորված կարծրատիպային պատկերացումների պատճառով: Խտրականությունը չգիտակցելու հիմնախնդիրը նաև հասարակության ցածր իրավական մշակույթի հետևանք է:

Այսպիսով՝ «խտրականություն» հասկացությունը վերաբերում է ոչ միայն կանանց և տղամարդկանց իրավական հավասարությանը, այլև

---

[3] ՄԱԿ-ի «Կոնվենցիա կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին», 1-ին հոդված:

[4] “Наши права не факультативны”, International Women’s Rights Action Watch Asia Pacific, 2008, стр. 5:

նրանց փաստացի դրությանը: Այդ սկզբունքը ամրագրված է ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի «զ» կետում. «Ձեռնարկել բոլոր համապատասխան, ներառյալ՝ օրենսդրական միջոցները՝ փոխելու կամ վերացնելու համար այն գործող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, **սովորույթներն ու պրակտիկան**, որոնք ներկայացնում են խտրականություն կանանց նկատմամբ»:

Ի լրումն՝ կոնվենցիայի 5-րդ և 10-րդ հոդվածներում նշվում է, որ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր համապատասխան միջոցները, որպեսզի փոխեն կանանց ու տղամարդկանց վարքագծի՝ այս կամ այն սեռի ստորադասության կամ առավելության, նախապաշարումների ու սովորույթների վրա հիմնված սոցիալական և մշակութային մոդելները:

Կոնվենցիայի դրույթների համաձայն, «գենդերային հավասարություն» հասկացությունն ավելի լայն է, քան «իրավահավասարությունը»: Դա նշանակում է իրական հավասարության հաստատում, այսինքն՝ կանանց և տղամարդկանց համար հասարակական կյանքի բոլոր ոլորտներում հավասար հնարավորությունների հաստատում՝ հավասար արդյունքներ ապահովելու համար:

Այս կոնվենցիայով ամրագրվեց նաև կանանց և տղամարդկանց կարգավիճակների փաստացի հավասարության հասնելու նպատակով կանանց համար ժամանակավոր հատուկ միջոցների թույլատրելիությունը՝ հաստատելով, որ դրանք չպետք է դիտվեն խտրականություն: Այդ միջոցները պայմանականորեն ընդունված է անվանել «պոզիտիվ խտրականություն»:

Ինչպես վերը նշեցինք, գենդերային խտրականությունը լինում է ուղղակի և անուղղակի: Գենդերային ուղղակի խտրականությունը դրսևորվում է՝

- ընտանիքում (ընտանեկան պարտականությունների անհավասար բաշխման, հղիության ստիպողական ընդհատման, արգելքների և այլնի միջոցով).
- աշխատաշուկայում (միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց տարբեր վարձատրությամբ, աշխատավարձի փոփոխությամբ՝ բարձրացմամբ կամ իջեցմամբ, կամ աշխատանքի պայմանների վատթարացմամբ):

Գենդերային խտրականության ձևերից են գենդերային բռնությունը, սեռական ոտնձգությունը, սեռական հետապնդումը:

Գենդերային անուղղակի խտրականության դրսևորում է՝

- գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը զանգվածային լրատվությամբ, կրթության և մշակույթի միջոցով.
- այնպիսի պայմանների հաստատումը, պահանջների ներկայացումը, որոնք առաջացրել են կամ կարող են առաջացնել բացասական հետևանքներ՝ որոշակի սեռի անձանց վնաս պատճառելով:

Գենդերային խտրականության դրսևորում չի դիտվում՝

- կանանց և տղամարդկանց հարաբերությունների կարգավորման հարցերում տարբերությունների սահմանումը՝ պայմանավորված հղիությամբ և ծննդաբերությամբ, երեխայի խնամքով և կրծքով կերակրելով (Օրինակ, երբ արգելվում է կերակրող մայրերի և հղի կանանց աշխատանքը թունաքիմիկատների տեղափոխման, բեռնման, բեռնաթափման ժամանակ).
- օրենքով սահմանված դեպքերում տղամարդկանց պարտադիր և այլընտրանքային ծառայության անցնելը.
- իրավական կարգավորման ենթակա քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ հարաբերություններում փաստացի հավասարության հաստատմանն ուղղված ժամանակավոր հատուկ միջոցների ձեռնարկումը (Օրինակ, քաղաքական որոշումների կայացման մակարդակում գենդերային անհավասարակշռությունը մեղմելու համար, որպես ժամանակավոր միջոց, գենդերային քվոտայի կիրառումը).
- կանանց և տղամարդկանց աշխատանքի պահպանման առանձնահատկությունները՝ կապված նրանց վերարտադրողական առողջության պահպանման հետ.
- մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջների սահմանումը՝ հիմնված պարտականությունների՝ միայն որոշակի սեռի անձանց կողմից կատարման հնարավորության վրա:

Գենդերային խտրականության պրակտիկան հանգեցնում է կանանց և տղամարդկանց սոցիալական դիրքի և կյանքի հնարավորությունների անհամաչափության: Նման անհամաչափության դրսևորում է կանանց ոչ

բավարար ներկայացվածությունը որոշումների ընդունման տարբեր մակարդակներում:

Գենդերային թաքնված խտրականության հետ անմիջականորեն առնչվում են երկու հասկացություններ՝ «ապակյա առաստաղը», երբ անտեսանելի խոչընդոտները թույլ չեն տալիս կնոջը վեր բարձրանալ, օրինակ՝ իշխանության սանդղակով, և «կպչուն հատակը»՝ խտրականության և գենդերային սոցիալականացման հետևանք հանդիսացող կանանց «ինքնախտրականությունը»:

1. Գենդերային հիմնահարցեր. գլոբալ և տեղային դրսևորումներ

Հասարակության մեջ գենդերային հիմնահարցերը կախված են պատմական փորձից, երկրի աշխարհաքաղաքական դիրքից, տվյալ սոցիալ-քաղաքական և տնտեսական իրավիճակից, որոնց ազդեցությամբ էլ ձևավորվում է գենդերային մշակույթը: **Գենդերային մշակույթը** քաղաքական մշակույթ է, որը ցույց է տալիս, թե որքանով է գենդերային գործոնը ինտեգրված քաղաքական ինստիտուտների բնութագրերի և պետության քաղաքականության մեջ, այսինքն՝ որքանով է գենդերային գործոնն առկա քաղաքականության կառուցվածքային տարրերում՝ ճանաչողական մակարդակում, բարոյա-արժեքային ոլորտում, քաղաքական վարքի տիպերում, ձևերում, ոճում, հասարակական-քաղաքական գործունեության օրինակներում:

Գենդերային մշակույթի համար կարևոր նշանակություն ունի նաև տվյալ հասարակության մեջ կանանց շարժման զարգացման աստիճանը, երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը:

Գենդերային մշակույթի տեսանկյունից կարևորվում է իշխանությունների և մյուս քաղաքական ինստիտուտների վարած քաղաքականությունը, որը լինում է երեք տեսակ՝ խտրական, չեզոք և զգայուն: **Գենդերային խտրական քաղաքականության** դեպքում քաղաքականությունից իսպառ դուրս է մղվում այս կամ այն սեռը: Մինչինդուստրիալ հասարակություններում, որպես կանոն, կանայք քաղաքականությունից օտարված էին. շատ երկրներում կանայք քաղաքականության սուբյեկտ ճանաչվեցին միայն XX դարի սկզբից:

Գենդերային չեզոք քաղաքականության դեպքում սեռերի նկատմամբ որևէ հատուկ մոտեցում չի ցուցաբերվում: Իրավական առումով սեռերի հավասարությունը հաստատվել և ամրագրվել է շատ պետությունն-

ների օրենսդրության մեջ: Գենդերային չեզոք քաղաքականությունը սկսեց գերիշխել XX դարի 20-ական թվականներից, ինչի արդյունքում տարբեր երկրների խորհրդարաններում կանայք կազմեցին պատգամավորների 5-10%-ը: Կանայք ընտրելու և ընտրվելու իրավունք ստացան Նոր Զելանդիայում (1893թ.), Ավստրալիայում (1896թ.), Դանիայում (1915թ.), Ավստրիայում (1918թ.), Գերմանիայում (1919թ.), ԱՄՆ-ում (1920թ.), Մեծ Բրիտանիայում (1928թ.) և այլն: Հայաստանի Հանրապետության առաջին ընտրությունների արդյունքում 1919թ. կանայք խորհրդարանում կազմեցին 4% (80 պատգամավորներից 3-ը):

Որոշակի փուլում սա համարվում էր առաջադեմ և ոչ խտրական, այսինքն՝ հավասարություն ապահովող քաղաքականություն: Սակայն այդ քաղաքականությունն անտեսում է կանանց և տղամարդկանց կենսափորձի և ֆիզիկական, սոցիալական, տնտեսական բնութագրերի տարբերությունը: Բնական է, որ այդ «հավասարության» պարագայում առաջանում են տարբեր արդյունքներ, քանի որ տարբեր են կանանց և տղամարդկանց հնարավորությունները:

Ժողովրդավարության խորացմանը զուգահեռ փոփոխվում էր նաև սոցիալական արդարության և հավասարության ըմբռնումը: Սկանդինավյան երկրներում անցումը չեզոք քաղաքականությունից **գենդերային զգայուն քաղաքականության** սկսվեց 1960-ական թվականներին, կանանց շարժման նոր ալիքի ազդեցությամբ, որը ստիպեց կանանց դիտել որպես քաղաքականության մեջ արժանի դեր ունեցող մասնակիցների: Գենդերային զգայուն քաղաքականությունը պետք է կանանց և տղամարդկանց հավասար հնարավորություններ ապահովեր, որի համար արդյունավետ միջոց դարձան գենդերային քվոտաները (դրանք դիտվում են **պոզիտիվ խտրականություն** և ժամանակավոր միջոց՝ կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ընձեռման համար): Հնարավոր են գենդերային քվոտաների մի քանի տարբերակներ: Օրինակ՝ 50/50 սկզբունքով, երբ կուսակցական համամասնական ընտրացուցակներում կանայք և տղամարդիկ հաջորդում են միմյանց (կին, տղամարդ, կին, տղամարդ ...): Մեկ այլ տարբերակ. օրենսդրությամբ ամրագրվում է, որ որևէ սեռ չպետք է 40%-ից պակաս ներկայացված լինի և այլն:

Տարածված կարծիք կա, որ հավասար իրավունքների դեպքում խտրականությունը բացառված է: Շատ երկրներում, կանանց շարժման բացատրական արշավների շնորհիվ միայն, հասարակությունը սկսեց հասկանալ խտրականության էությունը և ընդունեց դրա հաղթահարման անհրաժեշտությունը: Օրինակ՝ սկանդինավյան երկրներում կուսակցու-

թյուններին խորհուրդ տրվեց տարբեր մակարդակների ընտրությունների ժամանակ ընտրացուցակներում գենդերային հավասարակշռություն ապահովելու համար կիրառել գենդերային քվոտաների համակարգը:

Գենդերային զգայուն քաղաքականությունը եվրոպական մի շարք երկրներում գործուն կերպով կիրառվեց հատկապես XX դարի 80-ական թվականներին, որի շնորհիվ կանայք սկսեցին մեծ դեր խաղալ որոշումների ընդունման մակարդակում: Իսկ 1995 թ., արդեն Պեկինի կանանց դրությանը նվիրված համաժողովում, առաջ քաշվեց **«զուգակշռված ժողովրդավարության»** գաղափարը[5] և առաջադրվեց որոշումների ընդունման մակարդակում գենդերային հավասարակշռության ապահովման չափանիշը: Ընդ որում, բացի քվոտաներից մեծ կարևորություն տրվեց նաև «աջակցող գործողություններին»:

Այս ամենի շնորհիվ սկանդինավյան և հյուսիսեվրոպական մի շարք երկրներում պատկառելի դրական փորձ կուտակվեց: 1990-ական թթ. Շվեդիան, Նորվեգիան, Ֆինլանդիան, Դանիան, Նիդեռլանդները, Կանադան գենդերային զգայուն քաղաքականության արդյունքների տեսանկյունից օրինակելի երկրներ դարձան: Սկանդինավյան երկրներում կանանց ներկայությունը խորհրդարաններում կազմեց 33-43%[i]: Շվեդիայի կառավարության կազմում կանայք կազմեցին 50%, Ֆինլանդիայում, Դանիայում, Նորվեգիայում՝ 1/3-ից ավելին: Այդ երկրներում մշակվեց գենդերային զգայուն քաղաքականության հայեցակարգ, որի համաձայն կանայք և տղամարդիկ պետք է համաչափ ներկայացված լինեն որոշումների ընդունման բոլոր մակարդակներում:

Կանանց փորձն ու գիտելիքները նույնպես պետք է արտահայտված լինեն պետական քաղաքականության մեջ: Ինչո՞ւ է դա անհրաժեշտ: Հենց վերոհիշյալ երկրների փորձի ուսումնասիրությունն է հնարավորություն տալիս պնդելու, որ կանայք, քաղաքական կառույցներում հասնելով **«կրիտիկական զանգվածի»՝** 30%-ի, փոխում են քաղաքականու- թ-

---

[5] Պեկինի խորհրդաժողովի նախօրեին՝ 1994 թ. Վիեննայում կայացած խորհրդակցությունում, որը նվիրված էր Եվրոպայի կանանց դրության քննությանը, Եվրոպայի խորհրդի կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի ղեկավար կոմիտեն և Մարդու իրավունքների բաժանմունքը ներկայացրին իրենց մշակած «զուգակշռված ժողովրդավարության» հայեցակարգը: Այդ ժամանակների հիմնական կարգախոսն էր՝ «Զուգակշռություն, իշխանության կառույցներում կանանց և տղամարդկանց «50/50»-ի ներկայացուցչություն»: Մի շարք երկրներ լրջորեն արձագանքեցին այս առաջարկներին և օրենսդրական ու գործնական վճռական քայլեր ձեռնարկեցին: Ֆրանսիայում, օրինակ, 2000 թվականին ընդունվեց «Կանանց և տղամարդկանց զուգակշռության մասին» օրենքը՝ նպատակաուղղված բոլոր ընտրովի պաշտոններում կանանց և տղամարդկանց զուգակշռված, այսինքն՝ 50/50-ի հարաբերակցությամբ ներկայության ապահովմանը:

[5] Гендерная реконструкция политических систем, Санкт-Петербург, 2004г., стр. 975.

յան ընբռնումը, որոշումների ընդունման մշակույթը, հետևաբար և՝ կյանքի որակը: Սակայն փորձը ցույց է տալիս նաև, որ միայն քվոտաներով հնարավոր չէ լուծել այդ հիմնախնդիրները, անհրաժեշտ են նաև **աջակցող գործողություններ**: *Դրանցից են՝*

1. օրենսդրության վերանայումը գենդերային զգայուն քաղաքականության տեսանկյունից՝ ներառելով դրական միջոցառումներ իրավիճակը փոխելու համար.
2. կուսակցությունների ֆինանսավորման լծակների օգտագործումը.
3. հետևելը, որ նշանակովի պաշտոններում կանայք և տղամարդիկ ներկայացված լինեն հավասարապես.
4. կանանց և տղամարդկանց «տվյալների բանկի» ստեղծումը.
5. գենդերային դասընթացների խրախուսումն ուսուցման բոլոր մակարդակներում.
6. հատուկ իրազեկման միջոցառումների անցկացումը քաղաքականության մեջ՝ կանանց նկատմամբ նպաստավոր հասարակական կարծիքի ձևավորման համար.
7. կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածությունը ՁԼՄ-ների ղեկավար մարմիններում.
8. մոնիտորինգների անցկացումը և այլն:

Շատ երկրներում հաջողությամբ են կիրառվում վերոհիշյալ միջոցառումները: Այսպես՝ Ֆրանսիայում ընտրությունների ժամանակ համամասնական ցուցակներում գենդերային հավասարակշռություն ապահովելու համար կիրառվում է կուսակցությունների ֆ ինանսավորման լծակը: Այն կուսակցությունները, որոնք համամասնական ցուցակներում կանանց և տղամարդկանց համար չեն ապահովում 50/50 հարաբերակցությունը որոշակի գումար են կորցնում (այսինքն՝ ցուցակներում կանանց յուրաքանչյուր 2% պակասի համար համամասնաբար պակաս գումար են ստանում պետությունից): Իսլանդիայում, 1995թ. սկսած, ընտրություններից մեկ ամիս առաջ անցկացվում է «Քվեարկե՛ք կանանց օգտին» քարոզարշավը, Շվեդիայում պաշտոնյաների համար գենդերային սեմինարներ են կազմակերպվում և այլն: Այդ երկրներում գենդերային զգայուն քաղաքականությունը նպաստեց նաև **կանանց քաղաքական մասնակցության** վերելքին: Տվյալ երևույթն ընբռնելու համար հասկանանք նաև այդ հասկացությունը:

Ինչպիսի՞ն է վիճակը այդ առումով Հայաստանում: Հայ կանայք ընտրելու և ընտրվելու իրավունք ստացան շատ եվրոպական երկրներից

շուտ. 1919 թ. Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանում 80 պատգամավորներից երեքը կանայք էին: Խորհրդային շրջանում կանայք մեծ ձեռքբերումներ ունեցան կրթության, գիտության, աշխատանքային ոլորտներում: ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածում նշված է, որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, և խտրականությունը՝ կախված սեռից, արգելվում է: Հայտնի է, որ կանանց և տղամարդկանց մեկնարկային հնարավորությունները տարբեր են, սակայն հավասար հնարավորությունների դրույթը ՀՀ Սահմանադրությունում չի ամրագրվել: Ճիշտ է, ինչպես վերը նշվեց, ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիրը», սակայն այն գենդերային հավասարության հստակ մեխանիզմներ չի նախատեսում:

Այս հիմնախնդիրների լուծումը նախատեսում է ժողովրդավարության զարգացմանը խոչընդոտող գենդերային կարծրատիպերի հաղթահարում: Դա բավականին բարդ հիմնախնդիր է, որի լուծումը տևական գործընթաց է ենթադրում, քանի որ կապված է մշակութային վերափոխումների հետ: Այդ տեսանկյունից խիստ կարևոր է գենդերային լուսավորությունը: **Գենդերային լուսավորությունը** անհրաժեշտ է հետևյալ նպատակների իրականացման համար՝

- հասարակության գենդերային իրավագիտակցության բարձրացման.
- հասարակության գենդերային էգալիտար (հավասարարական) մշակույթի զարգացման.
- ազգային անվտանգության համակարգի ապահովման՝ կանանց պոտենցիալի լիարժեք օգտագործմամբ.
- միջազգային ասպարեզում Հայաստանի մրցակցային հնարավորությունների ուժեղացման.
- սոցիալական քաղաքականության վրա իշխանության ուշադրության հրավիրման.
- քաղաքականության մեջ սոցիալական արդարության սկզբունքի հաշվառման:

3. Գենդերային բռնություն

Գենդերային բռնության երևույթը

Գենդերային բռնությունը բարդ երևույթ է, որը սերտորեն կապված է

հասարակության ձևավորման, մշակութային արժեքների, քաղաքական և տնտեսական անհավասարության հետ: Գենդերային բռնությունը տեղի է ունենում ցանկացած հասարակությունում և ագրեսիայի տարատեսակներից է: Այն ուժի օգտագործում է սեռի հատկանիշով, արտահայտվում է խոսքային վիրավորանքներից և սպառնալիքներից մինչև դրանց կիրառումը:

Գենդերային բռնությունը հին երևույթ է, սակայն մինչև վերջին 20 տարիները տվյալ երևույթի գոյությունը համապարփակ ճանաչում չէր ստացել: Թեև այսօր չկա գենդերային բռնության մեկ համընդհանուր սահմանում, այնուամենայնիվ, այն կարելի է բնութագրել որպես սեռի հատկանիշով պայմանավորված ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական բնույթի բռնության որևէ տեսակի կիրառում: Բռնությունը համարվում է մարդու իրավունքների ոտնահարման ձևերից մեկը: Գենդերային բռնության թիրախ ավելի հաճախ դառնում են կանայք, ինչը կանանց սոցիալական, հոգեբանական և տնտեսական ստորադասության արդյունքն է: Գենդերային բռնությունը խորապես արմատավորված է և արտահայտվում է կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների առկա անհավասարությամբ:

Համաձայն մարդու իրավունքների միջազգային չափանիշների, պետությունները պետք է ամեն ջանք գործադրեն՝ կանխելու հավասարության, կյանքի, ազատության և անվտանգության, խտրականությունից, խոշտանգումից կամ դաժան, անմարդկային ու այլ նսեմացուցիչ վերաբերմունքից զերծ իրավունքների ոտնահարումները: Եթե պետությունները համապատասխան քայլեր չեն ձեռնարկում այսպիսի բռնությունը կանխելու կամ հետաքննելու և դատական հետապնդման ենթարկելու ուղղությամբ, նրանք կարող են համարվել կանանց իրավունքների ոտնահարման մեղսակից և այդ իրավունքները խախտող կողմ: Այդ իսկ պատճառով պետությունները, ինչպես օրինակ՝ Հայաստանը, պետք է ակտիվ քայլեր ձեռնարկեն՝ ստեղծելով քաղաքական օրինագծեր, ծրագրեր, կատարողականներ, բյուջեներ և կիրառման մեխանիզմներ, որպեսզի այս իրավունքներն իրագործվեն, անձինք այս իրավունքների ոտնահարումից պաշտպանված լինեն, իսկ այն մարդիկ, ում իրավունքները ոտնահարվել են, փոխհատուցում ստանան: Շատ կարևոր է, որ իշխանություններից բացի գենդերային բռնության կանխարգելման գործում միաբանություն դրսևորեն քաղաքացիական հասարակության ինստիտուտները: Խոսքը միայն կանանց հասարակական կազմակերպությունների մասին չէ, այլև կուսակցությունների, ՁԼՄ-ների և այլնի:

Այդ առումով մեծ է տպագիր և էլեկտրոնային լրատվության միջոցների դերը գենդերային բռնության կանխարգելման կամ մշակութային վերարտադրության գործում: Այսպես՝ փորձը ցույց է տալիս, որ որքան աճում է սեռական կյանքը գովազդող ամսագրերի, կինոֆիլմերի, տեսասկավառակների թիվը, այնքան բարձրանում է բռնաբարությունների տոկոսը: Ստեղծվում է մի մշակութային մթնոլորտ, որի համատեքստում բռնությունը կանանց նկատմամբ դառնում է սովորական երևույթ: Կնոջ մարմնի, որպես սեռազգացության օբյեկտի անընդհատ գովազդումը, էկրանին ցուցադրվող բռնությունները և ագրեսիան խեղում են հասարակական պատկերացումները, իջեցնում բռնության բացասական ընկալումը: Գրականության մեջ և կինոֆիլմերում առասպելներ են տարածվում կնոջ սեռազգացության վերաբերյալ, պատրանք է ստեղծվում, որ կինը երազում է, որ «իրեն ուժով տիրանան»:

Գենդերային բռնությունը ոչ միայն բացասաբար է ազդում կանանց և աղջիկների կյանքի վրա, այլև տղամարդկանց և տղաների զարգացման խոչընդոտ է դառնում: Տղաների գենդերային սոցիալականացման հետևանքով նրանք հակվում են ագրեսիայի, տիրապետում է արտաքին աշխարհի թշնամական ընկալումը, ինքնագիտակցության մեջ աններդաշնակություն է ներարկվում: .

Դա հասարակական չարիք է: Պատահական չէ, որ շատ երկրներում կանանց բռնության դեմ ակտիվորեն հանդես է գալիս Եկեղեցին:

Կանանց նկատմամբ բռնությունը տղամարդկանց և կանանց միջև ուժերի պատմականորեն ձևավորված անհավասար հարաբերակցության դրսևորում է, որը հանգեցրել է տղամարդկանց՝ կանանց վրա գերիշխմանը և տղամարդկանց կողմից նրանց նկատմամբ խտրականությանը, ինչպես նաև խոչընդոտում է կանանց դրության համակողմանի բարելավմանը: Բռնությունը կանանց նկատմամբ հիմնարար սոցիալական մեխանիզմներից մեկն է, որի միջոցով կանանց ստիպում են ենթակա դիրք գրավել տղամարդկանց նկատմամբ[6]: *Ընդ որում՝*

- ***աշխարհում կանանց սպանությունների 40-70%-ը կատարվում է իրենց իսկ զուգընկերների կողմից.***
- ***աշխարհում յուրաքանչյուր երրորդ կին իր կյանքում ենթարկվել է ծեծի, սեռական հարկադրման կամ այլ կարգի բռնու- թյան.***
- ***1995-2000 թթ. ընթացքում աշխարհում մարդկանց թրաֆիքինգը աճել է 50%-ով, և, միգրացիայի հարցերով զբաղվող միջազգային***

[6] «Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին» ՄԱԿ-ի հռչակագիր:

կազմակերպությունների հաշվարկներով, տարեկան վաճառվում է 4 մլն. մարդ.

- *Ռուսաստանում յուրաքանչյուր տարի 14 հազար կին է մահանում ամուսնու կամ զուգընկերոջ կողմից բռնության ենթարկվելու հետևանքով.*
- *Կանադայում մեծամասշտաբ հետազոտությունը ցույց է տվել, որ 18 տարեկանից բարձր կանանց 25% ենթարկվել է տարբեր տեսակի բռնությունների.*
- *տարբեր հասարակություններում, հատկապես Ասիայում, ընտրողական աբորտների, մանկասպանության հետևանքով զոհվել է 60 մլն. աղջիկ.*
- *վերջին տարիների ընթացքում պատերազմների ժամանակ իրականացված զանգվածային բռնաբարությունները փաստացի ապացուցված են:*

Գենդերային բռնության տեսակները

Գենդերային բռնության տեսակները բազմազան են: Ստորև ներկայացված են առավել հաճախ հանդիպող 5 տեսակները՝

- սեռական բռնություն.
- ֆիզիկական բռնություն.
- էմոցիոնալ և հոգեբանական բռնություն.
- սոցիալ-տնտեսական բռնություն.
- վտանգավոր ծիսակատարություններ:

Սեռական բռնություն տեսակները

Սեռական բռնությունը նույնպես ունի իր տարատեսակները՝ բռնաբարություն (այդ թվում՝ ամուսնական բռնաբարություն), երեխաների սեռական այլասերում, հարկադրական սադոմիա, սեռական շահագործում, հարկադրված մարմնավաճառություն, սեռական ոտնձգություն, պատերազմների ժամանակ սեռական բռնություններ, որպես ճնշման և կտտանքի ձևեր:

Ֆիզիկական բռնության տեսակները նույնպես բազմազան են: Դրանք արտահայտվում են ֆիզիկական հարձակումներով (ծեծել, խոշտանգել, խարանել, սպանել), մարդկանց վաճառքով և ստրկությամբ:

Էմոցիոնալ և հոգեբանական բռնության տեսակները շատ տարածված են, թեպետ հաճախ լուրջ ուշադրության չեն արժանանում: Դրանք արտահայտվում են զանազան տիպի՝ խոսքային և ոչ խոսքային վիրավորանքներով, ստորացումներով, մարդկային արժանապատվության ոտնահարումով, ազատությունից զրկմամբ (ազատ տեղաշաժվելու կամ գործելու իրավունքի սահմանափակումով) և այլն: Դրանց հետևանքները նույնքան վտանգավոր են, որքան ֆիզիկական կամ սեռական բռնության դեպքում:

Սոցիալ - տնտեսական բռնության տեսակներն են կանանց և աղջիկների կրթության խոչընդոտումը, խտրականություն և/կամ հնարավարությունների, ծառայությունների մերժումը, իրավական բնույթի խոչընդոտները և այլն:

Վտանգավոր ծիսակատարությունները դեռևս չեն վերացել շատ հասարակություններում: Դրանց թվին են պատկանում կանացի սեռական օրգանների վնասումը, վաղ կամ հարկադիր ամուսնությունը, երեխաների սպանությունը կամ անտեսումը՝ պայմանավորված սեռով:

Գենդերային բռնությունը գոյություն ունի բոլոր ռասաներում, մշակույթներում, հավատքներում, դասակարգերում և սոցիալական խավերում, գործադրվում է և՛ տղամարդկանց, և՛ կանանց նկատմամբ բոլոր տարիքներում: Ավելի հաճախ բռնության ենթարկվում են կանայք: Կինը կարող է բռնության ենթարկվել կյանքի տարբեր փուլերում՝ մանկության, պատանեկության, վերարտադրողական տարիքում, հասունության, ծերության շրջանում:

Ներընտանեկան բռնություն

Ներընտանեկան բռնությունը կանանց հանդեպ բռնության տեսակներից մեկն է: Ներընտանեկան բռնություն է համարվում ընտանիքի անդամների, այդ թվում՝ սեռական զուգընկերների միմյանց նկատմամբ կիրառվող ֆիզիկական, հոգեբանական, սեռական կամ տնտեսական բռնությունը:

Ներընտանեկան բռնությունը ձեռքբերովի վարքագիծ է (բռնացողը տեսել է դրա դրսևորումները տանը, ընտանիքում, համայնքում, դպրոցում, ընկերական շրջապատում և ընդօրինակում է՝ հաճախ համարելով դրանք ազգային յուրահատկություն): Դա կարող է խորանալ (ոչ թե առաջանալ) հիվանդությունից, ժառանգականությունից, ոգելից խմիչքներից և

թմրանյութերից, ինքնատիրապետման պակասից, տնտեսական խնդիրներից, զայրույթից, սթրեսից, հարաբերության մեջ զոհի վարքագծից կամ այլ խնդիրներից:

Ներընտանեկան բռնությունը երկար ժամանակ դիտարկվում էր որպես երևույթ, որը վերաբերում է անհատի կյանքին և պետության գործառույթների մեջ չէր մտնում: Սակայն դրա մեծ ծավալը, ժողովրդավարության խորացման արդյունքում քաղաքական օրակարգի հարստացումը, կանանց շարժումները շատ երկրներում ստիպեցին ուշադրություն դարձնել դրան: Մի քանի տասնյակ տարիներ առաջ երևույթն արժանացավ նաև համաշխարհային հանրության լուրջ ուշադրության:

Կանանց հանդեպ բռնությունը գենդերային ստորադասության արդյունք է: *Հինգ խնդիրներ են մշտապես կապվում ներընտանեկան բռնության բարձր մակարդակ ունեցող հասարակությունների հետ՝*

- տղամարդու կողմից կնոջը «սեփականաշնորհելու» նորմերը.
- ընտանիքում եկամտի վերահսկումը տղամարդու կողմից.
- տղամարդու առնականության պատկերացումը՝ կապված գերիշխանության/պատվի հետ.
- «կանացիության առասպելը» և դրանից բխող պատկերացումները, որոնք անմիջականորեն կապվում են կանանց ենթակայության կարծրատիպի հետ.
- որոշումների կայացման վերահսկումը տղամադու կողմից:

Ի՞նչ տարածում ունի ներընտանեկան բռնությունը

- Ամբողջ աշխարհում կանանց 16-50%-ն ենթարկվում է բռնության:
- Կանանց 3-20%-ը բռնության է ենթարկվել հղի ժամանակ:

Բռնության պատճառները շատ տարբեր են: Բռնացողին հաճախ ուղղակի առիթ է պետք, օրինակ՝ լավ չի պատրաստել կերակուրը, փնթի է, տնից դուրս է եկել առանց ամուսնուց թույլտվություն վերցնելու, վիճում է ամուսնու հետ, երեխաների խնամքում թերանում է, հրաժարվում է իր ամուսնական պարտականությունը կատարելուց, խանդ և այլն:

Ներընտանեկան բռնության տեսակներն են՝

- ֆիզիկական բռնություն.
- հոգեբանական բռնություն.

- տնտեսական (ֆինանսական) բռնություն.
- սեռական բռնություն:

Ֆիզիկական բռնությունն ընտանիքում ունենում է ամենատարբեր դրսևորումներ՝ ապտակների, հրմշտոցի, հարվածելու միջոցով, տանը կողպելու կամ տնից դուրս հանելու, բժշկական օգնության խնդրանքը մերժելու, սնունդ գնելուց հրաժարվելու ձևերով: Հաճախ այն արտահայտվում է անուղղակի կերպերով: Օրինակ՝ կնոջը ցավ պատճառելու համար բռնացողը նեղացնում է երեխաներին, փչացնում, ջարդում է կահույքը, նեղացնում տան կենդանիներին:

Հաճախ տղամարդիկ ֆիզիկական ուժ են գործադրում կանանց նկատմամբ՝ հիմնականում ելնելով իրենց այն կարծրացած պատկերացումներից, թե այդպիսով ապահովում են իրենց ավանդական գերիշխող դերը ընտանիքում:

Խնդիրը կանանց ենթակայությունն է, իսկ լուծումը՝ պայքարն այդ երևույթի դեմ: Սա հաստատվում է բազմաթիվ հետազոտությունների տվյալներով. բռնության ենթարկված կանանց մեծամասնությունը չի մասնակցում ընտանեկան որոշումների կայացմանը:

Բռնությունը բռնություն է ծնում

Մարդիկ, որոնք բռնության են ենթարկվել կամ ականատես եղել դրան մանկական տարիքում, հաճախ ագրեսիայի հակում են ձեռք բերում: Գիտնականները պարզել են հետևյալ օրինաչափությունը. որքան հաճախ են կանայք կամ տղամարդիկ մանկության տարիներին ենթարկվել կամ ականատես եղել ֆիզիկական բռնության, այնքան բարձր է եղել հետագայում բռնության կիրառման հավանականությունն իրենց ընտանիքում:

Իրավիճակային սթրեսը կարող է անդրադառնալ նաև երեխաների հետ հարաբերությունների վրա: Երեխաների հանդեպ ֆիզիկական ուժ կիրառածների 68%-ը խոստովանել է, որ ծեծել է իր երեխաներին՝ լինելով սթրեսային վիճակում՝ կապված աշխատանքի կորստի, ֆինանսական դժվարությունների, հիվանդության կամ անձնական խնդիրների հետ:

Հոգեբանական բռնությունը տարածված երևույթ է: Դժբախտաբար, կնոջը վիրավորելը, հայհոյելը, ընտանիքից և ընկերներից մեկուսացնելը, հրապարակավ նվաստացնելը, որոշում կայացնելուց զրկելը շատ ընտանիքներում սովորական երևույթ է: Հոգեբանական բռնության

հիմնական նախադրյալներից մեկը ծանր իրավիճակն է: Մարդիկ, որոնք այս կամ այն պատճառով իրենց դժբախտ են համարում, կարող են դյուրագրգիռ լինել և հակված՝ ագրեսիայի: Մեծ մասամբ կնոջ և երեխաների նկատմամբ բռնության իրավիճակներն սկսվում են տղամարդու հոգեկան բռնկումներից:

Հոգեբանական բռնության պատճառ կարող են հանդիսանալ, ասենք՝ նյութական խնդիրները, խնդիրները աշխատավայրում (ներառյալ՝ հանձնարարված աշխատանքը ժամանակին չավարտելը), սիրելի անձնավորության մահը, հարազատ և կարևոր մարդկանց թշնամանքը, նոր ծառայողական պարտականություններին անցնելու հետ կապված սպասելիքները կամ լարվածությունը, նոր բնակավայր տեղափոխվելը և այլն:

Սոցիալ-հոգեբանական բռնությունը նույնպես ծանր հետևանքներ է ունենում:

- **Զգացական և հոգեբանական հետևանքներ՝** հետ- տրավմատիկ սթրես, ընկճախտ (դեպրեսիա), անհանգստություն, վախ, զայրույթ, չարություն, ամոթ, անվտանգության զգացողության բացակայություն, արհամարհանք սեփական անձի հանդեպ, ինքնամեղադրանք, ինքնասպանության մտքեր և փորձ:
- **Սոցիալական հետևանքներ՝** բռնության զոհի մեղադրանք, հասարակությունում դերի կորուստ (օրինակ՝ եկամտի ստացում, երեխայի դաստիարակություն), մեղադրանք հասարակության կողմից, օտարում և մեկուսացում հասարակության կողմից, գենդերային անհավասարության աճ:

Հասարակությունների մեծ մասը հակված է մեղադրելու բռնության [illegible] ոցիալական օտարումը հիմք է ծառայում հետագայում [illegible] ասների համար, ներառյալ՝ ամոթը, արհամարհանքը սեփական անձի հանդեպ և ընկճախտը:

3 Ձեռնարկ

Հասարակության կողմից մեղադրվելու վախի հետևանքով բռնության զոհերի մեծ մասը կատարվածի մասին չի տեղեկացնում, և, փաստորեն, սեռական և գենդերային բռնության դեպքերի մեծ մասը մնում է չբացահայտված:

Տարածված է նաև ընտանեկան բռնության տնտեսական (ֆինանսական բռնություն) տեսակը, երբ կնոջը զրկում են սեփական փողից, առանց նրա կայացնում բոլոր ֆինանսական որոշումները,

կառավարում հարաբերությունները փողի միջոցով, մերժում գումար հատկացնելու խնդրանքը:

Սեռական բռնության դեպքում զոհը ընկալվում է միայն որպես սեռական ակտի օբյեկտ, նրան սեռական հարաբերություն է հարկադրվում, ինչպես նաև սադիստական սեռական հարաբերություն, նա ենթարկվում է բռնաբարություն: Աշխարհում ամեն երրորդ կին, որը տուժել է ներընտանեկան բռնությունից, նշում է այդ թվում նաև հարկադիր սեռական հարաբերությունը: Ամերիկյան վերլուծաբանները նշում են ընտանիքում կատարվող սեռական բռնության երկու ձև՝ կնոջ նկատմամբ և երեխայի նկատմամբ:

Աշխարհի շատ մասերում ամուսնությունը համարվում է կանանցից օգտվելու սեռական անսահման հնարավորությունների տրամադրում տղամարդկանց. մի իրավունք, որն անհրաժեշտության դեպքում կիրառվում է ուժի միջոցով:

Չափահաս զոհին հսկելու համար երեխաների օգտագործումը՝

- ֆիզիկական և սեռական բռնություն երեխաների հանդեպ.
- երեխաներին պատանդ վերցնելը.
- խնամակալության համար վեճերը:

Սեռական և գենդերային բռնության զոհերը կարող են ունենալ առողջության լուրջ խնդիրներ, երբեմն նաև կյանքի, սոցիալ-հոգեբանական խնդիրներ, եթե անգամ ֆիզիկական ուժ չի գործադրվել: Դրանք երբեմն կարող են ունենալ նաև մահվան ելք:

Սեռական ոտնձգություններն աշխատավայրում

«... Սեռական ոտնձգություն է կոչվում սեռական բնույթի յուրաքանչյուր կրկնվող անցանկալի արտահայտություն կամ ֆիզիկական արարք, աներկմիտ նվաստացուցիչ հայտարարություն կամ սեռական բնույթի խտրական դիտողություն... Սեռական ոտնձգությունը ներառում է ֆիզիկական հարաբերության հարկադրում, անցանկալի հպումներ կամ թեթև հարվածներ, անվայելուչ և անցանկալի դիտողություններ, կատակներ ու մեկնաբանություններ արտաքինի վերաբերյալ, միտումնավոր բե-

ռանացի վիրավորանք, ... սեռական հակվածության /բարեհաճության/ և շփման պահանջ, ֆիզիկական վիրավորանք»[7]*:*

Հայաստանում կանայք աշխատանքի վայրում հաճախ ենթարկվում են սեռական ոտնձգության: «Սոցիոմետր» հետազոտական կենտրոնի կողմից 2004 թ. դեկտեմբերին անցկացված հարցումը ցույց տվեց, որ Երևանում, Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերում հարցվածների մոտ 64%-ն ենթարկվել է սեռական ոտնձգության աշխատանքի վայրում: Հարցման արդյունքում պարզվեց նաև, որ 5 կանանցից մեկը սեռական ոտնձգության պատճառով ստիպված է եղել աշխատանքից հեռանալ, իսկ 35%-ը ստիպված է եղել ղեկավար պաշտոն ունեցող տղամարդու հետ անցանկալի հարաբերություն ունենալ, որպեսզի պահպանի իր աշխատանքը: Չնայած դրան, երևույթը հայ հասարակության կողմից ոչ միայն լուրջ ուշադրության չի արժանանում, այլև որպես նյութ է ծառայում զանազան ոչ պատշաճ կատակների և անեկդոտների համար:

Գենդերային բռնությունը խոչընդոտում է կայուն զարգացմանն ուղղված նույնիսկ ամենավճռական քայլերը և արգելակում ժողովրդավարական արժեքներ որդեգրած առողջ և բարգավաճող հասարակության առաջընթացը՝ մարդու իրավունքների, այդ թվում՝ կանանց իրավունքների հարգման և պաշտպանության ուղիով:

Բռնության զոհ են դառնում նաև երեխաները: Բռնությունը խորապես ազդում է երեխաների վրա, անգամ եթե նրանք լռում են այդ մասին: Երեխան, որը բռնության է ենթարկվել կամ ականատես է եղել բռնության, կարող է դառնալ ինքնամփոփ, անհանգիստ կամ ճնշված:

Ընտանեկան բռնության տեսարանները, երբ ծնողները ծեծում են միմյանց, նույնպես համարվում է բռնություն երեխայի նկատմամբ, քանզի այդպիսի տեսարանները ծանր են անդրադառնում երեխաների հոգեկան աշխարհի վրա: Ապացուցված է, որ այդպիսի երեխաներից շատերը հետագայում ունենում են լուրջ հոգեբանական խնդիրներ՝ դեպրեսիա, հարբեցողություն, թմրամոլություն և այլն:

Բացի այդ, երեխան կարող է ագրեսիվություն ձեռք բերել և այն արտահայտել ինչպես իր հասակակիցների, այնպես էլ ընտանիքի մյուս անդամների հանդեպ: Տանը կատարված բռնությանն ականատես դարձած երեխաների գիտակցության մեջ այդ դեպքերը խորապես տպավորվում են՝ դառնալով ազդեցիկ, երկարատև հիշողություն: Մանկան պատկերա-

[7] «Սեռական ոտնձգություն» եզրը բերված է Sexual Harassment at Work: A Trade Union Guide, International Confederation of Free Trade Unions (ICFTU) փաստաթղթերից:

ցումը կարող է ձևափոխել այն: Այն կարող է այլ կերպ հասկացվել, դառնալ գենդերային նորմ՝ «սա այն է, ինչ հայրերը անում են մայրերի նկատմամբ», «տղամարդիկ կարող են ծեծել կնոջը»: Այսպիսով՝ շատ հաճախ երեխաների երևակայության մեջ բռնությունն ու սերը նույնացվում են:

Հայ Եկեղեցու ավանդն ի նպաստ ներընտանեկան սիրո և խաղաղության

ա. Տղամարդ և կին. սեռային տարբերություն և քրիստոնեական բարոյականություն

Խոսել սեռային տարբերության մասին քրիստոնեական բարոյականության շրջանակներում նշանակում է նախ և առաջ տեսնել, թե ինչ է ուսուցանում այդ մասին քրիստոնեական բարոյականության կենդանի օրինակը՝ Հիսուս Քրիստոս: Դժվար թե որևէ մեկը կարողանա ժխտել, որ Հի-

սուս Քրիստոսի համար, ինչպես վկայում է Նոր Կտակարանը, էական տարբերություն է եղել կնոջ և տղամարդու միջև: Այն բազմաթիվ նորկտակարանյան հատվածները, որտեղ առաքյալների կողքին հավասարապես հանդես են գալիս նաև կանայք (հմմտ. Մտթ. ԻԷ 55, Մրկ. ԺԵ 40-41, Ղուկ. ԻԴ 10) վառ ապացույց են, որ Քրիստոս իր ժամանակվա հրեական քարացած բարոյականության մեջ մտցրեց մի էական փոփոխություն՝ կնոջ իրավահավասարությունը տղամարդու կողքին: Արդեն իսկ Նրա մարդեղացումն առաջին կնոջ՝ Եվայի մեղքի վերացումն էր իգական սեռի վրայից և, Աստվածածնի օրինակով, կնոջ դերի՝ իբրև Աստծո խոսքին հավատարիմ սպասավոր և քարոզիչ, ամրագրումը:

Քրիստոսի կողմից երկրի վրա Աստծո թագավորության հռչակման կարևոր հատկանիշներից մեկն էլ կնոջ գենդերային հավասարությունն էր այդ արքայության մեջ[8]: Կնոջ դերի բարձրացումը հիմնականում Քրիստոսի կողմից ամուսնության անլուծանելիության հռչակման մեջ էր (հմմտ. Մտթ. Ե 31-32, ԺԹ 3-12, Մարկ. Ժ 2-12, Ղուկ. ԺՁ 18, Ա Կորնթ. ԺԷ 10-16): Հրեական օրենքի համաձայն միայն տղամարդը կարող էր ամուսնալուծվել և չեղյալ հայտարարել ամուսնությունը. կնոջ համար դա ուղղակի անընդունելի էր և հակառակ օրենքին (հմմտ. Երկր. Օր. ԻԴ 1): Արձակված կինն այդ թղթով կարող էր գնալ մեկ ուրիշ տղամարդու մոտ (Երեմ. Գ 8, Ես. Ծ 1), իսկ եթե վերջինս մեռներ, այդ կինը չէր կարող վերստին առաջին ամուսնու մոտ գնալ՝ իբրև պղծված: Թեպետև, հրեական օրենքի այս մեկնաբանության համաձայն, կնոջից բաժանվելը դառնում էր մի կամայական երևույթ՝ բոլորովին ենթակա ամուսնու կամքին, սակայն մյուս կողմից Աստվածաշնչում հայտնվում էր, որ Աստված այդքան էլ չի սիրում ամուսնության նկատմամբ այդ վերաբերմունքը.

«Տէր ե՛դ ուխտ ի մէջ քո, եւ ի մէջ կնոջ մանկութեան քոյ՝ զոր թողերն. եւ նա էր ամուսին եւ կին ուխտի քոյ: 15 Եւ ո՛չ այլ ոք արար. եւ հատո՛ր ոգւոյ նորա է: Եւ ասացէք՝ թէ զի՞նչ այլ ինչ խնդրէ Աստուած՝ եթէ ո՛չ զաւակ: Զգուշացարո՛ւք յոգիս ձեր, եւ զկին մանկութեան քոյ մի թողուր. 16 բայց եթէ առ ատել արձակեսցես՝ ասէ Տէր Աստուած Իսրայէլի: Ծածկեսցէ ամպարշտութիւն զխորհուրդս քո, ասէ Տէր ամենակալ. զգո՛յշ լերուք յոգիս ձեր, եւ մի՛ թողուցուք» (Մաղ. Բ 14-16):

Մարգարեի կողմից հավատարմության այս կոչը հստակեցնում է ոչ միայն կին-տղամարդ փոխհարաբերությունը, այլ նաև այն դրվում է Աստված-Իսրայել հարաբերության մեջ՝ իբրև հավատացյալ ժողովրդի

[8] **J. Jeremias**, Théologie du Nouveau Testament : la prédication de Jesus, traduit de l°allemand par J. Alzin et A. Liefooghe, Cerf, Paris 1996, p. 280.

սիրո և հավատարմության արտահայտություն առ Աստված: Այս մասին Ներսես Լամբրոնացին գրում է.

«Եւ ո՞ր էր այսմ զգուշութիւն. ո՛չ հայել ի գեղ կանանց հեթանոսաց, զի եթէ ի նոսա զգուշանային եւ ո՛չ հայէին՝ ո՛չ ատէին զնոսա եւ ո՛չ թողուին, վասն որոյ ասէ թէ՝ ատես զկին քոյ եւ թողուս: Յայտ է թէ՝ ծածկեաց ամպարշտութիւն զխորհուրդս քո, եւ տռփացար ի գեղ օտար. եւ այն ետ զսա ատել եւ թողուլ. արդ՝ զգոյշ լեր յոգի քո, եւ մի յորժամ ատես՝ թողուր, այլ երկայնամտեա եւ դարձեալ փարատեա ի քէն զմրրիկ ամպարիշտ ցանկութեան՝ որ ծածկեաց զմիտս քո, եւ դառնաս ի սէր կնոջ քոյ»[9]:

Ամուսնությունը լուծանելու Քրիստոսի արգելքը հիմնվում է Ծննդոց Ա գլխում եղած հայտնության վրա, թե Աստված կնոջն ու տղամարդուն ի սկզբանէ անբաժան ստեղծեց.

«Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն, փորձէին զնա՝ եւ ասէին. Եթէ արժա՞ն իցէ ումեք արձակել զկի՛ն իւր, ըստ ամենայն վնասու: 4 * Պատասխանի՛ ետ նոցա եւ ասէ. Չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ հաստատեացն իսկզբանէ՝ արո՛ւ եւ է՛գ արար զնոսա՝ եւ ասէ: 5 * Վասն այսորիկ թողցէ այր՝ զհա՛յր եւ զմա՛յր՝ եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքեան ի մարմին մի: 6 * Ապա ուրեմն ո՛չ են երկու՝ այլ մի՛ մարմին: Արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ՝ մի՛ մեկնեսցէ: 7 * Ասեն ցնա. Իսկ Մովսէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ տա՛լ թուղթ մեկնելոյ՝ եւ արձակել: 8 * Ասէ ցնոսա. Մովսէս՝ վասն խստասրտութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր. այլ իսկզբանէ՝ ո՛չ եղեւ այնպէս: 9 * Բայց ասե՛մ ձեզ, զի ամենայն որ արձակէ զկին իւր՝ եւ ո՛չ վասն պոռնկութեան, եւ առնիցէ այլ՝ շնա՛յ, եւ որ զարձակեա՛լն առնէ՝ շնայ: 10 * Ասե՛ն ցնա աշակերտքն իւր. Եթէ ա՛յդպէս ինչ վնաս իցէ ընդ ա՛յր եւ ընդ կին, լաւ է՝ չամուսնանա՛լ: 11 * Եւ նա՝ ասէ ցնոսա. Ո՛չ ամենեքեան բաւական են ա՛յդմ բանի, այլ որոց տուեա՛լ է: 12 * Զի են ներքինիք՝ որ յորովայնէ՛ մաւր իւրեանց ծնան ա՛յնպէս: Եւ են ներքինիք՝ որ ի մարդկանէ՛ եղեն ներքինիք: Եւ են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկնից: Որ կարաւղն է տանել՝ տարցի՛» (Մտթ. ԺԹ 3-12):

Այս առումով հետաքրքիր է հատկապես Ծննդոց գրքի մեջ առկա արարչագործության երկու դրվագների դիտարկումը, որտեղ Աստվածաշունչն առաջին անգամ խոսում կամ ակնարկում է սեռային տարբերության մասին:

---

[9] Տե՛ս «Երանելւոյն Ներսիսի Լամբրոնացւոյ Մեկնութիւն Սրբոց Երկոտասան Մարգարէից», աշխատասիրութեամբ Տ. Անդրէաս վարդապետի Նարինեան Ակնեցւոյ, Կոստանդնուպոլիս 1826, էջ 235:

Հատկանշական է, որ Աստծո կողմից ստեղծված ամեն ինչ արարվեց սեռային տարբերությամբ, այսինքն՝ արու և էգ: Այլ կերպ ասած, արարչության հիմքում Աստված, իբրեւ արարչագործական մղիչ ուժ, դրեց սեռային տարբերությունը (heterosexuality): Այս տարբերությունը հատկանշվում է արարչության բոլոր վեց օրերի համար էլ՝ Ա օր՝ լույս և խավար, Բ օր՝ երկինք և երկիր, Գ օր՝ ծով և ցամաք, Դ օր՝ գիշեր և ցերեկ, Ե օր՝ տարբեր սեռերի կենդանիներ և թռչուններ, Զ օր՝ մարդն Աստծո կերպարով՝ կին և տղամարդ[10]:

Ծննդոց գրքի այս հատկանշական դրվագը բավական հստակորեն խոսում է մարդու սեռային տարբերության մասին («արու և էգ ստեղծեց նրանց»)՝ ավելացնելով, սակայն, որ Աստված մարդուն, այնուամենայնիվ, իր պատկերի համաձայն ստեղծեց: Արարչության շարունակականությունն ապահովողն այսպիսով երկու սեռերի՝ միմյանց փոխլրացնելն ու դրանով բազմանալն է. լույսն ու խավարը, միմյանց լրացնելով, ստեղծում են մեզ շրջապատող տիեզերքը, երկինքն ու երկիրը, ծովն ու ցամաքը՝ Հողագունդը, գիշերն ու ցերեկը՝ օրը, արական և իգական սեռի բույսերը, թռչուններն ու կենդանիները՝ բուսական և կենդանական աշխարհը: Մարդու պարագային, ըստ աստվածադիր հրամանի, սեռային տարբերությունը հնարավորություն էր Աստծուն նմանվելու[11]:

Նախքան մարդու արարումն Աստված խորհրդածեց և ապա ստեղծեց մարդուն, այսինքն՝ մարդը միակն էր Աստծո արարածներից, ում համար Աստված արարչության խորհուրդ, նպատակ ուներ (հմմտ. Ծնն. Ա 26): Ուստիև մարդն ստեղծվեց ըստ Աստծո պատկերի և նմանության, ըստ խորհրդածելու, մտածելու և ապա ստեղծելու կարողության: Աստվածաշնչի խոսքերը, թե Աստված ըստ իր պատկերի, արու և էգ ստեղծեց նրանց, հուշում են մեզ, որ երկու տարբեր սեռերի՝ կնոջ և տղամարդու համատեղ կյանքից պիտի շարունակվի Աստծո արարչագործության պսակը՝ մարդկային ցեղի գոյությունը: Սակայն գանք այժմ այն հարցին, թե ինչպե՞ս կարող են կին և տղամարդ ստեղծվել ըստ Աստծո պատկերի: Արդյոք սեռային տարբերությունը ենթադրու՞մ է որևիցե հակասություն Աստծուն իբրև արական կամ իգական գոյություն ընկալելու մտքով: Այս առումով թերևս ավելի ճիշտ կլինի նկատել, որ արարչագործության մեջ առկա սեռականությունը կամ սեռային ձևը փոխաբերական կամ փոխաբերույթի (metaphor) իմաստով խոսում են Աստծո սեռականության մասին,

---

[10] Տե՛ս **Harold J. Ellens**, Sex in the Bible : A New Consideraion, London 2006, էջ 15-21:

[11] **Karl Peschke**, Christian Ethics : Moral Theology in the Light of Vatican II, Bangalore 2001, vol. II, էջ 391:

որը, սակայն, փոխաբերության ձևով ուղղակիորեն աղերսվելով Աստծուն, սրբագործում է սեռային տարբերությունը: Ինչպե՞ս:

Հարկ է ամենից առաջ նշել, որ Աստվածաշնչի բազմաթիվ հատվածներ Աստծուն նկարագրելու համար օգտագործում են ոչ միայն արական սեռին բնորոշ փոխաբերություններ, այլ նաև իգական սեռին առնչվող փոխաբերական արտահայտություններ: Օրինակ՝ Ես. ԿԱ 11-13-ում մարգարեն Աստծո և իսրայելացիների հարաբերությունը լուսաբանում է մոր և մանկան գգվանքով. «Ինչպես որ մայրն է գգվում իր մանկանը, այնպես էլ ես պիտի գգուեմ ձեզ, եւ դուք պիտի մխիթարվեք Երուսաղեմում»: Հիսուս, Երուսաղեմի անօրեն ընթացքի վրա արտասվելով, գրեթե նույն պատկերն է մեջբերում. «Երուսաղե՜մ, Երուսաղե՜մ, որ կոտորում էիր մարգարեներին և քարկոծում էիր քեզ մոտ ուղարկվածներին. քանի՜ անգամ կամեցա հավաքել քո մանուկներին, ինչպես հավն է հավաքում իր ձագերին թևերի տակ, բայց չկամեցաք» (Մտթ. ԻԳ 37): Սակայն վերոբերյալ սուրբգրային պատումները, ինչպես արդեն նշեցինք, իմաստավորվում են միայն փոխաբերական առումով: Աստծո և մարդու հարաբերությունը հոր և որդու, մոր և մանկան սիրո ոսպնյակով դիտարկելը սրբագործում է սեռային տարբերությունը: Ծննդ. Ա 27-28 համարներում հեղինակի միտքը կարծես լուսաբանվում է փոխլրացման սկզբունքով. «Եւ Աստված մարդուն ստեղծեց ա. իր պատկերով, բ. Աստծու պատկերով ստեղծեց նրան, գ. արու և էգ ստեղծեց նրանց: Աստված օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը, տիրեցե՛ք դրան, իշխեցե՛ք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»: 27-րդ համարում հատկանշական է երկու բան: Նախ, Աստծո պատկերից աստիճանաբար հեղինակն անցում է կատարում դեպի սեռի տարբերությամբ ստեղծված մարդիկ՝ կին և տղամարդ, այնուհետև մարդու եզակի անվանումից դեպի հոգնակին՝ «արու և էգ ստեղծեց նրանց»: 28-րդ համարում արդեն Աստված միայն հոգնակիով է, որ դիմում է մարդկանց, առաջին զույգին, որի անարատ սիրո արդյունքում պիտի թագավորի մարդկային ցեղը երկրի վրա: Հաջորդ պատումը, որ ներկայացնում է մարդու արարումը՝ Ծննդ. Բ 7, 18-25, պարզում է կնոջ ստեղծման պատճառը. «Լավ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանությամբ մի օգնական ստեղծենք նրա համար»: Նմանությամբ, այսինքն՝ բանականությամբ և մտքով օժտված մի էակ, որի հետ մարդը կկարողանա իրագործել Աստծո ծրագիրը՝ ողջ արարչության իմաստուն իշխանը դառնալ: Այս համարի շարունակությունը հատկանշական է սեռի բնույթը հասկանալու իմաստով: Քրիստոնեական մարդաբանության փաստացի

հիմնադրի՝ Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն»[12] երկից սկսած քրիստոնեական աստվածաբանության մեջ տարածում գտած կարծիքներից մեկն է եղել այն, որ սեռային տարբերությամբ մարդը՝ իբրև Աստծո կողմից ստեղծված մի կատարյալ բնություն, ավելի շուտ կապվել է կենդանական աշխարհի հետ՝ դառնալով այսպիսով մի տեսակ միջնորդ Աստծո և նրա արարչության միջև : Ավելին, սեռային այս տարբերությունը եկեղեցական նշանավոր հայրը դիտարկել է նորպլատոնիզմի և քրիստոնեական խորհրդապաշտության դիրքերից՝ որակելով այն իբրև մեղքի բնական արդյունք: Սակայն Ծննդոցի սրբազան հեղինակը կարծես կամենում է շեշտել մարդու և կնոջ առանձնահատուկ հարաբերությունը՝ իբրև մեկ մարմնից, կատարյալ բնությունից առաջացած անձնավորություններ: Եբրայեցերենում առկա բառախաղը, որ տեսանելի չէ գրաբարում, ավելի հստակեցնում է պատումի միտք բանին. «Թող սա կոչվի կին (*իշա*), որովհետև իր ամուսնուց (մը*իշ*) ստեղծվեց» (Ծնն. Բ 23): Այսինքն՝ նույնիսկ լեզվական առումով այս երկու՝ կատարյալ բնությունից ստեղծված անձնավորություններն անբաժանելի են (հմմտ. *իշ*-տղամարդ եւ *իշա*-կին): Սեռային տարբերությունն ակնհայտ և մեղսալից է դառնում, երբ անկումից և մեղքից հետո Ադամն ու Եվան ամաչում են իրենց մերկությունից, խորհրդաբանորեն արտահայտվելով՝ ստիպված են լինում ծածկելու այն, ինչը կարող էր մեղքի և գայթակղության առիթ դառնալ մյուսների համար: Այսպիսով՝ երկու տարբեր սեռերի փոխհարաբերությունը փոխլրացնող նշանակություն ունի: Հենց այս առումով է, որ մարդ Աստծո գործի՝ արարչության շարունակողն է երկրի վրա: Նույնիսկ մեղքից և անկումից հետո Ադամն իր կնոջ անունը «դրեց Կյանք, որովհետև նա է բոլոր մարդկանց նախամայրը» (Ծնն. Գ 20):

Հինկտակարանյան հետագա դրվագներում ամուսնությունն ու որդեծնությունը համարվում են Աստծո պարգևած բարիքն ու օրհնությունը (Սղմ. ճԻԶ 3-4, ճԻԷ 3-6), և հակառակը՝ ամլությունը դիտվում է իբրև մեղքի պատճառով Աստծո կողմից տրված պատիժ ու նախատինք (Ղեւտ. Ի 20, Ա Թագ. Ա 1-20, Ես. ԽԷ 9): Հին Կտակարանի Իմաստության գրքերում կնոջ և տղամարդու հարաբերությունը նորովի է բացահայտվում ընթերցողի առաջ՝ չնայած կնոջ թերարժեքության մասին Հնգամատյանում առկա ծիսական և իրավաբանական սահմանումներին: Առակաց գրքում տղամարդու՝ հոր կողքին իբրև դաստիարակող և իմաստություն ջամբող ներ-

[12] Երկի հայերեն թարգմանության քննական հրատարակությունը՝ **Ս. Գրիգոր Նիւսացի**, Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն (Յաղագս կազմութեան մարդոյ), քնն. բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ստելլա Վարդանյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, էջ 121-125:

կա է նաև կնոջ՝ մոր կերպարը. «Որդյա՛կ, պահի՛ր հորդ օրենքը և մի՛ մերժիր մորդ խրատը» (Առ. Զ 20): Սողոմոնի առակների մեջ իմաստությունը հասանելի է նաև կանանց (Առ. ԺԴ 1). կինն ու տղամարդն իրենց իմաստուն միությամբ աշխարհ են բերում զավակների, որոնց ճիշտ ապրված կյանքն ուրախություն է նրանց համար (հմմտ. Առ. ԻԳ 25): Վերջապես մարդկային երկու սեռերի անբիծ և անարատ սիրո ամենաբնական արտահայտությունն ու քնարերգությունն է Երգ երգոցը: Այստեղ վառ ու բնական գույներով է, որ պատկերվում է աստվածաստեղծ զույգի փոխհարաբերությունը: Սիրեցյալի կարոտը, նրա համար ապրվող տագնապը, սրտի տրոփյունն անգամ զգալի են սուրբգրային այս գլուխգործոցի մեջ. «Ինձ իբրև կնի՛ք դիր քո սրտի վրա, իբրև մատանի՛ դիր քո աջ ձեռքին, քանզի հզոր է սերը մահվան պես, խանդը դաժան է դժոխքի նման, նրա թռիչքը նման է հրի բոցի թռիչքին: Առատ ջրերը չեն կարող սերը մարել, և ոչ էլ գետերը կարող են արգելել այն» (Երգ Ը 5-7): Կնոջ և տղամարդու փոխ առ փոխ ասվող խոսքերն ու մտորումները գրեթե հավասարապես են բաշխված. սեռային տարբերության որևիցե ակնարկ չենք գտնում Երգ երգոցում: Այն հավասար դիրքերից է նկարագրում մարդկային սերը. մարդ եւ կին հավասարապես են ձգտում իրար:

Նորկտակարանյան իրականության մեջ տղամարդու և կնոջ սեռային տարբերության խնդիրն իր վերջնական լուծումն է գտնում Պողոս առաքյալի՝ Եփեսացիներին ուղղված նամակի նշանավոր խոսքերով.

«Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպես կհնազանդվեն Տիրոջը, որովհետև մարդն է գլուխը կնոջ, ինչպես որ Քրիստոս գլուխն է եկեղեցու. և ինքն է Փրկիչն այդ մարմնի: Եվ ինչպես եկեղեցին հնազանդվում է Քրիստոսին, նույնպես և կանայք թող հնազանդվեն իրենց մարդկանց ամեն ինչում: Մարդի՛կ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց եկեղեցին և իր անձը մատնեց նրա համար, որ սրբացնի ավազանի մաքրությամբ՝ խոսքով, որպեսզի իր առաջ փառավոր կերպով կանգնեցնի եկեղեցին, որ ոչ մի արատ կամ աղտեղություն կամ նման բաներից ոչինչ չունենա, այլ լինի սուրբ և անարատ: Նույն ձևով մարդիկ պարտավոր են սիրել իրենց կանանց իբրև իրենց մարմինները. ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում. որովհետև ոչ ոք երբեք իր անձը չի ատում, այլ սնում և խնամում է այն, ինչպես որ Քրիստոս՝ եկեղեցին, քանզի անդամներն ենք նրա մարմնի՝ նրա մարմնից ու ոսկորներից: …*Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի և եկեղեցու վերաբերյալ»* (Ե 22-32):

Պողոսյան աստվածաբանության հանճարով պսակված այս խոսքերը լավագույնս վերհանում են տղամարդու և կնոջ հարաբերության մասին նորկտակարանյան պատկերացումը: Ըստ էության, Պողոս առաքյալն այստեղ վերարտադրում է Հին Կտակարանի սրբազան հեղինակների դիտավորությունը: Ըստ այսմ, Հին Ուխտում բազմաթիվ համարներ վկայում են ամուսնության՝ աստվածային շնորհով և պարգևով մի այլ, երկնային մակարդակի հասած լինելու մասին: Իսրայելին շրջապատող հեթանոս ազգերի մեջ սերը և սեռային հարաբերությունը՝ իբրև կենդանական աշխարհին աղերսվող երևույթ, ուներ իր հատուկ պաշտամունքային կարգն ու դիցարանը: Ծննդոց Ա և Բ գլուխներում առկա պատումներն այս հարաբերությունը բարձրացնում են մի նոր, ավելի հոգևոր աստիճանի. Աստված ինքն իր արարչագործ ձեռքով է հաստատում Ադամի ու Եվայի միջև սեր և ամուսնական ջերմություն[13]: Խորհրդաբանորեն, Ադամի և Եվայի ամուսնության առաջին վկան դառնում է Աստված: Հետագա դարերում սեռային հարաբերության այս խորհուրդը վերածվում է Աստծո և իր ընտրյալ ժողովրդի միջև առկա սիրո: Իսրայելը մարգարեական գրքերում հանդես է գալիս իբրև Աստծո հարս և կին, երգ երգոցն սկսում է հրեական և քրիստոնեական մեկնիչների կողմից ընկալվել իբրև հավատացյալ հոտի և Աստծո սիրո ու փոխհարաբերության օրհներգը: Գաղափարների այս կարգի մեջ, ուրեմն, Պողոս առաքյալի վերլուծումը հասկանալի է դառնում: Եփես. Ե-ով նա վերացնում է ամեն տեսակ տարբերություն կնոջ և տղամարդու հարաբերության մեջ՝ չանտեսելով, սակայն, արարչագործությամբ հաստատված սեռային տարբերությունը: Կինը և տղամարդը, իբրև տարբեր սեռերի պատկանող անձնավորություններ, տարբեր են իրենց կարգավիճակով և կարողություններով, սակայն մեկ են իրենց կապող աստվածաստեղծ բնությամբ: Սեռային տարբերությունը կարելի է լուսաբանել քրիստոնեական հավատքի երկու մեծագույն խորհուրդների՝ Սբ. Երրորդության և Քրիստոսի անձի լույսի ներքո[14]:

Սուրբ Երրորդության երեք առանձնավորությունները՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի, չնայած տարբեր առանձնավորական հատկություններին, պատկանում են մի և նույն հայրաբուն բնությանը: Այս առանձնավորություններից ոչ ոք չի ձգտում դառնալ մյուսը՝ փոխելով իր հատկությունները. Որդին չի ձգտում Հայր դառնալ, Սուրբ Հոգին՝ Որդի, այլ երեքն էլ Հոր

---

[13] Տե՛ս **Schillebeeckx E.,** Le Mariage : Realité terrestre et mystère de salut, թրգմն. նիդերլանդերենից՝ J.-M. Hayaux-ի, Paris, 1966, էջ 40-41:

[14] **Ñâÿùåííèê Âëàäèìèð Øìàëèé**, Ïðîáëåìàòèêà ïîëà â ñâåòå ððèñòèàíñêîé àíòðîïîëîãèè (Áûò. 1, 27), *Ó÷åíèå Öåðêâè î ÷åëîâåêå, Áîãîñëîâñêàÿ êîíôåðåíöèÿ Ðóññêîé Ïðàâîñëàâíîé Öåðêâè* (Ì îñêâà, 5-8 íîÿáðÿ 2001 ã.), Ì îñêâà 2002, ñò. 303-305:

անձի միջոցով անբաժանելի են մեկ և միակ բնության մեջ: Նրանք մեկ բնություն են՝ աստվածային սիրո մեջ հարատևելով: Սուրբ Երրորդության երկրորդ անձը՝ Որդին, դառնում է Աստվածամարդ՝ Սուրբ Կույս Աստվածածնից մարդանալով և մարդկային բնություն առնելով: Բանն Աստված կատարյալ մարդկային բնություն զգեցավ՝ ամեն ինչով նման մեր մարդկային բնությանը՝ բացի մեղքից: Մարդեղության այս փաստի մեջ աստվածային և մարդկային բնությունների միացումը, անշփոթ կերպով դրանց հատկությունների արտահայտումը լույս կարող է սփռել այն միության վրա, որի մասին խոսում է Պողոս առաքյալը Եփեսացիս նամակում: Ե՛վ Քրիստոսի մարդեղությունը, և՛ տարբեր սեռերի ներկայացուցիչների՝ տղամարդու և կնոջ միությունը խորհուրդ են: Երկուսից ոչ ոք չի կորցնում իր հատկություններն ու առանձնահատկությունները՝ իբրև առանձին անձնավորություն, սակայն այդ միության մեջ անքակտելիորեն միանում է մյուսին: Այլ խոսքով, այդ միության մեջ առանձնավորությունը սովորում է ապրել ոչ միայն ինքն իր «հետ», այլ նաև ինքն իր «համար», քանզի միությամբ արդեն դարձել է մեկ բնություն:

Քրիստոնեական բարոյականությունը, տղամարդու և կնոջ փոխհարաբերությունը պատկերացնելով Քրիստոսի և իր մարմնի՝ Եկեղեցու միությամբ, միանշանակորեն շեշտում է նաև այդ միության եկեղեցական, հավաքական իմաստը[15]: Միանալով և մեկ դառնալով իբրև մարդկային բնություն՝ այր և կին հաղորդակից են դառնում Քրիստոսի մարմնին: Այս վերջինիս հաղորդակցվելով է, որ Աստված, ինչպես դրախտում Ադամի ու Եվայի պարագային, դառնում է նրանց միության վկան և սրբագործում այն:

բ. Տղամարդու և կնոջ դերերի ընկալումն ըստ Հայ եկեղեցական ավանդության

Տղամարդը և կինն այս միության մեջ ունեն որոշակի և հստակ զանազանված դերեր ըստ Հայ Եկեղեցու ավանդության: Այս առումով Պսակի սուրբ խորհուրդի ծիսակատարության մեջ է[16], որ այր-կին փոխհարաբերությանն ու ամուսնական միությանն առընչվող մի քանի առանձնահատկություններ կարող ենք վերհանել: Նախ և առաջ պետք է նշել, որ Հայ Եկեղեցին, մեծ նշանակություն տալով Պսակի խորհրդին և այն ընկալելով Քրիստոսի և իր մարմնի՝ Եկեղեցու միջև առկա սրբազան փոխհարաբերության լույսի տակ, Պսակի խորհուրդի հետ առանձնացնում է

[15] **Vigen Guroian**, Incarnate Love : Essays in Orthodox Ethics, Notre Dame, Indiana 1987, էջ 81-93:
[16] «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», Կոստանդնուպոլիս, 1807 , էջ 21-34:

նաև Նշան օրհնելու հատուկ կարգը[17], որը, ըստ էության, Սուրբ Պսակի նախապատրաստական և ավելի հոգևոր երեսն է: Այս երկու՝ միմյանց լրացնող մասերի մեջ զննելով կարող ենք փոքրիշատե տարորոշել տղամարդուն և կնոջը տրված դերերը՝ արարչագործությունը երկրի վրա շարունակելու սրբազան և աստվածային առաքելության մեջ:

Տղամարդն ու կինն անվանվում են *թագավոր և թագուհի*: Խորհրդաբանորեն տրված այս որակումը մեզ տանում է դեպի Ծննդ. Ա-Գ գլուխներ, երբ Ադամն ու Եվան դեռևս բացարձակ տերն ու իշխանն էին իրենց կրքերի և արարված ողջ բնության: «Կանոն պսակ վերացուցանելոյ» բաժնի մեջ, երբ քահանան ամուսինների սրբազան կապը Խաչի նշանով օրհնելուց և նրանց գլուխների վրա նարոտները կապելուց հետո «վերացնում», այսինքն՝ դրանք հանելով հաստատում է այդ կապի իրականությունը, երգում է Բուն Բարեկենդանի կանոնի օրհնությունը, որն էլ հենց դրախտային երանությունը պատմող դրվագն է.

«Բանն որ ընդ Հօր էութեան եւ համագոյ Սուրբ Հոգւոյն.
զպատկերն իւրական խառնեալ ընդ հողանիւթ բնութեանս.
զոր զարդարեալ փառօք եդ ի դրախտին փափկութեան :
Յորում ցնծայր զուարճացեալ անտխրական խնդութեամբ.
քանզի զԱստուած տեսանէր միշտ խոնարհեալ ի դրախտին
յորմէ զլուսոյն ճառագայթ տպաւորէր ի յինքեան»:

Հետաքրքիր է Խաչին նվիրված շարականների առկայությունը Խորհրդի այս բաժնում, որովհետև Խաչն այլաբանական և աստվածաբանական մեկնությունների մեջ ճնշող մեծամասնությամբ ներկայանում է իբրև Կենաց կամ չարի և բարու գիտության ծառ: Այլ խոսքերով, ծիսակատարության մեջ վերարտադրվող Ծննդոց Ա-Բ գլուխների համապատասխան դրվագները՝ իրենց գործող անձանց հիշատակումով (Աստված, Խաչ-Կենաց ծառ, տղամարդ-Ադամ, կին-Եվա), բացատրում է տղամարդուն և կնոջն Աստծո կողմից վերապահվող *քրիստոնեական կոչումը*՝ աճելու, վերարտադրվելու և երկրի վրա տեր, իշխան և թագավոր լինելու: Սակայն որդեծնության նպատակից բացի այր և կին մեկ այլ առաքելու-

[17] Անդ, էջ 229-234:

թյան են կոչված[18]՝ ըստ Մաշտոց-Ցիսարանի, լինելու «միաշունչ և միախորհուրդ».

«Նայեա՛ Տէ՛ր քաղցրութեամբ քով ի սոսա. եւ փոխանակ այսր պսակի՝ առաքեա զիրեշտակ խաղաղութեան քո, որ եկեալ պահեսցէ զսոսա սուրբս եւ անարատս, միաշունչս եւ միախորհուրդս»:

Տղամարդ և կին քրիստոնեական կոչում ունեն միասին խորհելու և միասին ապրելու՝ մեկը մյուսի համար: Եկեղեցու այս վարդապետության համաձայն, ամուսնացած զույգը չի կարող պտղալից ծիթենու պես տնկվել Եկեղեցու անդաստանում, չի կարող որդեծնության աստվածադիր հրամանը և պատգամը ճիշտ իրագործել, եթե միասիրտ և միախորհուրդ չէ: Ուրեմն տղամարդու և կնոջ դերակատարությունը քրիստոնեական պսակի մեջ որդեծնությունից առաջ այդ միությունը ճշմարիտ և անարատ սիրո վրա հիմնելն է: Սուրբ Պսակի աղոթքի խորհրդի մեջ կարդում ենք.

«Սուրբ արա Տէր զանկողինս սոցա յամենայն որոգայթից սատանայի. եւ *միաւորեա զսոսա ընդ լծով զուգակցութեան* վիճակի քոյ սրբոյ. զի մի՛ յայսմհետէ կոչեսցին երկու, այլ մի մարմին. միաւորեալք սիրով եւ հեզութեամբ: *Սիրել զմիմեանս պարկեշտ վարուք եւ զգաստ մտօք եւ անբիծ հաւատով. առանց ամօթոյ եւ լլկանաց*, պատրաստ լինիլ ի գործս բարիս»:

Ամուսնական կյանքում սեր և համերաշխություն պահպանելու համար դերերի տեղաբաշխման մեջ չի կարող որևիցե տարբերություն լինել, որովհետև սիրո այդ հարաբերությունը, ինչպես արդեն նշվեց, Քրիստոսի և իր Եկեղեցու անքակտելի կապի օրինակն է: Ուրեմն և ամուսնական անկողինը սուրբ է, ամուսնական հարաբերությունների մեջ էլ կին և տղամարդ հավասարապես են կիսում պարտավորություններն ըստ Պողոս առաքյալի խոսքերի. «Թող մարդը կնոջ հանդեպ իր պարտքը կատարի, նույն ձևով և կինը՝ իր մարդու հանդեպ, որովհետև կինն իր մարմնի տերը չէ, այլ մարդը: Նույնպես և մարդն իր մարմնի տերը չէ, այլ՝ կինը: Մի՛ զրկեք միմյանց, այլ միայն այն դեպքում, եթե միառժամանակ համաձայն եք, որ աղոթքի նվիրվեք. և վերստին միմյանց դարձեք, որպեսզի Սատանան ձեզ չփորձի ձեր անժուժկալության պատճառով» (Ա Կորնթ. է 3-5):

---

[18] **Արշակ Տեր-Միքելյան**, «Պսակի Ս. Խորհուրդը», *Երկերի ժողովածու*, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009, էջ 140:

Միմյանց հանդեպ հոժարության և նվիրումի արտահայտման ձևն ամուսինների համար Հայ եկեղեցական ավանդությունը սահմանել է Նշան օրհնելու կարգը: Այստեղ խորհրդի հիմքում դրված է Ավետման դրվագը (Ղուկ. Ա 26-38) : Մաշտոց-Ծիսարանը հետևյալ ցուցումն ունի քահանայի համար.

«Եւ առնու քահանայն զօրհնութեան բաժակն ի ձեռն, եւ բացատրէ *զմեծագոյն խորհուրդ նշանին. եթէ ցուցանէ զկենսաբեր աւետիսն Գաբրիելի*, զոր ետ Սրբոյ Կուսին Մարիամու, որով յղացաւ զԲանն Աստուած»:

Ըստ այսմ, հարսը կամ կինը ներկայացվում է Աստվածածնի կերպարով, իսկ Փեսան՝ Քրիստոսի, որը պետք է միանա Սուրբ Կույսի մարդկային բնությանը և նրանից մարմնանա՝ իբրև Աստվածամարդ: Սուրբ Գրիգոր Տաթևացին բավական ուշագրավ դիտողություններ է անում այս դրվագի վերաբերյալ.

«Եւ որպէս հրեշտակապետն Գաբրիէլ, նախ ետ զաւետիս Սրբոյ Կուսին, եւ նա խորհէր ի միտս եւ ապա հաւանեցաւ եւ ասէ. «Կամ աղախին Տեառն« եւ ապա յղացաւ եւ ծնաւ զբանն Աստուած մարմնացեալ: Նոյնպէս եւ նախ նշանն դնի հարսին: Իսկ հաւանումն երկուց կամացն՝ հաստատութիւն է պսակին: … Եւ որպէս ասէ գիրն թէ՝ «զկողն զոր շինեաց կին՝ էած առ Ադամ», այսինքն՝ զի տեսեալ հաւանեսցին միմեանց: Զայս ունի խորհուրդ, որ հարսն եւ փեսայն յառաջ քան զպսակն տեսանեն զմիմեանս. եւ հաւանին սրտիւք եւ կամօք եւ ապա պսակին»[19]:

Այր և կին իրենց հոժար կամոք և սրտի վկայությամբ հաստատում ու կիսում են իրենց դերակատարությունը՝ Աստծո պատգամը՝ որդեծնությունը երկրի վրա իրագործելու համար: Համատեղ կյանքի և փոխադարձ սիրո անդրադարձի տրամաբանական զարգացումն է որդեծնությունը: Տղամարդու և կնոջ փոխադարձ պարտականություններն իմաստ չունեն, եթե դրանք ուղղված չեն նոր, «դրախտի ընտանիք» ստեղծելուն: Ինչպես Քրիստոսի և իր Եկեղեցու միության հոգևոր ծնունդն են մկրտության ավազանից ծնված և մեղքերից մաքրված քրիստոնյաները, այդպես էլ տղամարդու և կնոջ կոչումն է որդեծնության միջոցով Աստծո փառքը՝ արարչագործությունը երկրի վրա միշտ անխախտ պահելու:

գ. Պսակի խորհրդի իմաստը. խրատ պսակադրվողներին

[19] «Գիրք Հարցմանց», Երուսաղէմ 1993, էջ 608:

Պսակի խորհուրդն ինքնին մի գեղեցիկ դասավորված և շարակարգված խրատ է պսակվող զույգին: Խորհուրդի աղոթքների և շարականների ընդմեջէն է, որ ամուսնացողները կարող են լավագույնս ըմբռնել քրիստոնեական պսակի ամբողջ իմաստը՝ իբրև ուղեցույց իրենց հետագա ամուսնական կյանքի:

Ընդհանրապես, հարկ է նշել, որ վաղ քրիստոնեական Եկեղեցին ընդհանրացման կարգով ընդունում էր Հռոմեական կայսրության ամուսնական կարգը՝ դրան տալով քրիստոնեական շունչ և մեկնաբանություն՝ ըստ Սուրբ Գրոց վարդապետության: Հետաքրքիր է դիտարկել հռոմեական իրավունքի այս մոտեցման ձևակերպումը հայտնի իրավաբան Մոդեստինոսի կողմից (Գ դ. Ք. հ.). «Ամուսնությունը տղամարդու և կնոջ միությունն է, կյանքի երկուստեք բաժանումն ու հաղորդակցությունը, համահաղորդությունն աստվածային և մարդկային օրենքներին»[20]: Հետևելով այս համառոտ ձևակերպմանը՝ Քրիստոնեական եկեղեցիների մեծ մասի կանոնական գրվածքները Պսակի հետևյալ հիմնական հատկանիշները կամ նշանակություններն են առանձնացնում՝ ա. բնական, այսինքն՝ տարբեր սեռերից միամուսնական զույգի ձևավորում, բ. բարոյական (էթիկական)՝ կյանքի երկուստեք բաժանում և հաղորդակցություն բոլոր հանգամանքներում ու իրավիճակներում, գ. կրոնա-իրավաբանական՝ համահաղորդություն մարդկային և աստվածային օրենքներին[21]: Այս առումով Պսակի խորհուրդի կարգի մեջ վերոնշյալ հատկանիշները միահյուսված կերպով մերթ ընդ մերթ հայտնվում են՝ մեզ հուշելով պսակի աստվածամարդկային որակների մասին:

Նախ և առաջ հարկ է շեշտել Պսակի խորհուրդի սերտ կապը Պատարագի հետ: Մաշտոց-Ծիսարանի համաձայն, Պսակի խորհուրդն սկսում է քահանայի «Զի քո է կարողութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս ամէն» վերակոչությամբ, որով ազդարարվում է Ավետարանի ընթերցման և Խոսքի պատարագի սկիզբը՝ «Սուրբ Աստուած» սրբասացության երգեցողությամբ[22]: Պսակի խորհրդի սիրտը կազմող այս համեմա-

---

[20] Ïðàâîñëàâíàÿ ýíöèêëîïåäèÿ, ò. 6, 2003, ñò. 146:

[21] Նույն տեղում: Հայ իրավաբանական մտքի լավագույն գիտակներից մեկը՝ Վահան Ծ. վրդ. Բաստամյանցը, հայ իրականության համար հետևյալ առանձնաբաժանումով է առաջնորդվում՝ ա. **Աստվածային իրավունք** (տե՛ս Ծննդ. Ա եւ Բ), բ. **Մարդկային իրավունք**՝ «իբրեւ մարդու եւ կնոջ միջեւ երկուստեք համաձայնութեամբ դաշնակցութիւն կամ ընկերակցութիւն իւր բոլոր իրավաբանական հատկանիշներով», գ. **Բնական իրավունք**, այսինքն՝ արական և իգական սեռերի բնական ձգտումը միմյանց նկատմամբ, դ. **Պետական իրավունք**՝ «իբրեւ հաստատութիւն իւր բոլոր յարաբերութիւններով հասարակութեան եւ հետեւաբար պետութեան հետ», տե՛ս «Ամուսնութիւնը ըստ Հայ եկեղեցական իրաւաբանութեան», *Փորձ ատմսագիր* Դ, 1880, էջ 149:

[22] Ուղղափառ ավանդության մեջ այս խնդրի վերլուծությանն է նվիրված Ջ. Մեյենդորֆի հետևյալ մենագրությունը՝ Marriage: An Orthodox Perspective, St. Vladimir's Seminary, New York, 1984:

տաբար կարճ ծիսակարգը վկայում է այն մասին, որ Վաղ եկեղեցում Պասկի արարողությունն ընթացել է Ս. Պատարագի խորհրդով, իսկ հավարտ Պատարագի նորապսակ զույգը հաղորդվել է տերունական մարմնին ու արյանը, ինչպես վկայում է Մաշտոցի մեջ պահպանված արձագանքը. «Ապա յետ կատարման Սրբոյ Պասկին՝ եթէ հաղորդեսցին մարմնոյ եւ արեան Տեառն, զուրն օր մի մերձեսցին առ միմեանս»[23]: Թղթի (Ե-փես. Ե 22-33) և Ավետարանի (Մտթ. ԺԹ 3-12) ընթերցումը պարզորոշ կերպով շեշտում է մարդու և կնոջ միության անքակտելիությունը, որովհետև այն Քրիստոսի և Եկեղեցու միության խորհուրդն ունի՝ այլևս սրբագործված Ս. Հաղորդությամբ: Այս սրբազան միությունն ավելի շոշափելի և իրական դարձնելու միտումով է թերևս հաստատված «պսակ դնելոյ» կարգը, որը, դատելով տեղում մեջբերվող Սաղմոսից (ԽԴ), թագավորի և թագուհու թագադրման երգերից է՝ «Թագավորական հարսանիքի երգը»: Պսակ դնելու այս ծիսակարգը նախորդում է Սուրբ Պատարագի արարողությանը: Նախ քահանան օրհնում է «հալավը» կամ հարսանեկան զգեստները: Փեսային զգեստավորելուց հետո քահանան փեսայի հետ գնում է հարսի տուն՝ փոխադարձ երդումի կարգը կատարելու. «Եւ ապա երթան ի տուն հարսին, եւ բերեն զհարսն առ փեսայն, եւ առնու քահանայն զաջ ձեռն հարսին, եւ տայ յաջ ձեռն փեսային…»[24]: Իրականում այս ամբողջ խնամքով մշակված ծիսակարգն այլ բան չէ, քան պատրաստություն Աստծո Արքայություն մուտք գործելուն, այսինքն՝ Սուրբ Պատարագի մասնակցության[25]. «Եւ ապա երթան ի դուռն եկեղեցւոյն, եւ հարսն եւ փեսայն երեք ծունր կրկնեն. եւ անդ քահանայն խոստովանեցուցանէ զնոսա, եւ ապա ոլորէ զերեք գունեան զնարոտն»[26] : Պսակները խորհրդանշում են Աստծո արքայության մեջ առաջին զույգի՝ Ադամի և Եւայի հոգևոր ու լուսավոր պատմուճանները: Փոխադարձ համաձայնությունը հրապարակավ հաստատելուց հետո սկսվում է Խոսքի Պատարագը: Պսակները խորհրդանշում են մարմնավոր բարեկեցություն և հոգևոր սխրանք: Ինչպես նշում է Մաշտոցը՝ «Իսկ յետ աւարտման սրբոյ Պատարագին, նստուցանեն զփեսայն եւ ասեն՝ Շարական բկ, Ով երանելիդ ամենեցուն»[27]: Արքայական թագի և հայոց թագավոր-թագուհիների հիշատակությամբ հայցվում է բարեկեցություն և անսասանություն նորաստեղծ ընտանիքին, իսկ «Պսակ վերացուցանելոյ» կարգի մեջ ար-

[23] «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», էջ 31:
[24] «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», էջ 24:
[25] **J. Meyendorff**, նշվ. աշխ., էջ 34:
[26] «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», էջ 25:
[27] Անդ, էջ 30:

դեն մարտիրոսաց շարականների առկայությունը վկայում է քրիստոնեական այն կոչման մասին, որն ստանձնում են ամուսինները[28]: Ըստ այդմ, Պասկի նշանակության երկվությունը բխում է նաև Պասկի խորհրդի աստվածամարդկային բնույթից. երկրի վրա ամուսինները պարտավորվում են ստեղծելու անսասան ու ամուր ընտանիք, իսկ երկնքի համար՝ անաղարտ ու քրիստոսանման վկայությամբ սրբված կյանք, որի ամբողջ ընթացքը հոգևոր մարտիրոսություն է, սխրանք՝ հաղթահարելու սատանայի բոլոր մեքենայությունները. «Անթառամ պսակն ձեզ աւանդեալ մնայ. քան զականս գերագոյն հրաշիւք. որք վանեալ զթշնամին խորտակեցիք»[29]:

Հուսկ, իբրև եզրակացություն Պասկի խորհրդի, կկամենայինք թարգմանաբար մեջբերել Մաշտոց-Ծիսարանում զետեղված խրատը՝ ուղղված նորապսակ ամուսիններին (տե՛ս Հավելվածում):

դ. Մեղքը և առաքինությունն ընտանեկան կյանքում

Ամուսիններին տրված խրատի մեջ Պասկի խորհուրդը դիտարկվում էր արդեն իբրև միասին Քրիստոսի արքայությունը երկրի վրա ստեղծելու հոգևոր սխրանք: Համատեղ կյանքի մեջ ամուսիններին սպասվում են մեղքեր և փորձություններ, որոնք, ըստ Պասկի խորհրդի ժամանակ տրված խոստման, պետք է ամուսինների կողմից հաղթահարվեն համատեղ ջանքերով: Ըստ քրիստոնեական բարոյականության կնոջ և տղամարդու պարտականությունները թեև տարբեր են, սակայն՝ ոչ անհավասար: Ինչպես արդեն նշվեց, քրիստոնեական աստվածաբանության տեսակետից կինն ու տղամարդը միևնույն մարդկային բնության առանձնավորական արտահայտություններն են: Սա նշանակում է, որ մեղքի և առաքինության բաժինները համատեղ կերպով են անդրադառնում մեկ մարմին դարձած զույգի կյանքին: Ավելին, ամուսիններից յուրաքանչյուրը պատասխանատու է դառնում մյուսի անկումների և բարձրացումների համար:

Ամուսնական կյանքում գլխավոր մարտահրավերը սեռականությունն է[30], որի ճիշտ և քրիստոնեական ըմբռնումը շատ մարդկանց մոտ թյուր մեկնությունների և պատկերացումների տեղիք է տալիս՝ հաճախ մեղադրելով քրիստոնեությանը և Եկեղեցուն ավելորդ մաքրամոլության

---

[28] **J. Meyendorff**, նշվ. աշխ., էջ 35-36:

[29] «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», էջ 31:

[30] **Ռ. Ա. Կայայան**, Տղամարդ եւ կին ստեղծեց նրանց. ավետարանական հեռանկարներ, ֆրանսերենից թարգմանեց՝ Սուսաննա Խաչատրյան, Երեւան 1997, էջ 61 :

մեջ: Առանց վարանելու կարելի է ասել, որ սեռականությունն իր երկիմաստ բնույթով կանգնած է հավասարապես թե՛ բռնության և թե՛ առաքինության ակունքներում: Ավելին, Պողոս առաքյալի ձևակերպմամբ Աստծո պատկերը կորցնելու գլխավոր պատճառներից մեկը գերսեռականության մեղքն էր (հմմտ. Հռոմ. Ա 18-27): Ինչպես արդեն նշեցինք, սեռականությունը, իբրև աստվածային պարգև, տրվեց ողջ արարչությանը: Մարդը, սակայն, սեռականությունն ստացավ իբրև դիմավոր էակ, և հենց դրանով իսկ նրա սեռականությունն առանձնացավ կենդանական աշխարհից: Ադամն ու Եվան նախ սիրեցին իրար իբրև մարդկային *անձինք*: Սեռականության այս անձնավորումը Եդեմի պարտեզում նաև սիրո՝ իբրև էրոսի, սրբագործումն էր[31], որը, սակայն, նույն արժեքը չունեցավ Ադամի անկումից հետո: Ինչպես ամեն բան բնության մեջ, սերն ու սեռականությունն էլ մարդու անկումով դրվեցին մշտական խաթարման ու աղավաղման վտանգի տակ: Սեռականությունն սկսեց շատ հաճախ բռնություն ծնել: Կենդանական բնազդով ըմբռնվող և ընկալվող սեռականությունը դարձավ մեղքի հիմնական ու շարժիչ գործոններից մեկը: Հինկտակարանյան բազում դրվագներ մեզ լավագույնս բացատրում են սեռականության մեջ առկա բռնությունն ու անհավասարությունը, ի դեմս լեվիրատ ամուսնության և բազմակնության[32]: Հին Կտակարանում պատերազմի ժամանակ գերեվարված կանայք որպես ավար կարող էին բաժանվել զինվորների միջև, կինը, ամլության դեպքում, պարտավորվում էր իր ամուսնուն զավակ պարգևել՝ իր իսկ հարճի միջոցով, իսկ բազմամուսնությամբ արդեն վերջնականապես կանայք համարվում էին միայն ու միայն սերնդագործության միջոց և ցեղի հզորացման գրավական:

Նորկտակարանյան իրականությունը հիմնավորապես փոխեց սեռականության նկատմամբ այս վերաբերմունքը: Քրիստոսի խոսքերի համաձայն, ամուսնության և սեռականության մասին վերոնշյալ բոլոր հինկտակարանյան օրենքները սրբագրվում էին Եդեմի պարտեզում Աստծո տված պարգևով (հմմտ. Մտթ. ԺԹ 3-12, Մրկ. Ժ 2-12) և վերջին դատաստանի ժամանակ հարության գաղափարի լույսով (հմմտ. Ղուկ. Ի 27-40) : Ըստ էության, առաքինությունն ամուսնական սեռային կյանքում նախնական, եդեմական վիճակին վերադարձն էր՝ ըստ Հիսուսի խոսքի, երբ առաջին մարդկային զույգը կապված էր դիմավոր, անձնավոր էակին բնո-

[31] **David M. Carr**, The Erotic Word : Sexuality, Spirituality and the Bible, Oxford Uiversity Press, 2003, էջ 153-167:

[32] Տե՛ս օրինակ Ծննդ. Դ 19, Լ 9-13, Ղեւտ. ԺԸ 16, Ի 21, Երկր. Օրինաց ԻԱ 10-14, ԻԵ 5-10:

ոոշ հոգեկան խոր սիրով[33]: Քրիստոնեական բարքի և բարոյականության համաձայն, այդ անձնական փոխճանաչումն[34] ու ամուր հոգեկան սերն է, որ սրբագործում է կենդանական վիճակին բնորոշ սեռականությունը: Եթե քրիստոնեական ընտանիքում չի գերիշխում այս հոգեկան սերն ու փոխճանաչումը, ապա ընտանիքում տիրում է մեղքի ու բռնության մթնոլորտը: Ամուսիններն այս դեպքում միայն իրենց սեռական կարիքների համար է, որ ընտանեկան հարկ են մտել: Այսպիսի կապն արդեն միանշանակորեն դատապարտվում է Եկեղեցու կողմից՝ իբրև լկտության և անպարկեշտության ոգով գոյացած:

Հարկ է նշել, որ սեռականությունն ինքը՝ իբրև հասկացություն, անբաժանելի է մարդկային բնությունից, և, հակառակ մնացած բոլոր արատներին կամ կենցաղային երևույթներին, ամենամեծ ազդեցությունն է գործում մարդու հոգեկանի ու ներաշխարհի վրա: Ուստի այն մեծագույն ուշադրության ու խնամքի է արժանի՝ հոգևոր կյանքի հոգեթերապիայի ընթացքին: Ծննդոց գրքի համաձայն, սեռական ակտը և բազում ցավերով զավակներ ծնելն առաջին մարդու անկումից հետո մարդկային պատմության մեջ արձանագրվեցին իբրև աստվածային անեծք (հմմտ. Ծնն. Գ 16-21): Սակայն ճշմարիտ սիրո միջոցով Աստված մարդուն շնորհ տվեց՝ ձերբազատվելու ադամական անկյալ վիճակի այդ դրսևորումից և, իր կողակցին մինչև մահ սիրելով, արժանանալու իրական հոգևոր սխրանքի պսակին: Ահա այս առումով է, որ իմաստավորվում են Պողոս առաքյալի խոսքերն ամուսնական անկողնի մասին. «Ամուսնությունն ըստ ամենայնի հարգելի է, և ամուսնական անկողինը՝ սուրբ: Եվ Աստված պիտի դատի պոռնիկներին ու շնացողներին» (Եբր. ԺԳ 4): Սրբության գաղափարն այս խոսքերի մեջ սերտորեն կապված է քրիստոնեական փրկության գաղափարի հետ: Կենդանական բնազդից դեպի նոր, հոգևոր բնույթ ունեցող սեռականություն, այսինքն՝ սեր, ճանապարհն անցնում է ինքնամաքրման և ինքնազննման հանգրվաններով: Այստեղ ուշագրավ են երկու հիմնական հասկացություններ՝ *հարություն* և *փրկություն*[35]: Սրանցից առաջինը կապված է համատես Ավետարաններում պատմվող սադուկեցիների՝ ամուսնության և Հարության մասին Հիսուսին տված հարցումի (Մտթ. ԻԲ 23-32, Մրկ. ԺԲ 18-27, Ղուկ. Ի 27-40) հետ: Սադուկեցիները, ըստ Ավետա-

---

[33] **Ռ. Ա. Կայայան**, նշվ. աշխ., էջ 66:

[34] Հետաքրքիր է, որ եբրայեցերեն բնագրի համաձայն Ադամի և Եվայի սեռային կյանքը բնութագրվում է «յադա-ճանաչել» բայով. «Եւ Ադամն *ճանաչեաց* իր կնոջը՝ Եվային, եւ սա ծնեց Կայենին» (Ծնն. Դ 1):

[35] **Âäãåíèÿ Íåãàíîâà**, “È äàëè áðàêà â Ïðàâîñëàâèè”, *Ó÷åíèå Öåðêâè î ÷åëîâåêå, Áîãîñëîâñêàÿ êîíôåðåíöèÿ Ðóññêîé Ïðàâîñëàâíîé Öåðêâè,* ñò. 271:

ռանչի, այն կուսակցությանն էին պատկանում, ովքեր չէին ընդունում մեռելների Հարության և Վերջին դատաստանի վարդապետությունները, և նրանց տրված հարցն էլ կապված էր մարդկային ցեղի շարունակականությունն ապահովող ամուսնության և սեռական կյանքի հետ: Սադուկեցիների պատկերացմամբ մեռելների հարություն չէր կարող լինել, որովհետև այդ դեպքում, Աստծո սահմանած ֆիզիկական գոյությունը և դրա հետևանքով սեռական ակտի միջոցով զարգացող մարդկային մարմինը պետք է վերստանային իրենց նախնական վիճակը: Իսկ այս պարագային, կինը, որ հաջորդաբար ամուսնացել էր յոթ եղբայրների հետ, պետք է պատկաներ նրանց բոլորին էլ, ինչն անհնար էր թե՛ տեսականորեն և թե՛ գործնականորեն: Հիսուսի պատասխանը պարզաբանում է ամուսնության և սեռականության էությունը Հարության լույսի տակ.

«Այս աշխարհի որդիները կին են առնում և մարդու են գնում. իսկ նրանք, որոնք արժանի կլինեն այն աշխարհին հասնելու և մեռելներից հարություն առնելու ո՛չ կին են առնում և ո՛չ էլ մարդու են գնում, քանի որ այլևս մեռնել անգամ չեն կարող, որովհետև հրեշտակների նման են և Աստծո որդիներ, քանի որ հարության որդիներ են» (Ղուկ. Ի 27-40):

Լեվիրատ ամուսնության օրենքը մերժելուց ավելի Հիսուս կտրականապես հերքում է ամուսնության և համատեղ կյանքի աղավաղված, ֆիզիկական ըմբռնումը՝ իբրև սերնդագործության միջոց[36]: Ֆիզիկական փոխհարաբերությունից ավելի է ամուսնությունը, որովհետև այն մարդկանց տրված աստվածային շնորհն է՝ հոգևոր և հոգեկան ապրումներով սնված սիրով արժևորելու կենակցությունը: Հարության խորհուրդն այդ սիրո հոգեղինացման լավագույն գրավականն է. մարմինն ինքը ֆիզիկական պարզ գոյություն է, սակայն հարության գաղափարի լույսի տակ փոխակերպվում է և դառնում փրկության միջոց հոգու համար: Նույն կերպ նաև սեռականությունը պարզ ֆիզիկական-կենսաբանական երևույթ է, սակայն ճիշտ ապրված սիրո շնորհիվ կարող է սրբվել և բարձրանալ շատ ավելի բարձր մի աստիճանի: Ի վերջո, ճշմարիտ քրիստոնեական ընտանիքը կերտող զույգերը նմանվում են Աստծուն՝ Նրա պարգևած արարչագործական պատկերը վերարտադրելով ընտանիքում և բարիք ու սեր բաշխելով տան անդամներին: Այս առումով ամուսնության և պսակի խորհուրդի մեջ նշմարվում է փրկության գաղափարին հարող մեկ ուրիշ հասկացություն՝ *աստվածնմանությունը,* որն Աստծուն տանող ամենաապահով ճանապարհն է:

---

[36] **J. Meyendorff**, նշվ. աշխ., էջ 12-14 :

Ամուսնական կյանքում առաջացած փորձությունները հաղթահարելու լավագույն օրինակն ու դաստիարակը Հիսուս Քրիստոս է՝ Աստծո՝ մարդկության հանդեպ ունեցած սիրո խորհուրդը[37]: Անհասկացողության, բռնության, մեղքի պահին տաղամարդ և կին պետք է նայեն Քրիստոսի խորհրդին, որն իր անձը տվեց իր կողակցի՝ Եկեղեցու համար: Այս անձնուրացությունից բացի Քրիստոսի խորհրդի մեջ կարևոր է նաև Նրա մանկավարժական մոտեցումը: Քրիստոս ամեն բանում հեզությամբ և խոնարհությամբ ուսուցանում և առաջնորդում է Եկեղեցուն, որ Իր մարմինն է: Ահա այսպես ամուսինները պետք է «մանկավարժորեն»՝ փոխըմբռնողությամբ և միմյանց բեռը կրելով հասկանան և խրատեն միմյանց: Իսկ Քրիստոսի խորհրդի այս օրինակն արդեն ամուսիններն ստանում են Սուրբ Պսակի խորհրդին, երբ, հաղորդվելով Քրիստոսի մարմնին ու արյանը, ստանում են նրա խորհրդի կատարյալ գիտությունը:

Ե. Ամուսնությունն ըստ Հայ եկեղեցական իրավունքի

Պսակի խորհրդի մյուս կարևոր երեսն է նրա առընչակցությունը եկեղեցական կանոնադրության հետ: Սուրբ Պսակը, բացի Աստծո թագավորության և փրկության խորհուրդը լինելուց, նաև երկրի վրա ապրող մարդկանց՝ կնոջ և տղամարդու միջև հաստատվող դաշինքն է, ուխտը, որը պահանջում է որոշակի և հստակ կանոններ այս աշխարհի փորձություններում կողմնորոշվելու համար: Ընդ որում, ամենասկզբից իսկ նշենք, որ Հայոց Եկեղեցու պարագային Պսակի խորհուրդի կանոնական կարգավորումն ուներ կենսական նշանակություն՝ հաշվի առնելով հայոց պետականության բացակայությունն ու Եկեղեցու՝ պետական գործառույթների դերակատարությունը:

Ըստ եկեղեցական իրավունքի դասական բնորոշման՝ տղամարդ և կին փոխհարաբերությունը կարելի է դիտարկել իբրև հետևյալ չորս դրսևորումների զարգացում.

ա. Աստվածային իրավունք՝ տրված մարդկային ցեղին ըստ Ծննդոց գրքի (հմմտ. Ա 28 և Բ 21-25).

բ. Մարդկային իրավունք՝ իբրև կնոջ և տղամարդու միջև երկուստեք համաձայնությամբ կայացած միություն, դաշինք՝ իր բոլոր հասարակական և իրավաբանական առանձնահատկություններով.

---

[37] **Marcel Lefebvre**, La famiglia, Dalla rinuncia alla speranza, թրգմն. ֆրանսերենից՝ Paola Fabrizi, Edizioni Paoline, Milano 1991, էջ 90-91 :

գ. Բնական իրավունք՝ արական և իգական սեռերի բնական փոխադարձ ձգտումը միմյանց նկատմամբ.
դ. Պետական իրավունք՝ իբրև հաստատություն իր բոլոր հարաբերություններով հասարակության և հետևաբար պետության հետ[38]:

Ամուսնության և սեռային հարաբերությունների կարգավորմանն ուղղված եկեղեցական ջանքերը կարելի է ընդհանրացնել և խմբավորել երկու հիմնական հասկացությունների տակ՝ ամուսնության ընդունելի ու ոչ ընդունելի պայմաններ և ամուսնալուծություն: Ընդ որում, առաջինի տակ կարելի է հասկանալ Պսակից առաջ և հետո ամուսնական զույգի քրիստոնեական բարոյական կենցաղի կարգավորումը, իսկ երկրորդի տակ՝ առաջած խնդիրներին հնարավոր դրական և բացասական լուծումներ տալու փորձառությունը:

Եկեղեցական իրավաբանության մեջ սեռային տարբերության խնդիրն իր հստակ լուծումն է ստացել թե՛ ամուսնության պայմանները կարգավորող և թե՛ ամուսնալուծությունն արտոնող կամ արգելող կանոններում: Անդրադառնանք դրանց ըստ հերթականության:

Ընդհանրապես, ամուսնության համար նախատեսվող պայմանները Հայ Եկեղեցում կարելի է ներկայացնել հետևյալ հինգ խմբերով.

ա. չափահասություն.
բ. փոխադարձ սեր և համաձայնություն.
գ. կանոնական հասություն (սեռ՝ արու և էգ, միակնություն՝ monogamia).
դ. կրոնական-եկեղեցական նույնություն կամ դավանակցություն.
ե. մարմնական-ֆիզիկական կանոնավորություն[39]:

Նշված բոլոր պայմանների խախտման դեպքում գրեթե միշտ արձանագրվել են ներընտանեկան բռնությունների դեպքեր, որոնց դեմ անդադար պայքարել է Եկեղեցին: Բ և Գ պայմանները թերևս ամենահատ-

---

[38] Տե՛ս **Վահան Ծ. վրդ. Բաստամյանց**, նշվ. աշխ., էջ 149 : Հետաքրքիր է Բաստամյանցի սույն դիտարկումը. «Մեզանում մութ եւ անլուծանելի է մնում մինչեւ այժմ մանաւանդ մի գլխաւոր հարցը՝ թէ ի՞նչ իրաւաբանական կամ օրէնսդրական յարաբերութիւն հաստատուեցաւ մեր եկեղեցու եւ մեր պետութեան մէջ ամուսնութեան մասին : Գոնեա եւ մինչեւ այժմ չեմ գտել ոչ մի տեղ - ո՛չ պատմութեան մէջ, ո՛չ եկեղեցական կանոնների մէջ եւ ո՛չ Մխիթար Գոշի դատաստանագրքի մէջ մի ճիշտ եւ դրականապէս հաստատուն տեղեկութիւն թէ՝ մեր պետութիւնը նման ուրիշ պետութիւններին սահմանու՞մ էր արդեօք աշխարհական օրէնքներ յատկապէս ամուսնութեան մասին, թէ՞ ընդունում էր եկեղեցական կանոնները առանց ընդդիմութեան իբրեւ վավերական ընդհանուր օրէնք», էջ 151 :

[39] Տե՛ս **Մինր սրկ. Եսայան**, Ամուսնության պայմաններն ու ամուսնալուծությունը Հայ Եկեղեցում, ավարտաճառ (անտիպ), Սբ. Էջմիածին, 2008, էջ 82 :

կանշականներն են այս առումով: Հաճախ ամուսնությունը կայացել է միայն ծնողների փոխհամաձայնությամբ՝ հաշվի չառնելով զույգերի, հատկապես կնոջ համաձայնությունը, մեծ տարածում է գտել առևանգման երևույթը, վերջապես որոշ վայրերում կնոջ ամլության դեպքում ամուսինը նույնիսկ երկրորդ կին է բերել ընտանիք կամ բաժանվել է առաջին կնոջից[40]:

Փոխադարձ համաձայնությունը Պսակի խորհուրդի կայացման ամենակարևոր պայմաններից մեկն է, առանց որի Պսակի ծիսակատարությունը պարզապես չի կարող շարունակվել. ամուսնացող զույգը նախքան եկեղեցի մտնելն ու օրհնությանն արժանանալը հայտնում է իր համաձայնությունն ու հոժարությունը հրապարակայնորեն՝ ի լուր հավաքված բազմականների, քահանաների և հավատացյալ ժողովրդի: Մի քանի կանոնների և կաթողիկոսական կոնդակների մեջ պահպանված վկայությունները բավարար են՝ ցույց տալու այն կարևորությունը, որ ունեցել են փոխադարձ համաձայնությունն ու հոժարությունը Եկեղեցու ավանդության մեջ:

Սահակ Պարթևի Իէ կանոնի մեջ քահանաներին արգելվում է առանց փոխադարձ համաձայնության Պսակն օրհնել.

«Պատուէր արարէք նոցա, զի տղայոց կանայս մի՛ խաւսեսցին, եւ մի՛ կատարելոցն՝ առանց զիրեարս տեսանելոյ միմեանց հաճութեամբ. եւ դուք քահանայք, տղայոց ամենեւին իսկ պսակ մի՛ աւրհնէք մինչեւ ի կատարումն հասակի: Իսկ կատարելոցն որոց զմիմեանս ոչ իցէ տեսեալ ի հաճոյս ինքեան, պսակ մի՛ իշխէք դնել առանց քննութեան եւ ցնոսին ինքեանս հարցանելոյ՝ գուցէ բռնադատութեամբ ծնաւղացն ակամայ հաւանեալ իցեն...»[41]:

Ներսես կաթողիկոսին և Ներշապուհ եպիսկոպոսին վերագրվող կանոնախմբում (Կանոն ԻԴ), ինչպես նաև Բարսեղ Կեսարացու կանոններում արգելվում է առանց կնոջ և տղամարդու փոխադարձ համաձայնության կատարել Պսակի խորհուրդը[42]: Եկեղեցու կանոնադրությունը հոգացել է նաև այդ փոխադարձ համաձայնությունն ու մտերմությունն ապահովելու համար՝ հաստատելով Նշան օրհնելու կարգը: Ինչպես արդեն տեսանք, այս կարգը կազմել է Սուրբ Պսակի խորհրդի մի մասը և նպատակ է ունե-

---

[40] **Վահան Ծ. վրդ. Բաստամյանց**, նշվ. աշխ., էջ 43-69 :
[41] «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա, աշխատ. Վ. Հակոբյանի, Երեւան 1964, էջ 382:
[42] Անդ, էջ 347-348:

ցել կարգավորելու ապագա ամուսինների նախաամուսնական կապը[43]: Նշանի օրհնության կարգով Եկեղեցին կանոնական ուժ է տվել նաև նախաամուսնական սեռական հարաբերությունների արգելքին՝ պարտավորվածության և միմյանց նվիրվելու ուխտով՝ նշանով կապելով երիտասարդ զույգին:

Հայոց Եկեղեցու երկու մյուս մեծագործ վարդապետները՝ Մխիթար Գոշն ու Գրիգոր Տաթևացին, նույնպես կարեւորում են փոխադարձ համաձայնությունը՝ իբրև Պսակի վավերականության պարտադիր պայման[44]: Փոխադարձ համաձայնության խնդիրն ավելի սրվում է ԺԹ դարում, երբ Հայաստանի տարբեր գավառներում սովորական երևույթ է դառնում ծնողների համաձայնությամբ մատաղահասակ երեխաների ամուսնությունը: Գևորգ Դ Կաթողիկոսի երկու կոնդակներ այս խնդրի արծարծման լավագույն վկայություններն են:

Կոնդակ, 1869 թ.

«Գործակալ քահանայի պաշտօնն է յեկելոց ի նշանադրութիւն տեղեկանալ ընդ գանձապետի թէ՝ երկոքին, այսինքն՝ տղայն եւ աղջիկն, հաւա՞ն իցեն միմեանց…Նախքան զնշանադրութիւնն հարկ է ծնողաց կամ ազգականաց նշանելեաց յայտնել ծիսական քահանայիցն զդիտաւորութիւնս իւրեանց: Յորոց (ի քահանայից) իւրաքանչիւրն պարտի երթալ առ խոստովանորդիս իւրեանց, այսինքն՝ քահանայ աղջկան առ աղջիկն եւ քահանայ տղային առ փեսայացուն, եւ առանձին լսել ի բերանոյ նոցին զկատարեալ հաւանութիւն իւրեանց ի մտանել յամուսնութիւն»[45]:

Կոնդակ, 1875 թ.

«Ուստի առ անվրեպ հասնելոյ բարոյական վախճանի ամուսնութեան՝ հարկ ի վերայ կայ, զի լիցի այն իւրաքանչիւրոցն կամաց ազատութեամբ եւ կատարեալ հաւանութեամբ, առանց ստիպողական միջոցաց ի կողմանէ ազգականաց եւ այլոց, քանզի որ բռնութեամբ կատարի արտաքոյ գոլով բնական կարգի օրինաց, ոչ կարէ բնաւ ժամանել իւրումն նպատակի»[46]:

Գաղտնի կատարված Պսակի մյուս պատճառներից էր նաև առևանգությունը, որը ճնշող մեծամասնությամբ իրականացվում էր կնոջ կամքին

---

[43] Պետք է նշել, որ Նշանօրհնեքի կարգն առկա է ուղղափառ ավանդության գրեթե բոլոր Եկեղեցիներում, հմմտ. **J. Meyendorff**, նշվ. աշխ., էջ 29-33:

[44] **Մխիթար Գոշ**, Գիրք դատաստանի, աշխ. Խ. Թորոսյանի, Երեւան, 1975, էջ 112, **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք հարցմանց, էջ 609:

[45] **Վահան Ծ. վրդ. Բաստամյանց**, նշվ. աշխ., *Փորձ* ամսագիր Ժ, 1880, էջ 40:

[46] Տե՛ս «Արարատ» Ը, 1875, էջ 307-308:

հակառակ: Եկեղեցին վաղ միջնադարից սկսած դատապարտել էր առևանգմամբ կատարված ամուսնությունը: Լուսավորչի անունով մեզ հասած վաղ շրջանի կանոնախմբի Թ կանոնն արգելում է առևանգումը՝ պսակն անվավեր համարելով և լուծել տալով.

«Թէ ոք առեւանկ արասցէ՝ պսակն անվաւեր լիցի եւ պսակեալն ում կամիցի լիցի»[47]:

Առևանգությամբ իրականացած ամուսնությունն անվավեր է համարում նաև Թադեոս առաքյալի անունով պահպանված ԼԲ կանոնը: Այս խնդրի մանրամասն քննարկմանն է նվիրված Շահապիվանի ժողովի է կանոնը.

«Ոյք առեւանկ առնիցեն, կալցին զկինն եւ անդէն տացեն ցհայր եւ ցմայր իւր եւ տուգան տացեն փոխանակ անարգանացն եթէ ազատ է՝ ՌՄ դրամ, եթէ շինական է՝ Ո: Եւ որք հրոսն երթեալ էին աւգնականք սուտ փեսային՝ առ այրն Ճ դրամ տուգանեսցին, եւ զհրոսին դրամն զկէսն յեկեղեցի տացեն եւ զկէսն կարաւտելոց: Ապա եթէ սուտ փեսայն ընդ աղջկանն պոռնկեցաւ առանց պսակ դնելոյ՝ յեկեղեցի տուգան կալցին Ճ դրամ, զի զպսակն աւրհնութեան անարգեաց, Գ ամս յապաշխարութեան կացցէ: Ապա եթէ երիցու ուրուք գաղտ պսակ եդեալ իցէ առանց հաւր եւ մաւր աղջկանն, երէցն զքահանայութիւնն չիշխէ պաշտել եւ Ճ դրամ տուգան կալցին եւ կարաւտելոց տացեն եւ պսակն, զոր եդ, անվաւեր լիցի: Ապա եթէ յետ այսր խռովութեան եւ տուգանաց, դարձեալ ի հաւանութիւն գան կամաւք աղջկանն եւ ծնողացն, եւ թէ յառաջ պոռնկեալ են՝ պսակ մի՛ աւրհնեսցի, այլ իբրեւ զերկակին ուռ տեառնագրեալ դիցի ի գլուխ. ապա եթէ կուսան կացեալք են՝ ըստ աւրինին պսակ աւրհնեսցի: Եթէ ազատ եւ եթէ շինական՝ կանոն այդ կացցէ»[48]:

Վերջապես, առևանգմամբ կայացած մի ամուսնության լուծման փաստի ենք հանդիպում Մատթեոս Բ Իզմիրլյան կաթողիկոսի Հ$^{մր.}$ 304 կոնդակում, որով նա ամուսնուց բաժանվելու իրավունք է տալիս Թելլի Մելիք-Բաբախանյանին՝ հաշվի առնելով ամուսնության՝ բռնությամբ իրագործված լինելու փաստը[49]:

Տղամարդու և կնոջ ամուսնական հարաբերություններում համահավասար իրավունքների առկայությունը փաստող վկայություններ են նաև ամլության դեպքում կնոջից բաժանվելու արգելքը և պորտի ճյուղագրության մեջ երկու սեռերի հավասարության սկզբունքը:

---

[47] «Կանոնագիրք հայոց», էջ 246:
[48] Անդ, էջ 441:
[49] **Մեր սրկ. Եսայան**, նշվ. աշխ., էջ 16-17:

Ըստ առաջինի, Պսակի խորհրդով սրբագործված կին-տղամարդ փոխհարաբերությունն անլուծանելի է նույնիսկ կնոջ կամ տղամարդու ամլության պարագային: Ընդհանրապես, արժե այս առումով դիտարկել, թե արդյոք լուծանելի՞ է ամուսնությունն ըստ Հայ եկեղեցական իրավունքի: Քիչ վեր Քրիստոսի խոսքերը մեջբերելով՝ ակնարկեցինք, որ քրիստոնեական բարոյականության համաձայն, բացի պոռնկության դեպքից, ամուսնությունն անլուծելի է համարվում: Դառնանք այժմ դրա անդրադարձին հայ կանոնական մտքի զարգացման մեջ:

Պսակի անվավերության պատճառներն են՝

ա. ազգակցություն կամ չհասություն.
բ. նշանադրական չհասություն.
գ. անբուժելի տկարություն (օր.՝ սեռական անկարողություն).
դ. բռնության գործադրում.
ե. պոռնկություն (իրար հետ) պսակից առաջ.

Պսակը լուծելու մյուս հնարավոր դեպք է նաև մահը, ըստ հետևյալ յոթ դեպքերի՝

ա-բ. ուխտավորություն և կրոնավորություն (ամուսինների փոխադարձ համաձայնությամբ).
գ. անհավատություն.
դ. այսահարություն և անկարողություն (անբուժելի և անմերձենալի).
ե. անբուժելի բորոտություն (անմերձենալի).
զ. անդարձ անջատում.
է. կորստական, անզեղջ պոռնկություն[50]:

Առաջին հինգ պատճառների մեջ պետք է առանձնացնել պարտքի հատուցման գաղափարը (Ա Կորնթ. է 3), որով հաշվի է առնվում սեռական տկարությունն ու անհամաչափությունը: Մնացած դեպքերը կապված են հոգևոր կամ մարմնավոր մահվան հետ, որով և միմիայն կարելի է լուծել օրինական Պսակը:

Ամլության պատճառով արգելվում է Պսակ լուծել, որովհետև ամուսնության նպատակը միայն որդեծնությունը չէ, և հետո դրանով կարելի է պատճառ դառնալ պոռնկության: Այս առումով հատկանշական է Հովհան Մանդակունու «Ճառ վասն կնաթողաց» երկը, որտեղ հստակ և մանրամասն կերպով լուսաբանվում է սույն խնդիրը[51]: Արգելքների ենք հանդիպում նաև Սուրբ Աթանաս Ալեքսանդրացու անունով մեզ հասած կանոն-

[50] **Արշակ Տեր-Միքելյան**, նշվ. աշխ., էջ 162-163:
[51] Տե՛ս Հավելված:

ներում (ՕԵ, ՕԶ, ՕԷ, ՕԹ, ԿԳ) և Շահապիվանի ժողովի կանոններում (Գ, Դ, Ե)[52]: Գրիգոր Տաթևացին, Պսակը դիտարկելով իբրև խորհուրդ, հետևյալ կերպ է բացատրում արգելքը.

«Հրամայէ Քրիստոս, թէ. «Զոր Աստուած զուգեաց եւ միացոյց՝ մարդ մի՛ մեկնեսցէ: Եւ որ զկին իւր արձակէ, նա տայ նմա շնալ: Եւ թէ այլ մարդ զարձակեալն առնու՝ շնութիւն է նմա: Փակեաց թէ ամենեւին ոչ բաժանի օրինեալ պսակն մինչ ի մահ: Զի որպէս քահանային օծումն ի Հոգւոյն ոչ բաժանի յաւիտեան, եւ պսակին օրինութիւնն՝ որ ի մարմինն է՝ ոչ բաժանի մինչեւ ի մահ մարմնոյն: Իսկ որ խտրոց դնէ թէ առանց բանի պոռնկութեան, զայն ցուցանէ որ պատճառաւ իրիք կամ պոռնկութեամբ կամ այլ ինչ յորժամ բաժանին, առանց ամուսնութեան մնասցեն թէ երկուքն են բաժանմանն պատճառ, մինչեւ հաշտեսցին: Եւ թէ մինն է պատճառ՝ որ եւ իցէ թէ այրն եւ թէ կինն, առանց ամուսնութեան մնասցէ, եւ միւսն զուգեսցի այլոյ որ չէր պատճառ»[53]:

Ազգակցական կապի ճյուղագրումը հաշվելու պարագային Եկեղեցու որոշ հայրեր և կանոններ հավասար իրավունքների տեսանկյունից են դիտարկում երկու սեռերի ներկայացուցիչներին: Բանն այն է, որ Պսակի վավերականության համար պետք է ամուսնացող կինն ու տղամարդն իրարից մինչև «չորս պորտ»՝ չորս ծնունդ հեռու լինեն: Այս ճյուղագրման մասին մանրամասն խոսում է Հովհաննես Երզնկացի վարդապետը (ԺԲ-ԺԳ դդ.). «…ի չորս պորտն անցանի եւ ի հինգ ապա խնամենան…վասն զի չորս տարերացս պարտին հեռանալ ի միմեանց որ՝ ամենեւին սպառի արիւն ազգականութեան եւ ապա դարձեալ խնամենան որ չլինի արիւն մերձաւորութեան…»[54]: Նույն գաղափարի առաջին արծարծողներից մեկն է Ներսես Շնորհալին (1166-1173) իր Ընդհանրական թղթում[55]: Այս մարմնական ճյուղագրումները հստակեցնելու ճանապարհին Հայոց Եկեղեցին այն բացառիկներից է եղել, որ պորտի հաշվման մեջ տարբերություն չի դրել արու և էգ սերունդների միջև: Առաջին անգամ Հակոբ Ղրիմեցու «Յաղագս ազգականութեանց բաժանման» երկում է, որ հատուկ շեշտվում է այս պայմանը. «…զի չկայ զանազանութիւն ի յարու եւ յէգն որ՝ չի խաբուիս»[56]: Թերևս սխալ չի լինի նկատել, որ Հակոբ Ղրիմեցին հնագույն մի ավանդության հիման վրա է նման եզրակացության հան-

[52] «Կանոնագիրք հայոց», էջ 314, 432-433:
[53] «Գիրք հարցմանց», էջ 401:
[54] **Վահան Ծ. վրդ. Բաստամյանց**, նշվ. աշխ., *Փորձ* ամսագիր Դ, 1881, էջ 74:
[55] Անդ, էջ 85:
[56] Անդ, էջ 74: Տե՛ս նաև «Յակոբ Խրիմեցին եւ իր «Յաղագս ազգականութեանց բաժանման» գրչագիրը», Բազմավէպ 1945:

գում: Ի վերջո, հայ հին կանոնական ավանդության համաձայն, «ճիւղագրութեան մեջ հայրը եւ մայրը համարվում էին մեկ մարմին եւ հեղինակ՝ հավասարազօր իրաւունքներով որդեծնութեան»[57]: Ճյուղագրության հարցն իսպառ ներկայացնելու համար բերենք մի քանի օրինակներ ոչ վաղ անցյալի եկեղեցական կյանքից: Ընդհանրապես, ճյուղագրության մեջ խնամիական կապի թույլատրելիությունը տատանվել է «յոթ և չորս պորտ» հասկացությունների միջև: Ի դարի սկզբին Խրիմյան Հայրիկը հստակ սահմանում է չհասության հարցի լուծումը՝ թուլատրելով «պսակաց եօթերորդ աստիճանի ազգակցութեան, հինգերորդ աստիճանի խնամիութեան եւ երրորդ աստիճանի կնքաւորութեան»[58] : Այս որոշումն ուժի մեջ է եղել մինչև 1919թ., երբ Գևորգ Ե-ն կարգալույծ է հռչակել Տ. Հակոբ քահանային, որն ամուսնացրել է միմյանցից վեց աստիճան ազգակցական չհասություն ունեցող մի զույգի[59]: Ի վերջո, 1922թ. նոյեմբերի 11-ին նույն Գևորգ Ե-ի կոնդակով, հաշվի առնելով հայ ժողովրդի ունեցած անդառնալի մարդկային կորուստները, որոշվում է ազգակցական հինգ և խնամիական չորս աստիճանի դեպքում պսակ կատարել և վերացնում է հոգևոր ազգակցության արգելքը: Սա հայ իրականության մեջ վերջին անդրադարձն է նմանատիպ հարցերին, չնայած որ դրանք այսօր էլ, առավել քան երբևէ արդիական են՝ մանավանդ հոգևոր ազգակցության պարագային:

ՀԱՎԵԼՎԱԾ I

[57] **Վահան Ծ. վրդ. Բաստամյանց**, նշվ. աշխ., *Փորձ* ամսագիր Ե-Զ, էջ 33:
[58] **Մինը սրկ. Եսայան**, նշվ. աշխ., էջ 31:
[59] Նույն տեղում:

Գենդերային հավասարության և գենդերային բռնության հարցերը միջազգային, տարածաշրջանային և Հայաստանի Հանրապետության իրավական փաստաթղթերում

1. Միջազգային և տարածաշրջանային նախաձեռնություններ

1.1. Գենդերային հավասարության հարցերը ՄԱԿ-ի իրավական փաստաթղթերում

Մարդու իրավունքներին վերաբերող միջազգային հիմնարար փաստաթղթերը խարսխված են, ի թիվս այլոց, մի կարևոր սկզբունքի՝ գենդերային հավասարության կամ անխտրականության վրա: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը հատուկ դրույթ է բովանդակում (3-րդ հոդված) տղամարդկանց ու կանանց իրավունքների հավասարության վերաբերյալ. **«Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են տղամարդկանց ու կանանց համար ապահովել նախատեսված քաղաքացիական ու քաղաքական բոլոր իրավունքներից օգտվելու հավասար իրավունք»**:

Այսուհանդերձ, գործնական կյանքը ցույց տվեց, որ իրական հավասարության հասնելու համար կանայք առանձնահատուկ պաշտպանության և արմատական ձեռնարկումների կարիք ունեն, կանանց նկատմամբ խտրականությունը ամենուրեք և ամեն ոլորտում էապես խոչընդոտում է այն իրավունքների իրականացմանը, որոնք առհասարակ վերապահվում են մարդուն:

1953 թ. ընդունվեց **«Կանանց քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան**, որը կանանց և տղամարդկանց դրությունը հավասարեցնելու նպատակ է հետապնդում քաղաքական իրավունքների տնօրինման և օգտագործման հարցում: Ըստ կոնվենցիայի, կանայք տղամարդկանց հետ հավասար պայմաններում, առանց որևէ արգելքի ու խտրականության բոլոր ընտրություններում քվեարկելու, ընտրվելու, պետական ծառայության պաշտոններ զբաղեցնելու և ազգային օրենքով սահմանված բոլոր հասարակական-քաղաքական գործառույթները կատարելու իրավունք ունեն: Հայաստանի Հանրապետությունն այս կոնվենցիային միացել է 2007 թ.:

Հայաստանի Հանրապետությունը 1994 թ. միացել է **«Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին» կոնվենցիային** (1957 թ.), որով երաշխա-

վորվում է կնոջ քաղաքացիությունը պահպանելու իրավունքը: Այս կոնվենցիան վավերացնող յուրաքանչյուր պետություն համաձայնում է, որ «իր քաղաքացիներից որևէ մեկի և օտարերկրացու ամուսնությունը, նրանց ամուսնալուծությունը, ամուսնության ընթացքում ամուսնու կողմից քաղաքացիությունը փոխելն ինքնաբերաբար չեն ազդում կնոջ քաղաքացիության վրա»:

Աշխատանքի և զբաղվածության ոլորտում սեռերի հավասարության նորմերն ամրագրված են Աշխատանքի միջազգային կազմակերպության **«Համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրության մասին»** (1951 թ., ՀՀ-ն միացել է 1993 թ.), **«Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին»** (1964 թ., ՀՀ-ն միացել է 1993 թ.) և մի շարք այլ կոնվենցիաներով, իսկ կրթության ոլորտում անխտրականության նորմերն ամրագրված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի **«Կրթության ոլորտում խտրականության դեմ պայքարի մասին»** կոնվենցիայում:

1967 թ. Միավորված ազգերի կազմակերպությունն ընդունեց **«Կանանց նկատմամբ խտրականության վերացման մասին»** հռչակագիրը, որով համոզմունք հայտնվեց, որ բովանդակ աշխարհի լիակատար զարգացումը, բարեկեցությունը և խաղաղության հաստատումը պահանջում են կանանց առավելագույն մասնակցություն բոլոր ոլորտներում՝ տղամարդկանց հավասար, իսկ կանանց նկատմամբ խտրականությունը, դրա հետևանքով տղամարդկանց հետ նրանց իրավահավասարության մերժումը կամ սահմանափակումը որակվեց «իր հիմքում անարդարու- թյուն և հանցագործություն մարդկային արժանապատվության դեմ»:

ՄԱԿ-ի՝ գենդերային հավասարության ապահովմանը նվիրված բազմաթիվ փաստաթղթերի շարքում ամենահամապարփակը, հիմնարարն ու բեկումնայինը 1979 թ. ընդունված **«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին»** կոնվենցիան է, որում առաջին անգամ ձևակերպվեց կանանց իրավունքների՝ որպես մարդու իրավունքների անկապտելի մասի գաղափարը: Կանանց իրավունքների իրականացման հիմք ընդունվեց նրանց նկատմամբ խտրականության իսպառ վերացումը: Ընդունվեց ևս մի կարևոր սկզբունք, որը հետագայում ուղենիշ դարձավ իրավահավասարության մեխանիզմների զարգացման ճանապարհին. «խտրականություն» հասկացությունը վերաբերում է կանանց և տղամարդկանց ոչ միայն իրավական հավասարությանը, այլև փաստացի դրությանը:

Կոնվենցիայի 5-րդ և 10-րդ հոդվածներում նշվում է, որ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր համապատասխան միջոցները, որպեսզի փոխվեն կանանց ու տղամարդկանց վարքագծի՝ այս կամ այն սեռի ստորադասության կամ առավելության, նախապաշարումների կամ սովորույթների վրա հիմնված սոցիալական և մշակութային մոդելները:

Կոնվենցիայով ամրագրվեց նաև կանանց և տղամարդկանց կարգավիճակի փաստացի հավասարության հասնելու նպատակով կանանց համար ժամանակավոր հատուկ միջոցների թույլատրելիությունը՝ հաստատելով, որ դրանք չպետք է դիտվեն խտրականություն: Միաժամանակ ընդգծվեց, որ դրանք ոչ մի դեպքում չպետք է հանգեցնեն անհավասար կամ տարբերակված չափորոշիչների. «…Այդ միջոցները կվերացվեն, երբ հնարավորությունների և վերաբերմունքի հավասարության նպատակներն իրականություն դառնան» (4-րդ հոդված):

ՀՀ Ազգային Ժողովը կոնվենցիան վավերացրել է 1993 թ.: Կոնվենցիային միանալով՝ պետությունը պարտավորվում է միջոցներ ձեռնարկել կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերը վերացնելու և հավասար հնարավորություններ ապահովելու համար, այդ թվում՝

- տղամարդկանց և կանանց հավասարության սկզբունքի ընդգրկում օրենսդրական համակարգում, բոլոր խտրական օրենքների արգելում և կանանց նկատմամբ խտրականությունն արգելող օրենքների ընդունում.
- խտրականությունից կանանց գործուն պաշտպանությունն ապահովող մեխանիզմների ստեղծում.
- մասնավոր անձանց, կազմակերպությունների կամ ձեռնարկությունների կողմից կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացում:

Այն երկրները, որոնք վավերացրել են կոնվենցիան կամ միացել են դրան, պարտավոր են գործնականում կիրառել դրա դրույթները և ձևական հավասարությունից անցնել փաստացի հավասարության՝ ապահովելով արդյունքների հավասարությունը. հավասարություն, որը տարածվում է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց վրա:

Կոնվենցիան արտացոլում է երկրի առաջընթացը կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում, որը որոշվում է ոչ թե նրանով, թե ինչ է ձեռնարկում պետությունը, այլ, որ շատ ավելի կարևոր է, թե ինչ ձեռքբերումներ կան այդ գործունեության արդյունքում: Այդպիսով՝ գեն-

դերային հավասարությունը կոնվենցիայի համատեքստում որոշվում է արդյունքների հավասարությամբ:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի 17-րդ հոդվածի համաձայն ստեղծվել է Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե՝ բաղկացած 23 փորձագետներից, ովքեր ընտրվում են 4 տարի ժամկետով և գործում են անհատապես: Կոմիտեն իր նիստերը գումարում է տարին մեկ անգամ և զեկույցներ է ներկայացնում Գլխավոր ասամբլեային իր գործունեության մասին:

Կոմիտեի հիմնական խնդիրը, ըստ կոնվենցիայի 17-րդ հոդվածի, կոնվենցիայի դրույթներն իրականացնելու նպատակով պետության կողմից ձեռնարկված օրենսդրական, դատական, վարչական միջոցների մասին զեկույցների քննարկումն է: Սկզբնական զեկույցը ներկայացվում է կոնվենցիան վավերացնելուց կամ դրան միանալուց հետո մեկ տարվա ընթացքում, հետագա զեկույցները ներկայացվում են 4 տարին մեկ: Մինչ այժմ ՀՀ կառավարությունը երեք զեկույց է ներկայացրել Կոմիտեին: Երեք զեկույցների վերաբերյալ Կոմիտեն արել է ծավալուն դիտողություններ: Կանանց կապակցությամբ անհանգստությունը արտահայտված է Կոմիտեի բոլոր դիտողություններում:

Հասարակական իրավապաշտպան և կանանց կազմակերպությունները արժեքավոր աղբյուր են այս կոմիտեի համար: Անկախ կազմակերպությունների մատուցած տվյալները մեծ նպաստ են բերում համապատասխան երկրի գործունեությունը անաչառ գնահատելու գործին:

Թեպետ ակնհայտ է, թե ինչի է ուզում հասնել «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան, շատ երկրների համար պարզ չէ, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկեն, որպեսզի այն դառնա գործող փաստաթուղթ: Ուստի “ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն” կոնվենցիայի իրականացումը գնահատելու նպատակով մշակել է կոնվենցիայի որոշ բաժինների վերաբերյալ մի շարք ընդհանուր հանձնարարականներ, որոնք մեկնաբանում են երկրների պարտավորությունները որոշակի ոլորտներում և հանձնարարում են ձեռնարկել գործողություններ կամ հատուկ միջոցներ, որոնց շնորհիվ պետությունները կկարողանան լուծել գենդերային հավասարության որոշակի հիմնախնդիրներ:

1999 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց կոնվենցիայի **Կա-**
ագրությունը, որով Կոմիտեն կարող է բողոքներ ընդունել
5 Ձեռնարկ կոնվենցիայում ընդգրկված իրավունքների խախտումնե-

րի զոհերից: ՀՀ Ազգային Ժողովը Կամընտիր արձանագրությունը վավերացրել է 2006 թ., ուստի նման բողոքներ կարող են ներկայացնել նաև ՀՀ քաղաքացիները:

2000 թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն առաջին անգամ գենդերային հիմնախնդիրներին նվիրված բանաձև ընդունեց՝ թիվ **1325 բանաձևը** կանանց, խաղաղության և անվտանգության մասին, որում ընդգծվում է կանանց կարևոր դերը հակամարտությունների կարգավորման գործում և պահանջ է դրվում նորովի նայել հակամարտությունների թողած ազդեցությանը կանանց և աղջիկների վրա, կանանց դերին խաղաղության ամրապնդման գործում և խաղաղարար գործընթացի գենդերային բաղկացուցչին: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը բարձրացնում է գենդերային իրավահավասարության և կանանց իրավունքների չափորոշիչները՝ ընդլայնելով դրանց կիրառման ոլորտը և խաղաղության ու անվտանգության պահպանման գործում դրանց առանցքային դեր վերապահելով:

Անվտանգության խորհրդի թիվ 1325 բանաձևը «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայից բխող պարտավորությունների ընդլայնման տեսանկյունից չափազանց կարևոր գործիք է: Անվտանգության խորհրդի թիվ 1325 բանաձևի միջոցով կոնվենցիան կարող է կիրառվել նաև այն երկրներում, որոնք չեն միացել դրան: Ավելին, բացի կառավարական հաստատություններից, այն առնչվում է կոնֆլիկտի մասնակից բոլոր խմբերին, այդ թվում՝ զինված կազմավորումներին, ժողովրդական պաշտպանության խմբերին և զինված խմբերին:

Անվտանգության խորհրդի թիվ 1325 բանաձևը կոնֆլիկտի բոլոր փուլերի խաղաղարար բանակցությունների կամ հետկոնֆլիկտային կարգավորման բոլոր կողմերից պահանջում է կանանց իրավունքների պաշտպանություն և հարգալից վերաբերմունք: Բանաձևը, միջազգային իրավունքին համապատասխան, նաև աղջիկների և կանանց իրավունքների պահպանման պատասխանատվություն և հաշվետվություն է վերապահում նրանց:

2000թ. Միավորված ազգերի կազմակերպությունն ընդունեց **«Հազարամյակի հռչակագիրը»**՝ այդպիսով հրապարակելով XXI դարում աշխարհի զարգացման ուղենիշերը: Այստեղ նույնպես վերահաստատվեց անխտրականության սկզբունքը, իսկ մնայուն արժեքների շարքում ընդգծվեց, որ «տղամարդիկ և կանայք իրավունք ունեն ապրելու և արժանապատվորեն մեծացնելու իրենց երեխաներին՝ զերծ սովից, բռնու-

թյան, ճնշման ու անարդարության վախից»: Հավաստիացվեց, որ «ոչ մի անհատ և ոչ մի ազգ չպետք է զրկվի զարգացումից օգտվելու հնարավորությունից: Տղամարդկանց ու կանանց հավասար իրավունքներն ու հնարավորությունները պետք է ապահովված լինեն»:

Զարգացման և աղքատության վերացման ուղենիշերում շարունակ նշվում է, որ բոլոր ձեռնարկումները հավասարապես պետք է վերաբերեն երկու սեռերին, որպեսզի ստեղծվեն բարեկեցիկ կյանքով ապրելու հավասար պայմաններ, միաժամանակ շեշտվում է, որ Միավորված ազգերի կազմակերպությունն այսուհետև էլ շարունակելու է «առաջ քաշել գենդերային հավասարության և կանանց հզորացման հարցը՝ որպես աղքատության, սովի, հիվանդությունների հաղթահարմանն ու կայուն զարգացմանը նպաստող իրոք ազդեցիկ միջոց»: Վերջապես, մարդու իրավունքների, ժողովրդավարության և պատշաճ կառավարման բաժնում հատուկ նշվում է, որ Միավորված ազգերի կազմակերպությունը վճռականորեն որոշել է «պայքարել կանանց հանդեպ բռնության բոլոր ձևերի դեմ՝ ի կատար ածելով «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիան…»:

Այնուհետև ընդունվեցին Հազարամյակի ութ հիմնական նպատակները, որոնցից 3-րդը «գենդերային հավասարության օժանդակումը և կանանց իրավունքների ընդլայնումն է»:

1.2. Գենդերային հավասարության հարցերը Եվրոպայի խորհրդի իրավական փաստաթղթերում

Եվրոպայի խորհուրդը մարդու հիմնարար իրավունք է համարում կանանց ու տղամարդկանց հավասարությունը և մշտապես առաջ է տանում կանանց ազատությունը և մարդկային արժանապատվությունը պաշտպանելու, սեռերի միջև խտրականությունն արմատապես վերացնելու և հասարակական ու քաղաքական կյանքում կանանց ու տղամարդկանց հավասարակշռված ներկայացուցչություն ապահովելու գաղափարախոսությունն ու քաղաքականությունը:

Այդ գործունեության ապահովման պատասխանատվությունն ընկած է **Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի ղեկավար կոմիտեի վրա** (ԿՏՀՂԿ/CDEG), որը կազմակերպում է կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի նախարարների համաժողովները, սեմի-

նարները, կատարում վերլուծություններ և ուսումնասիրություններ, մշակում ռազմավարություններ ու իրավական նյութեր:

Կարևոր են այն նորմերը, որոնց պահպանումն երաշխավորվում և վերահսկվում է **«Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի»** և **«Եվրոպական սոցիալական խարտիայի»** մեխանիզմներով՝ անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունք, իրավունքներից և ազատություններից առանց խտրականության օգտվելու իրավունք, աշխատավոր տղամարդկանց և կանանց հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրման իրավունք և այլն:

Եվրոպայի խորհրդի մարմինները՝ Խորհրդարանական վեհաժողովը, Նախարարների կոմիտեն և Եվրոպայի տեղական ու տարածքային իշխանությունների կոնգրեսը, հրապարակել են բազմաթիվ հռչակագրեր, հանձնարարականներ ու բանաձևեր, որոնք հստակ ցույց են տալիս կանանց ազատությունը և մարդկային արժանապատվությունը պաշտպանելու, սեռերի միջև խտրականությունն արմատապես վերացնելու և հասարակական ու քաղաքական կյանքում կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացուցչության համար տարվող գիծը: Դրանք կարևոր ուղենիշեր են անդամ պետությունների համար գենդերային հավասարության հիմնախնդիրների լուծման ճանապարհին:

Հիշատակության արժանի են հատկապես ԵԽ Նախարարների կոմիտեի **«Կանանց և տղամարդկանց հավասարության մասին» հռչակագիրը** (1988 թ.), Նախարարների կոմիտեի 3 (2003) «**Քաղաքական և պետական որոշումների կայացման գործընթացին կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին»**, Խորհրդարանական վեհաժողովի 1676 (2004) «**Ընտրություններին կանանց մասնակցության մասին»**, 1700 (2005) «**Աշխատանքի շուկայում և աշխատավայրում կանանց նկատմամբ խտրականության մասին»**, 1489 (2006) «**Որոշումների կայացման գործընթացին կանանց մասնակցությունը երաշխավորող մեխանիզմների մասին»**, 1739 (2006) «**Գենդերային բյուջետավորման մասին**» և այլ հանձնարարականներ:

Սեռերի հավասարության խնդրի լուծման որոնումների մի նոր փուլ նշանավորեց 1998 թ. Եվրոպայի խորհրդի հրապարակած «**Gender mainstreaming»** զեկույցը, որ հայտնի է **«Համալիր մոտեցում կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներին»** հայերեն անվամբ: Ըստ այդ զեկույցի, «Համալիր մոտեցման էությունը գլխավորապես քաղաքականության իրականացման մեջ ներքաշված անձանց կողմից որոշումների ընդունման գործընթացների կազմակերպելը (վերակազմակերպելը),

բարելավելը, կատարելագործելն ու գնահատելն է այն նկատառումով, որ կանանց ու տղամարդկանց հավասարության հիմնախնդիրները ներառվեն բոլոր բնագավառներում ու մակարդակներում»: Այս փաստաթղթի կարևոր արժանիքն այն է, որ հստակ սահմանվեցին «Համալիր մոտեցման» քաղաքականության նպատակը, գործընթացը, առարկան և ակտիվ դերակատարները: Մյուս կարևոր առավելությունն այն է, որ համալիր մոտեցման հայեցակարգը, ըստ էության, սեռերի իրավահավասարության հասնելու նոր ռազմավարություն է, բայց չի գալիս փոխարինելու այդ նպատակով իրագործվող «ավանդական» քաղաքականությանը, առկա մեխանիզմներին ու ծրագրերին: «Երկու մոտեցումն էլ (ավանդականն ու համալիրը) պետք է կիրառվեն զուգահեռաբար, համենայն դեպս, մինչև այն պահը, երբ հասարակության մեջ գենդերային հավասարակշռության նկատմամբ սկսի ուրվագծվել բարենպաստ ընդհանուր հայտարարը»:

«Համալիր մոտեցման» կարևոր տարրերն են կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները, ժողովրդավարական ներկայացուցչությունը, տնտեսական անկախությունը և կրթության մատչելիությունը, սոցիալական անհամամասնության շտկումն ըստ պատասխանատվության բաժանման:

«Համալիր մոտեցումը» հակադրվում է ոչ թե կանանց և տղամարդկանց օբյեկտիվ տարբերություններին, այլ՝ անհավասարությանը: Ըստ այդմ, այդ տարբերությունները չպետք է բացասաբար անդրադառնան երկու սեռերի կենսապայմանների վրա և հանգեցնեն խտրականության, այլ պետք է հաշվի առնվեն տնտեսական, սոցիալական ու քաղաքական հնարավորությունների հավասար բաշխման մեջ:

1.3. Մարդու իրավունքների և կանանց հարցերի համաշխարհային և տարածաշրջանային խորհրդաժողովները և դրանց արդյունքում ընդունված հռչակագրերն ու գործողությունների ծրագրերը

Անցած դարի 50-60-ական թվականներին ՄԱԿ-ում, բացի օրենսդրական գործունեությունից, հսկայածավալ հետազոտական աշխատանքներ էին տարվում, կանանց դրության մասին տեղեկություններ էին հավաքվում աշխարհի բոլոր ծայրերից, որոնց վերլուծությունը ցույց էր տալիս, որ միայն օրենքները բավարար չեն կանանց և տղամարդկանց հավասարության հասնելու համար:

Ակնհայտ էր անհրաժեշտությունը՝ համաշխարհային հանրության ուշադրությունը սևեռելու կանանց հարցերի վրա, գտնելու արդյունավետ ձևեր և մշակելու գործնական ձեռնարկումների ռազմավարություն: Ահա, սեռերի հավասարության գաղափարախոսության երկրորդ փուլը նշանավորվեց ՄԱԿ-ի նախաձեռնած համաշխարհային խորհրդաժողովներով՝ նվիրված կանանց դրության հիմնահարցերի քննարկմանը:

Առաջին խորհրդաժողովը գումարվեց Մեխիկոյում, 1975 թվականին, որը հռչակվեց Կանանց միջազգային տարի: Այնուհետև ՄԱԿ-ը հայտարարեց Կանանց տասնամյակ: Աշխարհի տարբեր երկրներում սկիզբ առան ուսումնասիրություններ, բանավեճեր, քննարկումներ, բանակցություններ: Մեխիկոյի համաժողովը նշանավորվեց նաև նրանով, որ այստեղ սահմանվեց ՄԱԿ-ի աշխատանքների երեք առանցքային ուղղություն՝

ա. լիակատար գենդերային հավասարություն և սեռի հատկանիշով խտրականության վերացում.
բ. կանանց լիակատար ներգրավում զարգացման գործընթացներում.
գ. կանանց դերի մեծացում խաղաղության ամրապնդման գործում:

Խորհրդաժողովն ընդունեց մինչև 1980 թ. Գործողությունների ծրագիր, որի հիմնական խնդիրն էր կանանց համար հավասար մատչելիության հասնել կրթության, զբաղվածության, քաղաքականության, առողջապահության, բնակարանային ապահովման, սննդի և ընտանիքի պլանավորման ոլորտներում:

Հետևելով Մեխիկոյի խորհրդաժողովի կոչին՝ ՄԱԿ-ի անդամ 127 երկրներ տասը տարի անց ստեղծեցին կանանց դրության բարելավման ազգային մեխանիզմներ: Մեխիկոյի խորհրդաժողովի առաջարկությամբ է, որ 1976 թ. ՄԱԿ-ի համակարգում, ի լրումն Կանանց կարգավիճակի հարցերի հանձնաժողովի, որը հիմնադրվել էր դեռևս 1946 թ., ստեղծվեցին Կանանց առաջխաղացման միջազգային ուսումնական և գիտահետազոտական ինստիտուտը և Կանանց զարգացման հիմնադրամը (UNIFEM):

Երկրորդ համաշխարհային խորհրդաժողովում (Կոպենհագեն, 1980 թ.) որոշակի առաջընթաց արձանագրվեց, բարձր գնահատվեց հատկապես «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի, որպես գենդերային հավասարության խնդրի լուծման ամենակարևոր գործիքի, ընդունումը: Բայց և ընդունված Գործողությունների ծրագրում արձանագրվեցին կանանց իրավունքների և հնարավո-

րությունների անհամապատասխանությանը նպաստող այնպիսի գործոններ, ինչպիսիք են տղամարդկանց անբավարար մասնակցությունը հասարակության մեջ կանանց դերի բարձրացման գործին, քաղաքական կամքի բացակայությունը, հասարակության զարգացման մեջ կանանց ավանդի թերագնահատումը և այլն:

1985 թ. Նայրոբիում կայացած երրորդ համաշխարհային խորհրդաժողովը, որ նվիրված էր Կանանց տասնամյակի արդյունքների ամփոփմանը, ընթացավ «Հավասարություն, զարգացում և խաղաղություն» կարգախոսով և հավաստի ու մեծածավալ տեղեկատվության համակողմանի վերլուծության հիման վրա արձանագրեց, որ Կանանց տասնամյակի երկրորդ կեսի նպատակները չեն կենսագործվել: Բանավեճերի ու քննարկումների արդյունքում ձևավորվեց այն մոտեցումը, որ կանանց իրավահավասարությունն անմիջականորեն առնչվում է մարդկային գործունեության բոլոր ոլորտներին և հնարավոր չէ լուծել այդ խնդիրն առանց այդ ոլորտների համապատասխան վերափոխումների: Այդ մոտեցման հիման վրա էլ մշակվեց Նայրոբիի հեռանկարային ռազմավարությունը, որը ուղենիշ դարձավ մինչև XX դարավերջն իրականացված գործողությունների համար:

Կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման պայքարում նոր մայրուղի բացեց 1995 թ. Պեկինում կայացած չորրորդ համաշխարհային խորհրդաժողովը, որի կարևոր ձեռքբերումը կանանց հայեցակարգից սեռերի հայեցակարգին անցնելու գիտակցումն էր, այն ըմբռնումը, որ անհրաժեշտ է վերագնահատել հասարակության ողջ կառուցվածքը և դրա ներսում կանանց ու տղամարդկանց բոլոր փոխհարաբերությունները: Այդպիսով վերահաստատվում էր, որ կանանց իրավունքները մարդու իրավունքներ են, և հետևություն արվում, որ սեռերի հավասարությունը համընդհանուր հիմնախնդիր է, որի լուծումով են պայմանավորված համայն մարդկության զարգացումն ու բարգավաճումը: «Կանանց դրության բարելավումը և տղամարդկանց ու կանանց իրավահավասարության ապահովումը մարդու իրավունքների հարց է, սոցիալական արդարության ապահովման պայման և չպետք է քննարկվի առանձին՝ որպես կանանց առնչվող հարց: Դա կայուն, արդար և զարգացած հասարակության կառուցման միակ միջոցն է: Կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը և կանանց ու տղամարդկանց իրավահավասարության ապահովումը ժողովուրդների հարաբերություններում քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և բնա-

պահպանական անվտանգության հասնելու նախադրյալներ են», - նշված է Պեկինի գործողությունների ծրագրում (գլուխ III, կետ 41):

Պեկինի խորհրդաժողովն աննախադեպ էր իր ներկայացուցչությամբ և արձագանքով: Բավական է ասել, որ ներկա էին 189 երկրների 17 հազար պատվիրակներ, իսկ ոչ կառավարական համաժողովին՝ 47 հազար մասնակիցներ: Խորհրդաժողովի ընդունած Հռչակագիրը և Գործողությունների ծրագիրը, որ, ի դեպ, ստորագրել է նաև Հայաստանը, դարձան XXI դարում կանանց առաջընթացի օրակարգը: Ընդունելով Պեկինի գործողությունների ծրագիրը՝ պետությունները պարտավորվեցին գենդերային բաղադրիչը ներառել իրենց բոլոր պետական հաստատություններում, ռազմավարություններում ու ծրագրերում:

Պեկինի գործողությունների ծրագրի հիմնախնդրային ոլորտները **12-**ն են. կանայք և աղքատությունը, կանանց կրթությունը և մասնագիտական պատրաստությունը, կանայք և առողջապահությունը, բռնություն կանանց նկատմամբ, կանայք և զինված հակամարտությունները, կանայք և տնտեսությունը, կանանց մասնակցությունը ղեկավար մարմինների աշխատանքին և որոշումների կայացման գործընթացին, կանանց դրության բարելավման ինստիտուցիոնալ մեխանիզմները, կանայք և զանգվածային լրատվության միջոցները, կանայք և շրջակա միջավայրը, աղջիկները:

Պեկինյան համաժողովից հետո, 2000 և 2005 թվականներին, Նյու Յորքում տեղի ունեցան «Պեկին+5»-ը և «Պեկին+10»-ը՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հատուկ նստաշրջաններ, որոնց ընթացքում քննարկվեցին Պեկինի գործողությունների ծրագրի իրականացման ձեռքբերումները և հետագա անելիքները:

Գենդերային հավասարության խնդրին նվիրված փաստաթղթերի շարքում շրջադարձային նշանակություն ունեն 1993 թ., Մարդու իրավունքների երկրորդ համաշխարհային խորհրդաժողովում ընդունված «**Վիեննայի հռչակագիրը» և «Գործողությունների ծրագիրը»,** որտեղ ճանաչվեցին այսպես կոչված կոլեկտիվ կամ երրորդ սերնդի իրավունքները, այն է՝ խաղաղության իրավունքը, ինքնորոշման իրավունքը, առողջ շրջակա միջավայրի իրավունքը, սեռի, ազգության կամ տարիքի հատկանիշով խտրականությունից ազատ լինելու իրավունքը: Ճանաչվեցին կանանց իրավունքները՝ որպես մարդու իրավունքների անքակտելի մաս. «Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը հաստատակամորեն հռչակում է կանանց՝ բոլոր մարդու իրավունքների լիակատար գոյությունը և դա համարում կառավարությունների ու Միավորված Ազգերի Կազմակերպության առաջնահերթ խնդիրներից մեկը»:

Գենդերային հավասարության գաղափարախոսության և իրավական նորմերի սահմանման խնդրում կարևոր հանգրվան էր նաև 1994 թ.

Կահիրեում տեղի ունեցած Բնակչության և զարգացման միջազգային խորհրդաժողովը, որի արդյունքում ընդունված Գործողությունների ծրագրի 4-րդ գլուխը վերաբերում է գենդերային հավասարությանը և կանանց հնարավորությունների ընդլայնմանը: Հանձնարարվող միջոցները առնչվում են, ի թիվս այլոց, քաղաքական գործընթացներում և հասարակական կյանքում կանանց հավասար մասնակցությանը և ներկայացվածության հավասար հնարավորություններին, կանանց կրթության, մասնագիտական զարգացման և աշխատանքի տեղավորման խրախուսմանը, ինչպես նաև կանանց նկատմամբ բոլոր խտրական գործելակերպերի վերացմանը: Տվյալ բաժնում հատկապես ընդգծվում է տղամարդկանց առանցքային դերը գենդերային հավասարության ձեռքբերման խնդրում, քանի որ հասարակությունների մեծ մասում նրանք են իրականացնում իշխանությունը և գերակշռում կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում:

Կանանց և տղամարդկանց հավասարության իրավական նորմերի սահմանման խնդրում նշանակալի դեր են խաղացել նաև **Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի նախարարների եվրոպական խորհրդաժողովները**: Մասնավորապես չորրորդ խորհրդաժողովում (1997 թ., Ստամբուլ) ընդունված «**Կանանց և տղամարդկանց հավասարության՝ որպես ժողովրդավարության հիմնական չափանիշի մասին»** հռչակագրում մանրակրկիտ շարադրված են այն քայլերը, որոնք անհրաժեշտ են քաղաքականության ոլորտում, բոլոր կառավարական և ոչ կառավարական կազմակերպություններում սեռերի հավասարակշռված ներկայացվածություն ապահովելու համար:

Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի նախարարների հինգերորդ եվրոպական համաժողովում (2003 թ., Սկոպիե) ընդունված «**Գենդերային հավասարություն. առանցքային հարց փոփոխվող հասարակություններում»** հռչակագրում և «Գործողությունների ծրագրում» սահմանվեցին այն հիմնական խնդիրները, որոնց լուծման վրա պետք է կենտրոնացած լինի Եվրոպայի խորհրդի աշխատանքը կանանց իրավունքների պաշտպանության և աջակցության ուղղությամբ: *Դրանք են՝*

- աջակցություն կանանց և տղամարդկանց հավասար հնարավորություններին, իրավունքներին, ազատություններին և պատասխանատվությանը.
- նախազգուշացում և պայքար ընդդեմ կանանց նկատմամբ բռնության և թրաֆիքինգի.

- նպատակաուղղված գենդերային աշխատանքների ծավալում ինչպես Եվրոպայի խորհրդում, այնպես էլ ազգային մակարդակում:

1.4. Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունն (ԵԱՀԿ) ի սկզբանե մշտապես ուշադրության կենտրոնում է պահել նաև կանանց և տղամարդկանց հավասարության հարցերը:

Տղամարդկանց և կանանց հավասարության հարցերը քննարկման առարկա են դարձել ԵԱՀԿ 1980 թ. Մադրիդի, 1986 թ. Վիեննայի հանդիպումներում, Մարդկային չափման Մոսկվայի խորհրդաժողովում, 1999 թ. Ստամբուլի Բարձր մակարդակի հանդիպման, 2003 թ. և 2004 թ. Նախարարների խորհրդի տասնմեկերորդ և տասներկուերորդ հանդիպումների ընթացքում: Մասնավորապես տասներկուերորդ հանդիպման արդյունքում ընդունված Գործողությունների ծրագրում կազմակերպությունը մասնակից պետություններին, ի թիվս այլոց, հանձնարարում է՝

- ապահովել Կազմակերպության կողմից այն քաղաքականության մշակումը, որն արդյունավետորեն կնպաստի գենդերային հավասարությանը.
- ստեղծել կամ ամրապնդել գենդերային հավասարության ապահովման արդեն իսկ գոյություն ունեցող մեխանիզմները.
- կատարել և ամբողջ ծավալով կենսագործել իրենց ընդունած միջազգային նորմերն ու պարտավորությունները, որոնք վերաբերում են հավասարությանը, խտրականության արգելմանը.
- գործադրել «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան.
- «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կամ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կողմ հանդիսացող երկրները պետք է կանոնավոր կերպով և ժամանակին հաշվետվություններ ներկայացնեն համապատասխան մարմիններին և իրենց հաշվետվությունների պատրաստման գործում ներգրավեն կանանց կազմակերպություններին.

- ձեռնարկել, քաղաքացիների կյանքի անվտանգ պայմանների և օրենքի համաձայն հավասար պաշտպանության իրավունքի ապահովման հետագա գործողություններ.
- մշակել գենդերային հավասարության ապահովման քաղաքականություն և ռազմավարություն և այդպիսի քաղաքականության մեջ, ի թիվս այլ միջոցառումների, ընդգրկել գենդերային վերլուծության և մշտադիտարկման մեխանիզմ՝ գնահատելու համար գենդերային ոլորտի քաղաքականության և ռազմավարության արդյունավետությունը, որպեսզի վեր հանվեն և վերացվեն դրանց լիակատար իրականացմանը խոչընդոտող գործոնները:

Միջազգային հանրությունը հանգեց երկու կարևոր եզրակացության. սեռերի իրավունքների փաստացի հավասարության հասնելու համար անհրաժեշտ է, որ այդ մոտեցումը առկա լինի հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում ու հայեցակետերում, և երկրորդ՝ այդ նպատակին հասնելու գործում պետք է ներգրավվի ամբողջ հասարակությունը:

Այստեղից էլ երրորդ կարևոր նախապայմանը. այդ գործում ներգրավվելու համար հասարակությունը պետք է խորապես ըմբռնի խնդրի կարևորությունը, այսինքն՝ պետք է փոխվի հասարակական գիտակցությունը: Կանանց իրավունքների կամ գենդերային հավասարության գրեթե բոլոր քննարկումներում, բոլոր փաստաթղթերում մշտապես շեշտվում է մի կարևոր խոչընդոտ՝ կանանց և տղամարդկանց դերերի վերաբերյալ հանրության նախապաշարումներն ու կարծրատիպերը, որոնց վերացումը դժվարին ու տևական գործընթաց է: Դրա համար անհրաժեշտ է, որ հասարակությունը զինվի անհրաժեշտ գիտելիքներով ու տեղեկություններով:

2. Գենդերային հավասարության հարցերը Հայաստանի Հանրապետության իրավական փաստաթղթերում

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում ամրագրված է. «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնուն-

դից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»: (հոդված 14.1): Հռչակված այդ սկզբունքը պահպանվում է հանրապետությունում ընդունված բոլոր օրենքներում:

Վերը և ստորև նշված միջազգային կոնվենցիաները, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը, երկրի օրենսդրության մասն են կազմում և գերակայություն ունեն ազգային օրենքների նկատմամբ:

Ըստ **ՀՀ Ընտրական օրենսգրքի**, «ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները՝ անկախ սեռից .... ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն: Այդ հիմքերով ընտրական իրավունքի ցանկացած սահմանափակում հետապնդվում է օրենքով» (հոդված 3):

Սեռերի հավասարության սկզբունքներն ամրագրված են և **ՀՀ Աշխատանքային օրենսգրքում** (2004 թ.): Աշխատանքային հարաբերությունների կողմերը իրավահավասար են անկախ իրենց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, ամուսնական վիճակից ու ընտանեկան դրությունից և աշխատողի գործնական հատկանիշներին չառնչվող այլ հանգամանքներից (հոդված 3): Նույն հանգամանքները չեն կարող պատճառ համարվել աշխատանքային պայմանագրի լուծման համար (հոդված 114), բացի այդ, տղամարդկանց և կանանց կողմից կատարվող միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց վճարվում է նույն չափով աշխատավարձ (հոդված 178):

Աշխատանքի ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորություններն ապահովելու նպատակով Աշխատանքային օրենսգրքում նախատեսված են վերարտադրողական ֆունկցիայի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի հետ կապված մի շարք արտոնություններ և երաշխիքներ հղի կանանց և երեխա խնամող աշխատողների համար: Այսպես՝ «Աշխատանքային պայմանագիրը չի կարող լուծվել հղի կնոջ հետ հղիության ամբողջ ժամանակահատվածում, ծննդաբերության արձակուրդի և դրան հաջորդող ամսվա ընթացքում, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի հետ....» (հոդված 117):

Հղի կնոջ և երեխա խնամող աշխատողի պահանջով սահմանվում է՝

- ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթով աշխատաժամանակ (հոդված 141).
- կրծքով կերակրող մայրերին տրամադրվում են լրացուցիչ ընդմիջումներ՝ յուրաքանչյուր երեք ժամը մեկ, կես ժամով (հոդված 258, կետ 5).

- հղի կանայք և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողը կարող են արտաժամյա և գիշերային աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ (հոդված 144, 148).
- նրանց տրամարվում է նպատակային և լրացուցիչ արձակուրդ (հոդված 171, 172).
- արգելվում է նրանց ներգրավել վնասակար պայմաններով աշխատանքի մեջ (հոդված 258) և այլն:

Մինչև 18 տարեկան անձանց և կանանց՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման վերաբերյալ հսկողություն և վերահսկողություն է իրականացնում, ըստ ՀՀ **«Աշխատանքի պետական տեսչության մասին օրենքի»**, Աշխատանքի պետական տեսչությունը: Վերջինս նաև ուսումնասիրում է սեռի հատկանիշով պայմանավորված աշխատանքի ընդունման խտրականության դեպքերը և միջոցներ ձեռնարկում աշխատողների խախտված իրավունքների պաշտպանության ուղղությամբ (հոդված 10):

ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը *հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝*

- ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծվելիս կանայք և տղամարդիկ հավասար իրավունքներ ունեն.
- ամուսնության կնքման համար անհրաժեշտ է ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը (հոդված 10).
- ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, զբաղմունք, մասնագիտություն, բնակության վայր ընտրելու հարցում.
- մայրության, հայրության, երեխաների դաստիարակության և կրթության, ինչպես նաև ընտանեկան կյանքի այլ հարցեր ամուսինները լուծում են համատեղ՝ ելնելով ամուսինների իրավահավասարության սկզբունքից (հոդված 24).
- ամուսնական պայմանագիրը ամուսնացող անձանց համաձայնությունն է կամ ամուսինների համաձայնությունը, որով որոշվում են ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականություններն ամուսնության և (կամ) այն լուծվելու ընթացքում (հոդված 27):

Պեկինյան գործողությունների ծրագիրը հիմք դարձավ գենդերային հավասարությանը նպատակաուղղված ազգային մեխանիզմների որոն-

ման և ստեղծման համար: Հանրապետությունում գենդերային քաղաքականության զարգացման նպատակով 1997 թ. ՀՀ վարչապետի որոշումով ստեղծվեց հանձնաժողով՝ գենդերային քաղաքականության զարգացման ծրագրի մշակման և իրականացման նպատակով: 1998 թ ընդունվեցին ՀՀ կառավարության թիվ 242 «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման ծրագրի հիմնադրույթների մասին» և թիվ 406 «Հայաստանի Հանրապետությունում 1998-2000 թթ. կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը հաստատելու մասին» որոշումները: Այդ ծրագիրը չիրականացավ ֆինանսավորման բացակայության պատճառով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունում ձևավորվեց կանանց, ընտանիքի և երեխաների հարցերով զբաղվող վարչություն: Պեկինյան գործողությունների ծրագրի իրականացման պարտականությունները դրված են տվյալ նախարարության վրա:

2000 թ. ՀՀ վարչապետին կից ստեղծվել է Կանանց հարցերի հանձնաժողով, որը գործում է հասարակական հիմունքներով և ունի խորհրդատվական մարմնի կարգավիճակ:

Հանրապետությունում աշխատանքներ են տարվում գենդերային վիճակագրական տվյալների հավաքման, վերլուծության և վիճակագրական տեղեկագրերում գենդերային ցուցանիշներ ներմուծելու ուղղությամբ: 1999 թվականից սկսած հրատարակվում է «**Հայաստանի կանայք և տղամարդիկ»** ամենամյա վիճակագրական գրքույկը, որում զետեղվում են վիճակագրական տվյալներ առողջապահության, կրթու- թյան, սոցիալական ապահովության, աշխատաշուկայի ու զբաղվածու- թյան, իրավախախտումների մասին:

2004 թ. ապրիլին ՀՀ կառավարությունը հաստատել է **«Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիրը»**: Այն սահմանում է Հայաստանի Հանրապետության կանանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ տարվող պետական քաղաքականության սկզբունքները, առաջնահերթությունները և հիմնական ուղղությունները:

Ծրագրի առաջին բաժինը վերաբերում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը որոշումների կայացման մակարդակում և հասարակական, քաղաքական ոլորտներում:

Ազգային ծրագրի իրականացման աշխատանքների պատասխանատվությունը ՀՀ վարչապետի կարգադրությամբ դրված է յուրաքանչյուր

նախարարության փոխնախարարներից մեկի, իսկ մարզպետարաններում՝ փոխմարզպետի վրա:

ՀՀ կառավարությունը ընդունել է 2008-2012 թթ. ծրագիր, որի սոցիալական պաշտպանությանը վերաբերող բաժնում հատուկ ուշադրություն է դարձրել գենդերային հավասարության հիմնահարցերին և հասարակական, քաղաքական և տնտեսական ոլորտներում տղամարդկանց ու կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման պարտավորություն է ստանձնել:

3. Գենդերային բռնության և թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերը ՄԱԿ-ի իրավական փաստաթղթերում

Գենդերային բռնության, որպես կանանց և տղամարդկանց իրավունքների խախտման միջազգային ճանաչումը բավական նոր երևույթ է: Նախկինում այս հիմնախնդրի բացակայությունը մարդու իրավունքների քննարկումներից ու իրավական փաստաթղթերից հիմնականում բացատրվում էր նրանով, որ կանանց դեմ ուղղված բռնի գործողությունները մեծ մասամբ մասնավոր բնույթ են կրել: Համարվում էր, որ դժվար է որոշել պետության պատասխանատվության աստիճանը, օրինակ՝ ամուսնու կամ զուգընկերոջ կողմից կատարված գործողություններում: Սակայն միջազգային իրավունքի հետագա զարգացումները ցույց տվեցին, որ, եթե նույնիսկ գործողությունը կատարվում է մասնավոր անձի կողմից, միևնույն է, պետությունը պարտավոր է համապատասխան օրենսդրական կամ այլ միջոցներով ապահովել և պաշտպանել տուժող կողմի իրավունքները:

Այդ առումով նախ հարկ է անդրադառնալ **«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին»** ՄԱԿ-ի կոնվենցիային: Կանանց նկատմամբ բռնությունը քննարկվում է կոնվենցիայի 5-րդ (կարծրատիպեր), 6-րդ (թրաֆիքինգ), 10-րդ (կրթություն), 11-րդ (աշխատանք), 12-րդ (առողջություն), 14-րդ (գյուղաբնակ կանայք) և 16-րդ (ընտանեկան հարաբերություններ) հոդվածներում:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի թիվ 13 Ընդհանուր հանձնարարականի 1-ին հոդվածով **բռնությունը կանանց նկատմամբ սահմանվում է որպես խտրականություն կանանց նկատմամբ**: Գենդերային պատկանելության հիմքով բռնության դեմ պայքարելու համար պետություններին կոչ է արվում ընդունել համապատասխան օ-

ռենսդրություն, ներառյալ պատժամիջոցները, քաղաքացիական պատասխանատվությունը և փոխհատուցողական դրույթները, ինչպես նաև պատշաճ պաշտպանություն և աջակցություն ապահովել տուժած կանանց համար, այդ թվում կազմակերպել ապաստարաններ, խորհրդատվություն և վերականգնում:

Ըստ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի թիվ 19 Ընդհանուր հանձնարարականի (1992 թ.), որը վերաբերում է կանանց նկատմամբ բռնությանը, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիային միացող երկրներին առաջադրվում են հետևյալ պահանջները՝

- Բռնության մասշտաբների, պատճառների և հետևանքների, ինչպես նաև դրա կանխարգելմանն ու դադարեցմանն ուղղված արդյունավետ միջոցների վերաբերյալ տեղեկությունների հավաքում.
- Կանանց և աղջիկներին գենդերային բռնությունից պաշտպանելու համար անհրաժեշտ բոլոր իրավական և ուրիշ միջոցների ձեռնարկում, ներառյալ քրեական պատժամիջոցներ և պաշտպանության գործնական միջոցներ նախատեսող օրենսդրություն, ապաստարանների տրամադրում և խորհրդատվական օգնություն, ինչպես նաև կանխարգելման քայլեր.
- Կանանց առևտրի և մարմնավաճառության օգտագործման բոլոր ձևերի խափանում (6-րդ հոդված).
- Քարոզչական արշավների անցկացում՝ ուղղված կանանց նկատմամբ բռնությանը նպաստող արմատացած վերաբերմունքի, կարծրատիպերի և նախապաշարումների հաղթահարմանը.
- Քրեական պատասխանատվություն, քաղաքացիական պատժամիջոցներ և փոխհատուցման մասին դրույթներ նախատեսող օրենքների ընդունում՝ բռնության յուրաքանչյուր ձևից կանանց պաշտպանությունն ապահովելու նպատակով.
- Պաշտպանության տարբեր ձևերի տրամադրում (ապաստարաններ, հատուկ մասնագիտացած բուժանձնակազմի ծառայություններ, բռնության զոհերի և զոհ դառնալու վտանգի ենթակա անձանց արդյունավետ վերականգնում և խորհրդատվական օգնություն).
- Մարդկանց առևտրի և սեռական շահագործման դեմ պայքարում հատուկ կանխարգելման և պատժիչ միջոցների ներառում.

- Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի վերաբերյալ գենդերային մոտեցմամբ վարժանքների անցկացում պետական, իրավաբանական, ուժային և ուրիշ կառույցների ծառայողների համար:

1974 թ. ՄԱԿ-ն ընդունեց **«Արտակարգ իրավիճակներում և զինված ընդհարումների ժամանակ կանանց և աղջիկների պաշտպանության մասին» հռչակագիրը**՝ ուշադրություն հրավիրելով նման իրավիճակներում առանձնապես կանանց և երեխաների խոցելիության հանգամանքի և այդ առնչությամբ հատուկ միջոցների ձեռնարկման կարևորության վրա: Հռչակագրում մասնավորապես նշվում է.

«Զինված հակամարտություններում, արտասահմանյան տարածքներում կամ դեռևս գաղութատիրական իշխանության տակ գտնվող տարածքներում ռազմական գործողություններին մասնակցող պետությունները պետք է ամենայն ջանք գործադրեն, որպեսզի պաշտպանեն կանանց և երեխաներին պատերազմի ավերիչ հետևանքներից: Պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ քայլերը, որպեսզի հասնեն այնպիսի միջոցների արգելմանը, ինչպիսիք են հետապնդումը, խոշտանգումները, պատժամիջոցները, նվաստացնող վերաբերմունքը և բռնությունը հատկապես քաղաքացիական բնակչության այն հատվածի նկատմամբ, որը ներկայացնում են կանայք և երեխաները»:

ՄԱԿ-ի համակարգում խնդրո առարկայի տեսանկյունից բեկումնային է հատկապես 1993 թվականը, երբ «Վիեննայի հռչակագրում» և «Գործողությունների ծրագրում» կանանց նկատմամբ բռնությունների հարցերի շուրջ հատուկ դրույթ ընդգրկվեց, իսկ Գլխավոր ասամբլեան, քննարկելով այդ հիմնախնդիրը, ընդունեց «Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին» հռչակագիրը: Մի տարի անց, 1994 թ., ՄԱԿ-ը կանանց նկատմամբ բռնությունների գծով հատուկ զեկուցող նշանակեց (տեղեկատվություն հավաքելու և մշակելու համար):

«**Վիեննայի գործողությունների ծրագրի»** 38-րդ պարբերությունում ասվում է.

«Մասնավորապես Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն ընդգծում է հասարակական ու անձնական կյանքում կանանց նկատմամբ բռնության, սեռական ոտնձգության, շահագործման [illegible] անձանց անօրինական վաճառքի վերացման, արդարադատության [illegible] ապահովացնելիս սեռի հատկանիշով խտրականության վերացման, կանանց իրավունքների միջև հնարավոր բախումների կանխման,

6 Ձեռնարկ

այն հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքի կարևորությունը, որոնք կապված են որոշակի ավանդական կամ սովորույթներում արմատացած գործելակերպի, մշակույթով պայմանավորված նախապաշարումների և կրոնական ծայրահեղականության հետ: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը կոչ է անում Գլխավոր ասամբլեային ընդունել կանանց նկատմամբ բռնության մասին հռչակագրի նախագիծը և հաստատակամորեն կոչ է անում պետություններին պայքարել կանանց նկատմամբ բռնության դեմ՝ համապատասխան նրանց կարգավիճակին: Զինված հակամարտությունների իրավիճակներում կանանց իրավունքների խախտումները միջազգային իրավունքի մարդու իրավունքների ոլորտի և մարդասիրական իրավունքի հիմնարար սկզբունքների խախտումներ են: Այդ կարգի բոլոր խախտումները, մասնավորապես սպանությունները, պարբերական բռնաբարությունները, սեռական ստրկությունը և բռնի հղիությունը ամենավճռական միջոցների ձեռնարկում են պահանջում»:

ՄԱԿ-ի **«Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին»** հռչակագրի 1-ին հոդվածում կանանց նկատմամբ բռնու- թյան երևույթը սահմանվել է հետևյալ ձևով. «...սեռական հատկանիշով կատարվող բռնության ամեն մի գործողություն, որը ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք է պատճառում կամ կարող է պատճառել կանանց, ինչպես նաև այդպիսի գործողությունների սպառնալիքներ, հարկադրանք կամ կամայական զրկում ազատությունից՝ լինի դա հասարակական, թե անձնական կյանքում»:

Հռչակագիրը պատասխանատվություն է դնում պետությունների վրա կիրառել բոլոր հնարավոր և պատշաճ միջոցները՝ կանանց դեմ բռնությունները վերացնելու համար: Էական է այն հանգամանքը, որ պետությունները «չպետք է վկայակոչեն որևէ սովորույթ, ավանդույթ կամ կրոնական շարժառիթ՝ այդ բռնությունն արմատախիլ անելու գործում իրենց պարտականություններից խուսափելու համար» (4-րդ հոդված): Բացի այդ, հռչակագրում թվարկվում են պետությունների և միջազգային կառույցների անելիքները կանանց նկատմամբ բռնությունը նվազեցնելու և կանխելու ուղղությամբ: Ըստ այդմ, պետությունները պետք է իրենց բյուջեներում բավականաչափ հատկացումներ նախատեսեն կանանց դեմ բռնության վերացմանն ուղղված գործունեությունը ֆինանսավորելու համար:

Հռչակագիրը հանձնարարում է ՄԱԿ-ի անդամ պետություններին մանրակրկիտ քննարկել կանանց ամեն տեսակ բռնություններից

պաշտպանությանն ուղղված գործունեության համապետական պլանների մշակման հնարավորությունը կամ էլ համապատասխան դրույթներ ընդգրկել արդեն իսկ գոյություն ունեցող պլաններում: Պետությունները պետք է արձագանքեն հասարակական կազմակերպություններին, հատկապես նրանց, ում իրավասության ներքո է կանանց դեմ բռնության հարցը:

Պետություններին ի ցույց է դրվում, որ, ստեղծելով նախապատվելի միջոցառումների համակարգ, նրանք պետք է ընդունեն գենդերային փորձաքննություն անցած օրենքներ և ներդնեն համապատասխան իրավապահ գործելակերպ:

Վերջապես, պետությունները պետք է հատուկ դասընթացներ կազմակերպեն, որոնք պարտադիր լինեն այն բոլոր պաշտոնատար անձանց համար, ովքեր պատասխանատու են կանանց դեմ բռնության գործողությունների կանխման, հետաքննության, դատավարության և պատժման համար:

Հարկ է նաև բոլոր մակարդակների դպրոցներում ծրագրեր մտցնել՝ ուղղված գենդերային վարքագծային կարծրատիպերի փոփոխմանը և բռնության դեմ հակակրանքի ոգով դաստիարակությանը:

«Պեկինի գործողությունների ծրագրում» ընդգրկված 12 հիմնախնդրային ոլորտներից մեկը (չորրորդը) կանանց նկատմամբ բռնությունն է: Ծրագրի համապատասխան բաժնում «կանանց նկատմամբ բռնությունը» բնորոշվում է որպես «հավասարության, զարգացման և խաղաղության նպատակներին հասնելու ճանապարհին ընկած արգելքներից մեկը, կանանց իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում, ինչպես նաև այդ իրավունքներից և ազատություններից օգտվելու խոչընդոտ»: Թվարկվում են կանանց նկատմամբ բռնության տեսակները՝ ֆիզիկական, սեռական և հոգեբանական:

Կանանց նկատմամբ բռնության տեսակներին են վերագրվում կանանց իրավունքների խախտումները զինված հակամարտության գոտիներում (սպանություն, պարբերական բռնաբարություններ, սեռական շահագործում, հարկադիր հղիություն): Նշվում են կանանց այն խմբերը, որոնք առանձնապես խոցելի են բռնության առումով. ազգային փոքրամասնություններին պատկանող, միգրանտ, փախստական, ծեր կանայք:

Կանանց նկատմամբ բռնության հիմնախնդրի լուծման համար նախատեսված են հետևյալ ռազմավարական նպատակները՝

- Համալիր միջոցառումներ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և վերացման նպատակով.

- Կանանց նկատմամբ բռնության պատճառների ու հետևանքների և կանխարգելիչ միջոցների արդյունավետության հարցերի ուսումնասիրություն.
- Կանանց թրաֆիքինգի վերացում և օգնության ցուցաբերում այն կանանց, որոնք մարմնավաճառության ու թրաֆիքինգի հետևանքով բռնության զոհ են դառնում:

Յուրաքանչյուր ռազմավարական նպատակի ներքո մանրամասն թվարկվում են այն քայլերը, որոնք պետք է կատարեն կառավարությունները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները, ձեռնարկությունները և տարբեր հաստատություններ:

Կանանց նկատմամբ բռնության հիմնախնդիրն առանցքային տեղ է զբաղեցնում նաև **Անվտանգության խորհրդի թիվ 1325 բանաձևում**: Այն զինված հակամարտությունների բոլոր կողմերին կոչ է անում հատուկ միջոցներ ձեռնարկել զինված հակամարտության բնույթի իրավիճակներում կանանց և աղջիկներին սեռի հատկանիշով բռնություններից, հատկապես բռնաբարություններից ու սեռական ոտնձգություններից և բռնության այլ ձևերից պաշտպանելու համար: Եվ նշում է, որ բոլոր պետությունները պատասխանատվություն են կրում՝ անօրինականությանը վերջ դնելու և այն անձանց դատական պատասխանատվության ենթարկելու համար, ովքեր մեղավոր են ցեղասպանության համար, ներառյալ կանանց և աղջիկների նկատմամբ սեռական և այլ բնույթի բռնություններին առնչվող հանցագործությունները:

Գոյություն ունեցող քրեական և քաղաքացիական օրենսդրության անկատարությունը հաղթահարելու և ներընտանեկան բռնությունների մասին օրենքները կատարելագործելու նպատակով Միավորված ազգերի կազմակերպությունը նաև մշակել է «**Ներընտանեկան բռնության մասին մոդելային օրենսդրություն**» (1996 թ.), որը նախատեսված է անդամ երկրների օրենսդիր մարմինների և այն կազմակերպությունների համար, որոնք հանդես են գալիս ներընտանեկան բռնության բնագավառում հատուկ օրենսդրության ընդունման օգտին:

3.1. Գենդերային բռնության դեմ պայքարի հարցերը Եվրոպայի խորհրդի իրավական փաստաթղթերում

Վերջին տասնամյակներում կանանց դեմ բռնության և մարդկանց առևտրի հիմնախնդիրները մշտապես եղել են Եվրոպայի խորհրդի ուշադրության կենտրոնում: Այդ մասին են վկայում տասնյակ փաստաթղթերը, որոնք ընդունվել են տվյալ կազմակերպության կողմից: Բավական է միայն թվարկել դրանցից մի քանիսը՝

ԵԽ Նախարարների կոմիտեի հետևյալ հանձնարարականներն անդամ պետություններին՝

- **«Երեխաների ու երիտասարդ չափահասների սեռական շահագործման, պոռնկագրության ու մարմնավաճառու- թյան և թրաֆիքինգի մասին», Rec. (91) 11.**
- **«Երեխաներին սեռական շահագործումից պաշտպանելու մասին» Rec. (2001) 16.**
- **«Կանանց բռնությունից պաշտպանելու մասին» Rec. (2002) 5:**

ԵԽ Խորհրդարանական վեհաժողովը ներկայացրել է հետևյալ հանձնարարականներն անդամ պետություններին՝

- **«Եվրոպայում կանանց նկատմամբ բռնության մասին», 1450 (2000).**
- **«Տնային ստրկության՝ տաժանակիր աշխատանքի, օտարերկրացիների ընտանիքներում ժամանակավոր բնակության և փոստով պատվիրված հարսնացուների մասին»,1663 (2004).**
- **«Խորհրդարանները միասնական են կանանց նկատմամբ կենցաղային բռնության դեմ պայքարում», 1512 և 1759 (2006):**

Այս հանձնարարականներն ուղեցույց կարող են ծառայել այն երկրների համար, որոնք ցանկանում են շոշափելի հաջողությունների հասնել բռնության կանխարգելման գործում:

Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի շուրջ նախարարների 5-րդ եվրոպական համաժողովում (2003 թ., Սկոպիե) ընդունված **«Գենդերային հավասարություն. առանցքային հարց փոփոխվող հասարակություններում»** փաստաթղթում ընդգրկված Գործողությունների ծրագրի երեք խնդիրներից մեկը «Կանանց նկատմամբ բռնության և թրաֆիքինգի կանխարգելում և պայքար դրա դեմ»-ն է: Ելնելով այս խնդրի կարևորությունից՝ Հավասարության հարցերի ղեկավար կոմիտեն ստանձնել է հետևյալ պարտավորությունները՝

- Զարգացնել Եվրոպայի խորհրդի նորմերն ու ստանդարտները, որոնք ուղղված են կանանց նկատմամբ բռնության և թրաֆիքինգի դեմ պայքարին և կանխարգելմանը, և ապահովել այդ միջո-

ցառումների իրականացման մշտական դիտարկում.

- Զարգացնել իր աշխատանքը գենդերային բռնության որոշակի հայեցակետերի առնչությամբ՝ առաջարկելով նորմեր կամ ռազմավարություն բռնության այդ տեսակի դեմ պայքարի համար.
- Զարգացնել իր աշխատանքը «Տղամարդիկ և կանանց նկատմամբ բռնությունը» թեմայով գործունեության նոր տեսակների հիման վրա, որոնք կսահմանվեն տվյալ Կոմիտեում:

3.2. Գենդերային բռնության դեմ պայքարի հարցերը Հայաստանի Հանրապետության իրավական փաստաթղթերում

Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող որոշ օրենքներ ու օրենսդրական ակտեր պարունակում են գենդերային բռնությանը վերաբերող դրույթներ, որոնք խիստ անբավարար են: Միշտ չէ, որ ստեղծվում են անհրաժեշտ մեխանիզմներ՝ խախտումը որակելու և պատժամիջոցներ կիրառելու համար: Այդ հանգամանքը դժվարություններ է առաջացնում օրենքի կիրառության և զոհերի իրավունքների պաշտպանու- թյան խնդրում: Եվ միանգամայն օրինաչափ է, որ 2002 թ. ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն իր դիտողություններում հատուկ ուշադրություն է դարձրել ընտանեկան բռնության, մարմնավաճառության և թրաֆիքինգի խնդիրներին և հանձնարարել ՀՀ կառավարությանը մշակել թրաֆիքինգի դեմ պայքարի հատուկ ռազմավարություն:

ՀՀ օրենսդրական դաշտը աստիճանաբար կատարելագործվում է և համապատասխանեցվում միջազգային չափորոշիչներին:

ՀՀ Քրեական օրենսգիրքը բռնության ենթարկված մարդուն պաշտպանվելու և իրավունքները վերականգնելու շատ սուղ հնարավորություն է ընձեռում:

2005 թ. **ՀՀ Աշխատանքային օրենսգրքի** 221-րդ հոդվածի համաձայն, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների խախտումը կամ սեռական հետապնդումներն աշխատակիցների, ենթակաների կամ շահառուների նկատմամբ որակվում են որպես աշխատանքային կարգապահության կոպիտ խախտում, որի համար գործատուին իրավունք է վերապահվում լուծարել իրավունքը խախտողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքային օրենսգրքում ներառված են նաև հոդվածներ, որոնք արգելում են հարկադիր աշխատանքը, բռնությունն

աշխատողի նկատմամբ, մինչև 14 տարեկան երեխայի ներգրավումը աշխատանքային գործունեության մեջ, ինչպես նաև հոդվածներ, որոնք ապահովում են գործատուի գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունը:

«**Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին**» ՀՀ օրենքում ամրագրված են մարդու՝ վերարտադրողականության հետ կապված իրավունքները: Յուրաքանչյուր ոք ունի կենսական անհրաժեշտության սեռական և վերարտադրողական հետևյալ իրավունքները (հոդված 4)՝

1. ինքնուրույն տնօրինել իր սեռական ու վերարտադրողական կյանքը, եթե դա չի վտանգում այլոց առողջությունը.
2. ընտանիք կազմել, ինքնուրույն որոշել իր երեխաների թիվն ու նրանց ծնվելու ժամկետները.
3. պաշտպանված լինել ճնշման բոլոր ձևերից, այդ թվում՝ սեռական շահագործումից և բռնությունից, հարկադրական հղիությունից, աբորտից, ամլացումից, և վերարտադրողականության իրավունքների այլ խախտումներից.
4. ինքնուրույն որոշումներ կայացնել սեռական և վերարտադրողական առողջության հետ կապված բժշկական միջամտություններ ստանալիս, բացառությամբ կյանքին սպառնացող շտապ միջամտություն պահանջող իրավիճակների և օրենքով նախատեսված այլ դեպքերի:

Բեղմնականխման միջոցների օգտագործման հետ կապված՝

1. Յուրաքանչյուր կին ունի անվտանգ մայրության և անցանկալի հղիությունից ու հղիության արհեստական ընդհատումից խուսափելու նպատակով բեղմնականխման արդյունավետ միջոցներից օգտվելու իրավունք:
2. Առողջապահական ծառայություններում պտղաբերության կարգավորման միջոցների ընտրությունը հիմնվում է ամուսինների (կնոջ կամ տղամարդու) վերարտադրողական պատմության, առողջական վիճակի, տարիքի, անհատական առանձնահատկությունների ու նախապատվությունների վրա, իսկ կիրառումն իրականացվում է միայն նրանց լիակատար, ազատ և գիտակցված համաձայնությամբ (հոդվ. 8):

Բացի դրանից, յուրաքանչյուր կին հղիության արհեստական ընդհատման իրավունք ունի (հոդվ. 10):

ՀԱՎԵԼՎԱԾ II

1. Աստվածաշնչյան վկայություններ

ա. Հարությունը փոխում է պսակի իմաստը (Ղուկ. Ի 27-40, հմմտ. Մտթ. ԻԲ 23-32, Մրկ. ԺԲ 18-27).

«Մատուցեալ ոմանք ի սադուկեցւոցն, որք հակառակէին չլինե՛լ յարութեան, հարցին ցնա՝ 28 * եւ ասեն. Վարդապե՛տ՝ Մովսէս գրեաց մեզ. եթէ ուրուք եղբայր մեռանիցի՝ որոյ իցէ կին, եւ նա անորդի՛ իցէ, զի առնուցո՛ւ եղբայր նորա զկինն, եւ յարուսցէ զաւա՛կ եղբաւր իւրում: 29 * Արդ՝ եւթն եղբարք էին. եւ առաջնոյն առեալ կին, մեռաւ անորդի՛: 30 * Ա՛ռ զնա եւ երկրորդն, մեռաւ եւ նա՛ անորդի: 31 * Ա՛ռ զնա եւ երրո՛րդն: Նոյնպէս եւ իւթանեքին, եւ ո՛չ թողին որդիս: 32 * Մեռաւ եւ կինն: 33 * Արդ՝ ի յարութեանն ո՞ւմ ի նոցանէ լինիցի կին. զի իւթանեքին կալան զնա կին: 34 * Պատասխանի ետ նոցա Յիսուս՝ եւ ասէ. Որդիք աշխարհիս այսորիկ կանա՛յս առնեն՝ եւ արանց լինին: 35 * Իսկ որ արժանի լինիցին ա՛յնմ աշխարհի հասանել, եւ յարութեանն որ ի մեռելոց՝ ո՛չ կանայս առնեն, եւ ո՛չ արա՛նց լինին: 36 * Քանզի եւ ո՛չ մեռանել եւս կարեն, զի հաւասար հրեշտակա՛ց են՝ եւ որդիք Աստուծոյ. քանզի յարութեան որդիք են: 37 * Այլ զի յառնեն մեռեալք, եւ Մովսէս գուշակեաց ի մորենւոջն, որպէս ասէ զՏեառնէ Աստուծոյ Աբրահամու, եւ զԱստուծոյ Սահակայ, եւ զԱստուծոյ Յակովբայ: 38 * Եւ Աստուած չէ՛ մեռելոց՝ այլ կենդանեա՛ց. զի ամենեքի՛ն նմա կենդանի են: 39 * Պատասխանի՛ ետուն նմա ոմանք ի դպրացն՝ եւ ասեն. Վա՛րդապետ՝ բարո՛ւք ասացեր: 40 * Եւ ո՛չ եւս ոք իշխէր հարցանել զնա՝ եւ ո՛չինչ»:

բ. Ամուսնալուծություն.

«Ապաքէն ասացաւ, թէ որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն: 32 * Բայց ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան, նա տայ նմա շնալ. եւ որ զարձակեալն առնէ՝ շնայ» (Մտթ. Ե 31-32):

«Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն, փորձէին զնա՝ եւ ասէին. Եթէ արժա՞ն իցէ ումեք արձակել զկի՛ն իւր, ըստ ամենայն վնասու: 4 * Պա-

տասխանի՛ ետ նոցա եւ ասէ. Չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ հաստատեացն իսկզբանէ՝ արո՛ւ եւ է՛գ արար զնոսա՝ եւ ասէ: 5 * Վասն այսորիկ թողցէ այր՝ զհա՛յր եւ զմա՛յր՝ եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքեան ի մարմին մի: 6 * Ապա ուրեմն ո՛չ են երկու՝ այլ մի՛ մարմին: Արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ՝ մի՛ մեկնեսցէ: 7 * Ասեն ցնա. Իսկ Մովսէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ տա՛լ թուղթ մեկնելոյ՝ եւ արձակել: 8 * Ասէ ցնոսա. Մովսէս՝ վասն խստասրտութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր. այլ իսկզբանէ՝ ո՛չ եղեւ այնպէս: 9 * Բայց ասե՛մ ձեզ, զի ամենայն որ արձակէ զկին իւր՝ եւ ո՛չ վասն պոռնկութեան, եւ առնիցէ այլ՝ շնա՛յ, եւ որ զարձակեա՛լն առնէ՝ շնայ: 10 * Ասե՛ն ցնա աշակերտքն իւր. Եթէ ա՛յդպէս ինչ վնաս իցէ ընդ ա՛յր եւ ընդ կին, լաւ է՝ չամուսնանա՛լ: 11 * Եւ նա՝ ասէ ցնոսա. Ո՛չ ամենեքեան բաւական են ա՛յդմ բանի, այլ որոց տուեա՛լ է: 12 * Զի են ներքինիք՝ որ յորովայնէ՛ մաւր իւրեանց ծնան ա՛յնպէս: Եւ են ներքինիք՝ որ ի մարդկանէ՛ եղեն ներքինիք: Եւ են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկնից: Որ կարաւղն է տանել՝ տարցի՛» (Մտթ. ԺԹ 3-12):

«Իսկ փարիսեցիքն մատուցեալ փորձելո՛վ հարցանէին զնա՝ եւ ասէին, եթէ արժա՞ն իցէ առն զկին իւր արձակել: 3 * Նա՝ պատասխանի ետ նոցա՝ եւ ասէ. Զի՞նչ պատուիրեաց ձեզ Մովսէս: 4 * Եւ նոքա ասեն. Մովսէս հրաման ետ՝ գի՛ր մեկնելոյ գրել, եւ արձակել: 5 * Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ ցնոսա. Վասն խստասրտութեան ձերոյ գրեաց զպատուիրանն զայն. 6 * այլ իսկզբանէ արարածոց, արո՛ւ եւ է՛գ արար զնոսա Աստուած, եւ ասէ: 7 * Վասն այսորիկ թողցէ այր զհա՛յր իւր եւ զմայր, եւ երթիցէ՛ զհետ կնոջ իւրոյ: 8 * Եւ եղիցին երկուքն ի մարմի՛ն մի: Եւ այնուհետեւ ո՛չ են երկու՝ այլ մարմին մի՛: 9 * Արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ: 10 * Եւ ի տան դարձեալ՝ աշակերտքն զնոյն հարցին ցնա՛: 11 * Եւ ասէ ցնոսա. Եթէ այր՝ արձակեսցէ զկին իւր, եւ արասցէ այլ, շնա՛յ: 12 * Եւ կին՝ եթէ ելցէ յառնէ իւրմէ՝ եւ եղիցի առն այլո՛ւմ, շնա՛յ» (Մարկ. Ժ 2-12):

«Ամենայն որ արձակէ զկին իւր, եւ առնէ այլ՝ շնա՛յ. եւ որ զարձակեալն առնէ՝ շնայ» (Ղուկ. ԺԶ 18):

«Այլ կանամբեացն պատուիրեմ, ո՛չ ես՝ այլ Տէր. կնոջ յառնէ մի՛ մեկնել: 11 * Ապա եթէ մեկնեսցի, անա՛յր մնասցէ, կամ անդրէ՛ն ընդ առն իւրում հաշտեսցի. եւ առն՝ զկին իւր մի թողուլ: 12 Բայց այլոց ե՛ս պատուիրեմ, ո՛չ եթէ Տէր. եթէ ոք եղբայր՝ կին ունիցի անհաւատ, եւ նմա հաճոյ իցէ բնակիլ ընդ նմա, մի՛ թողցէ զնա: 13 * Եւ կին որ ունիցի այր անհաւատ, եւ նմա կա՛մ իցէ բնակել ընդ նմա, մի՛ թողցէ զայրն. 14 * զի սո՛ւրբ է այրն ան-

հաւատ, կնա՛ւն. եւ սուրբ է կինն անհաւա՛տ, արա՛մբն. ապա թէ ոչ՝ որդիքն ձեր պի՛ղծ են. բայց այժմ սո՛ւրբ են: 15 * Ապա եթէ անհաւատն մեկնիցի, մեկնեսցի՛. զի ո՛չինչ հարկ ի վերա՛յ կայ եղբաւրն կամ քեռն յայնպիսի իրս. քանզի ի խաղաղութի՛ւն կոչեաց զմեզ Աստուած: 16 * Զի՞ գիտես կին դու՝ եթէ զայր քո ապրեցուսցես. կամ զի՞ գիտես ա՛յր դու՝ եթէ զկին քո ապրեցուսցես» (Ա Կորնթ. ԺԷ 10-16):

գ. Հիսուս իր ներկայությամբ պատվում է հարսանիքը (Հովհ. Բ 1-11).

«Եւ յաւո՛ւրն երրորդի, հարսանի՛ք էին ի Կանա գալիլեացւոց. եւ ա՛նդ էր մայրն Յիսուսի: 2 * Կոչեցա՛ւ եւ Յիսուս եւ աշակերտքն նորա ի հարսանիսն: 3 * Եւ ի պակասել գինւոյն, ասէ մայրն ցՅիսուս. Գինի՝ ո՛չ ունին: 4 * Եւ ասէ ցնա Յիսուս. Զի՞ կայ ի՛մ եւ քո՝ կի՛ն դու, չե՛ւ է հասեալ ժամանակ իմ: 5 * Ասէ մայրն նորա ցսպասաւորսն. Որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջի՛ք: 6 * Ա՛նդ էին թակոյկք կճեայք վեց՝ ըստ սրբութեանն հրէից. տանէին մի՛ մի ի նոցանէ մա՛րս երկուս կամ երիս: 7 * Ասէ ցնոսա Յիսուս. Լցէ՛ք զթակո՛յկսդ ջրով: Եւ լցի՛ն զնոսա մինչեւ ի վեր: 8 * Եւ ասէ ցնոսա. Արդ՝ առէ՛ք՝ եւ բերէ՛ք տաճարապետիդ: Եւ նոքա՝ բերին: 9 * Եւ իբրեւ ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի՛ եղեալ, եւ ո՛չ գիտէր ուստի իցէ. բայց սպասաւորքն՝ գիտէին որք արկին զջուրն: Խաւսի՛ ընդ փեսային տաճարապետն, 10 * եւ ասէ. Ամենայն մարդ՝ զանոյշ գինի յառաջագո՛յն պաշտէ. եւ յորժամ արբենան, յա՛յնժամ զյոռին. դու՝ պահեցեր զանո՛յշ գինիդ մինչեւ ցայժմ: 11 * Զա՛յս արար սկիզբն նշանաց Յիսուս ի Կանա գալիլեացւոց, եւ յայտնեա՛ց զփառս իւր. եւ հաւատացի՛ն ի նա աշակերտքն նորա»:

դ. Պասկի Սուրբ խորհուրդը (Եփես. Ե 21-33).

«Հնազանդ լերուք միմեանց երկիւղիւն Քրիստոսի: Կանայք իւրեանց արանց հնազանդ լիցին իբրեւ Տեառն: Զի այր է գլուխ կնոջ, որպէս եւ Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, եւ ինքն է Փրկիչ մարմնոյ: Այլ որպէս եկեղեցին հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպէս եւ կանայք՝ իւրեանց արանց յամենայնի: Արք, սիրեցէք զկանայս ձեր, որպէս եւ Քրիստոս սիրեաց զեկեղեցի, եւ զանձն իւր մատնեաց վասն նորա. Զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին բանիւ. Զի կացուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ արատ կամ աղտեղութիւն կամ այլ ինչ յասպիսեաց, այլ զի իցէ սուրբ եւ անարատ: Նոյնպէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս իբրեւ զիւրեանց մարմինս. որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ. Զի ոչ

ոք երբէք ատեայ զանձն իւր, այլ սնուցանէ եւ դարմանէ զնա, որպէս եւ Քրիստոս զեկեղեցի: Զի անդամք ենք մարմնոյ նորա: Վասն այսորիկ թողցէ այր զհայր եւ զմայր իւր, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքեան ի մարմին մի: Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յեկեղեցի»:

ե. Այրիների վերամուսնություն (Ա Կորնթ. է 39-40).

«Կին կապեալ է ցորչափ ժամանակս կենդանի է այր նորա. ապա եթէ ննջիցէ այր նորա, ազա՛տ է, ում կամիցի ամուսնանալ. բայց միայն տէրամբ: 40 * Բայց երանելի՛ եւս է՝ թէ այնպէս կացցէ ըստ իմո՛ւմ խրատու: Ես այսպէս համարիմ՝ թէ եւ յի՛ս իցէ հոգի Աստուծոյ» (Ա Կորնթ. է 39-40):

1. Հայրաբանական գրականություն

ա. Հովհաննես Մանդակունի, «Թուղթ կնաթողների մասին».

«Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Իր փրկող հանդիմանական խոսքերի պատճառով չարչարանքներով խաչվեց աստվածամարտ ազգի և ընդդիմացող ժողովրդի կողմից: Այժմ էլ նրանք, ովքեր հոգիների փրկության համար ուղիղ և փրկական խոսքեր են ասում, անարգվում ու բամբասվում են կարծեցյալ իմաստունների կողմից: Բայց դա իմաստություն չէ, այլ իշխանության անիրավություն, «Իմաստությունը Տիրոջ երկյուղն է» [տե՛ս Առ. Ա 7], և նա, ով գտավ Տիրոջ երկյուղը, գտավ նաև իմաստությունը: Եվ եթե [մարդ] իմաստուն լինի, չի արհամարհի իրեն օգնողին: Իմաստուն էր Մովսեսը, բայց լսեց Հոթորի խրատը [տե՛ս Ելք, ԺԸ 17-24]. հոգևոր էր Դաւիթը, բայց նրան պետք եղավ Նաթանի հանդիմանությունը [տե՛ս Բ Թագ. ԺԲ 1-13]: Իմաստունները լսում են իմաստուններին, և խոնարհները հնազանդվում են խոնարհներին: Քանզի նրանք, ովքեր մտքի աչքով ուղղապես նայեն Աստծու պատվիրաններին, և հոգևոր վարքով և ազնիվ բարքի հանդարտությամբ ստանան սրտի քաղցրություն, չեն արհամարհի այսպիսի դիտողությունները: Քանզի երանելի Պետրոսն ասում է. «Տղամարդիկ թող իմաստությամբ ապրեն իրենց կանանց հետ, հարգեն նրանց, իբրեւ դյուրաբեկ անոթի» [Ա Պետր. Գ 7]: Եվ չի հրամայում ատելությամբ հեռանալ [նրանցից], քանի որ. «Ամեն ոք, ով ատում է եղբորը, մարդասպան է» [Ա Հովհ. Գ 15], իսկ նա, ով ատում է իր կնոջը, անձնասպան է [հմմտ. Եփես. Ե 28]: Եվ նա, ով զավակ չունենալու պատճառով ատում է իր կնոջը,

չար է Աստծու առջև: Ի՞նչ օգուտ ունի որդիներ խնդրելը և անիրավ ատելությամբ հոգին կորստյան մատնելը: Քանզի Աստծու մոտ խնդիրը ոչ թե որդիներ, այլ անարատ հոգի ունենալն է: Քանզի մարգարեն նույնպես անիրավ որդիներ ունենալու մասին է ասում, թե՝ «Նրա վարձքը Աստծու մոտ է. այն է նրա որովայնի պտուղը և սուրբ զավակն ու հիշատակը» [հմմտ. Առ. Գ 13]: Նա չգիտի՝ Աստված իր ամուսնու մեղքերի պատճառո՞վ է մերժում իր որովայնին պտուղ տալ, կամ էլ այլ բարիքի համա՞ր արդյոք իրեն զավակներ չտվեց: Որովհետև շատ զավակներ կան, որ բարկացնում են իրենց ծնողներին, արյան մեջ են թաթախում նրանց կյանքը. այդ պատճառո՞վ է արդյոք, որ Աստված իրենց զավակներ չի տալիս: Մեկ այլ անիրավություն է Աստծու գործը մարդուց պահանջելը, իսկ Պողոս առաքյալն ասում է, թե՝ «Անիրավներն Աստծու արքայությունը չեն ժառանգելու» [Ա Կոր. Զ 9], որովհետև ռամիկների անիրավության համար...: Իսկ թագավորների և իշխանների անիրավության հանդիմանիչներն ու արգելողները Աստծու պատվիրաններն են:

Արդ, իսկ որդիներն ի՞նչ օգուտ ունեն հոգիների համար, երբ [Գիրքն] ասում է. «Ահա մարդն ու իր գործերը»: Արդ, մտաբերի՛ր այն ահագին Օրվա ահեղ արհավիրքները և Աստծու կամքին ընդդեմ ոչինչ մի՛ արա, որի համար սոսկալի դատաստանից հետո կմատնվես տանջանքների: Ոչ ոք թող չկարծի, թե [այն չարչարանքները] նման են այստեղի չարչարանքներին, որ երկրավոր թագավորներն են ենթարկում մահապարտներին: Այնտեղի չարչարանքները դառը լացուկոծով ու սարսափելի կսկիծներով են, աղեխարշ ցավեր՝ հրեղեն հորդահոս գետերից [ծնված], որոնք վերից պիտի հոսեն հրացայտ կայծերով հնոցի փոսերի մեջ, ուր չարչարվում ու այրվում են մեղավորների մարմինները՝ տարտարոսների խորքերում և անլույս խավարի ու թունավոր որդերի մեջ: Ոչ ոք խոսքերով նկարագրել չի կարող այդ դժնդակ աղետներն ու չարչարանքները, խղճալի վարանումները, անվերջանալի տանջանքների համար ահավոր ողբը. եթե ամբողջ աշխարհը մեծ սգով ողբա, նաև փայտերն ու քարերը լաց լինեն ողորմելի ողբի ձայներով, չեն կարող արժանապես ողբալ ու սգալ նրանց, ովքեր մատնվեցին այն չարատանջ գեհենին ու անվերջանալի տանջանքներին: Այստեղ պետք է այդ ամենի մասին հիշել և զգուշությամբ անցնել այս անցավոր, ալեկոծ ու մեղսասեր կյանքի միջով: Իսկ հավիտենականներն անվերջանալի են, պատիր և երազ են սիրելի երկրավորները և սարդոստայնից առավել տկար: Ահա այսօր և վաղը կանք, հետո չենք լինելու. երկօրյա է այս աշխարհի հանգիստը, և հավիտենական են տանջանքներն ու ամոթը: Ահա ուրիշ երկիր անցնել կա, փառքի Տիրոջը տես-

նել կա: Սրտով մեր սիրտը քննենք և այստե՛ղ մաքրենք, որովհետև քիչ օրեր հետո պիտի գնանք այն ահեղ ու չխաբվող Դատավորի մոտ, ում հայտնի են մեր գաղտնիքները, ով հանդիմանում է մեր սրտի խորհուրդները, ում ճշմարտատես ու քննող աչքից ոչ մի բան չի ծածկվում:

Ուրեմն, վախեցի՛ր այն ահեղ դատաստանից, այլևս մի՛ վիրավորվիր աներևույթ սրով և չարիքի վրա չարիք մի՛ ավելացրու՝ մարմնիդ անդամները թողնելով անվերջ տրտմության մեջ, որի համար պետք է երկար ժամանակի ապաշխարություն, եթե երկյուղած ես Աստծուց: Արդ, քահանաներին այլևս մի՛ չարչարիր և մի՛ տրտմեցրու Եկեղեցուն. մոտ է բոլորի վախճանը, փութա՛ մոտենալ Աստծուն, և Աստված քեզ կմոտենա: Ահա գող է մահվան օրը, գուցե տարաժամ հասնի: «Արթո՛ւն եղեք, ասում է [Տերը], որովհետև չգիտեք օրն ու ժամը» [Մատթ. ԻԴ 42], որ հանկարծակի, որոգայթի պես անակնկալ կհասնի քեզ վրա:

Արդ, վախեցի՛ր դու այն օրից, փութով զղջա՛ գործածդ մեղքերի համար, քանի դեռ այս աշխարհում ես, մի՛ զբաղվիր երկրավոր բաներով, որովհետև մոտ ժամանակից պիտի փոխվենք վերին քաղաք, իսկ այն ամենը, ինչ հավաքեցինք այս աշխարհում, պիտի մնա այստեղ: Որովհետև ո՛չ հետներս որևէ բան բերել ենք այս աշխարհ և ոչ էլ որևէ բան կարող ենք տանել: Մերկ մտանք այս աշխարհ և մերկ էլ պիտի վերադառնանք այստեղից: Ուստիև մշտապես հիշի՛ր այն ահագին Օրվա երկյուղը և մի՛ մոռանա բոցը, որը երբեք չի հանգչելու, շտապի՛ր փախչել սատանայի ձախ կողմից, և Աստված մշտապես կլինի քո աջ կողմում: Լսի՛ր Սուրբ Հոգուն, և Աստված կլսի քեզ այն տագնապի ահավոր Օրը: Բարեխոսության համար մի՛ փնտրիր ո՛չ չքեղ դեմքերի խոսքերը և ո՛չ էլ նախագահության պատիվը, որից քիչ վարձատրություն կստանաս: Այլ հիշի՛ր, որ կան դատաստաններ, կան տանջանքներ, պիտի լինի հարություն և բոլոր գործերի համար քննություն, և այս երկյուղով հնազանդվի՛ր, որպեսզի մեծամեծ վարձատրություններ ստանաս:

Մեծ բան է լսել Ավետարանի ձայնը՝ ի բարեխոսություն մահկանացու մարդկանց: Լսի՛ր մարգարեական հրամաններն ու առաքելական պատվիրանները՝ իբրև քեզ բարեխոսություն, և հնազանդվի՛ր աստվածային այս պատգամիս. մտաբերի՛ր մեղքերիդ բազմությունը: Ուրիշի քիչը մի՛ պահանջիր, հիշի՛ր պատվիրանների բարձր ձայնը, որ քեզ վկայեցին: Իմացի՛ր, որ և՛ խոսքերիդ, և՛ խորհուրդներիդ, և՛ քո փոքրիկ քենի համար հաշիվ պիտի պահանջվի քեզնից: Նայի՛ր այս աշխարհի կյանքին, որ անցնում է ստվերի պես, և շտապում է դատաստանի Օրը: Վախեցի՛ր սոսկալի ատյանից և Դատավորի ահավոր դեմքից և զգաստացի՛ր. դողա՛ դա-

ռը դատաստանից և անտանելի ամոթից և շտապի՛ր հաշտեցնել Նրան. զարհուրի՛ր սարսափելի տանջանքներից ու անլույս խավարից և դարձի՛ր դեպի լույսի ճանապարհը, փափագի՛ր անբավ բարիքներն ու անվերջանալի փափկությունը և հանի՛ր, հալածի՛ր քեզանից սատանայի հոգեկորույս խորհուրդները, հնազանդվի՛ր Սուրբ Հոգու հրամաններին և Աստծու բերանի խոսքին, որը քեզ ասվեց այս թղթում, որպեսզի քո հնազանդության վարձատրությունը՝ երկնքի արքայությունը, շնորհի քեզ անվերջանալի բարիքների հետ միասին, որպեսզի քեզ այստեղ առողջ մարմնով հեռու պահի ցավերից և քավված հոգով՝ մեղքերից, և քո ամբողջ հոգին, շունչն ու մարմինը անարատ պահվի մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալուստը, Որին փառք և պատիվ հավիտյանս հավիտենից. ամեն»[60]:

բ. Սուրբ Հովհան Ոսկեբերան «Ճառեր Եփեսացւոց թղթի մասին»[61]

«Տղամարդի՛կ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց Եկեղեցին» (Եփես. Ե 25):

Ահա և դուք լսեցիք հնազանդության սքանչելիության մասին. գոհաբանեցիք և հիացաք Պողոսի հետ, թե ինչպե՛ս այս հոգևոր և պատկառելի մարդը մեր ամբողջ կյանքն է բնութագրում: Եվ շատ ճիշտ արեցիք: Բայց հիմա տեսեք, թե ի՛նչ է սպասում նա ձեզանից՝ հավելումն իր խոսքերի: Նա նորից նույն օրինակն է օգտագործում.

«Տղամարդի՛կ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց Եկեղեցին» (Եփես. Ե 25):

«Լսեցիք հավատի անհրաժեշտության մասին, լսե՛ք նաև սիրո անհրաժեշտության մասին: Ուզու՞մ ես, որ քո կինը քեզ հնազանդվի, ինչպես Եկեղեցին՝ Քրիստոսին: Հանձն առ, ուրեմն, նույն նախախնամական սերը, որ Քրիստոս ունի նրա (Եկեղեցու) հանդեպ: Եվ եթե նույնիսկ հարկ լինի նրա համար կյանքդ տալու և ամեն տեսակ ցավ ու վիշտ կրելու, մի՛ մերժիր դրանք: Եվ եթե նույնիսկ այս ամենն էլ անես և դեռ ավելին, միևնույն է, չես կարող Քրիստոսի նման հոգ տանել ու խնամել: Քանզի մինչդեռ կապված ու միացած ես կնոջդ, որ սիրում է քեզ, Քրիստոս իր անձը տվեց նրանց համար, ովքեր ատում ու բամբասում էին Նրան: Արա՛ ուրեմն

---

[60] «Սուրբ Հովհան Մանդակունի, Ճառեր», թրգմն. գրաբարից՝ Մարթա Արաբյանի, Սբ. Էջմիածին 2008, էջ 171-175:

[61] Հովհան Ոսկեբերանի սույն երկի հայերեն թարգմանությունը կատարել ենք ըստ հետևյալ հրատարակության՝ **J. P. Migne**, Patrologia Graeca 62, In Epistulam ad Ephesios, Homilae XX, 136-137: Հմմտ. անգլերեն թարգմանությունը՝ **Philip Schaff** (ed.), A Select Library of the Nicene and Post-Nicene Fathers, XIII, Grand Rapids, Michigan, 1956, pp. 144-145:

կնոջդ համար այն, ինչ Նա արեց իրեն ատողների, արհամարհողների ու դատապարտողների համար: Առանց սպառնալիքի, առանց սարսափի ու վիրավորանքի, իր միակ գործիքի՝ անսահման ողորմության շնորհիվ Նա Իր Եկեղեցուն իր ոտքերի մոտ բերեց: Նույն կերպ նաև դու. երբ նույնիսկ քո կինը քեզ առերեսաբար է հարգում, արհամարհանքով ու վիրավորանքով, միայն դու՛ կարող ես նրան քեզ հնազանդեցնել բարությանդ, սիրուդ և քնքշանքիդ ուժով: Քանզի տղամարդու և կնոջ միջև ավելի մեծ կապ ու նվիրում չկա, քան այս մեկը: Ծառայիդ կարող ես ձեռնակապեր դնել՝ հնազանդեցնելու համար, բայց նա, միևնույն է, կարող է փախչել նույնիսկ այդ շղթաներից, իսկ կյանքիդ ընկերոջը, երեխաներիդ մորը, քո երջանկության աղբյուրին ոչ թե վախով ու սպառնալիքներով պետք է շղթայել, այլ՝ սիրով ու քնքշանքով: Ի՞նչ տեսարան է, երբ կինը վախից դողում է ամուսնու առաջ: Մի՞թե կարող է երջանիկ լինել ամուսինը, երբ իր կնոջ հետ ապրում է ստրուկի և ոչ թե ազատ կնոջ պես: Նույնիսկ երբ որևիցե սխալի պատճառով նեղացել եք ձեր տիկիններից, նրանց մի՛ մեղադրեք. հենց դրա՛ մեջ փորձեք հետևել Քրիստոսի օրինակին»:

գ. Անանիա Սանահնեցի «Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանին»[62]

«Եւ նա աւանիկ եւ այլ իմն նշանակ շնութեան ցուցանեմք աստ եւ թէ զինչ իցէ ասացից. աւրէնք իմն հին էին. եթէ այն, որ ատիցէ զկին իւր յինչ պատճառս եւ իցէ, մի ոք արգել հանել, եւ փոխանակ այլ ածել ի տուն: Եւ թուղթ եւս ապարհազի տալ կնոջն, զի մի՛ լիցի նմա իշխանութիւն առ այր իւր դառնալ, զի մի գոնեայ կերպարանաւք ինչ հայթայթանք լինիցին երկրորդ ամուսնութեան: Եւ թէ համարձակեալ էր զառաջինն հանել եւ այլ առնել եւ դարձեալ յառաջինն դառնալ, բազում չար խառնակութիւն լինէր, եւ միշտ զմիմեանց կանայս յապշտակէին, եւ յայտնի իսկ հանապազ շնութիւնք գործէին: Վասն որոյ հնարեցաւ զայս տալ գիր ապահարզանի. զի թէ հրամայեալ էր աւրինացն զատել ի կինն ի տան ունել, սպանանէր իսկ զատել ի կինն, զի այնպէս յանդուգն էր հրէից ազգն. զի յորդիսն ոչ խնայէին եւ զմարգարէսն կոտորէին, եւ իբրեւ ջուր հեղուին զարիւն, որչափ եւս եւ ի կանայս չխնայէին : ....Եւ վասն այնորիկ ստեպ զառաջին բանս աւրինացն յիշէ, զի ցույցցէ, թէ ոչ հակառակ ինչ, այլ յոյժ միաբան նոցին է, զի ոչ լուծանէ, այլ առաւել յուղղութիւն ածէ եւ միշտ ընդ

[62] **Անանիա Սանահնեցի**, Մեկնութիւն Մատթէի Աւետարանի, աշխ.՝ Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 141-142:

արս խաւսի. «Որ արձակէ, ասէ զկին իւր»: Թէպէտ եւ այլ ոչ առնէ, այնու իսկ արար զանձն պարտական, զի շնացաւ կնոջն ի հանելն, եւ միւսն զայլոյ հանեալն առնլովն եղեւ շնացող: Եւ զի մի ամենեւին ի կնահանն ձգիցէ զվնասն եւ ճոխանալով պատճառս տացէ կնոջն: Եւ այնմ, որ առնուկն կամիցի զկինն փակեաց զդուրս առ ի նմանէ, զի ասելովն թէ՝ «Որ զարձակեալն առնէ, շնայ կամաւ»: Սա իսկ զկինն ածէ ի զգաստութիւն եւ յամենեցունց խնու զճանապարհ նորա: Եւ զի ուսցի, թէ ամենայն հարկաւորութեամբ այնմ, որ սկզբանէ բաժին տուաւ, նմա պարտ է նստել եւ թէ յայնմանէ վրիպեսցի յայլմէ ումեքէ պատսպար մի գտցէ, զի ի հարկէ այնուհետեւ նեղիցի յանձն առնուլ իււրում ամուսնոյն հսկել: Ապա եթէ ծանրագոյն ինչ զայս համարեսցիր յիշեսցիր զառաջին բանսն, որովք երանէ զլսողսն, եւ տեսցիր, զի յոյժ դիւրին է եւ հնարաւոր, զի հեզն եւ խաղաղարարն եւ խոնարհն սրտիւ եւ ողորմածն զիարդ յանձն առնուցու զկինն հանել, որ զայլոյ կագ ի հաշտութիւն ածիցէ, զիարդ իցէ, զի ինքն ընդ իւրում կնոջն կագ գրգռիցի»:

դ. Խրատ պսակադրության (Մայր Մաշտոց ծիսարան)

«Իմացե՛ք, սիրելինե՛ր, որ պատրաստվում եք օրինավոր ամուսնության լծով միանալու, թե ահավասիկ Աստծո Սուրբ Տաճարի առաջ եմ հայտնում ձեզ, իսկ դուք էլ Տիրոջ երկյուղով լսե՛ք իմ խոսքը: Նախ պետք է իմանալ, որ հարսանյաց օրինավոր խորհուրդն ու արարողությունն արահամարհելի կամ հեշտ գործ չէ, որն օրհնվում եւ իրագործվում է քահանայական աջով և եկեղեցական խորհրդակատարությամբ: Այլ շատ մեծ և պատկառելի խորհուրդ ունի, այնքան մեծ, որ մինչև իսկ Պողոս առաքյալն այն համեմատում է Քրիստոսի և Եկեղեցու սուրբ ու անապական հարսնության և փեսայության օրինակով: Հետևաբար, այս համեմատությունը պատվական և մեծահարգ է դարձնում ամուսնության Սուրբ խորհուրդը, որը, հիրավի, մարդկային գյուտ կամ հնարք չէ, այլ արարչադիր հրաման և աստվածային արվեստ. մարդու՝ դրախտից հեռանալուց հետո Աստված օրինադրեց, որպեսզի ամուսնության միջոցով աճեն ու բազմանան մարդիկ: Եվ սերնդագործության պետքի համար էր և ոչ թե ունայն հեշտանքի, որ Աստված մեր բնության մեջ սերը դրեց և աճեցրեց ու սաստկացրեց այն տղամարդու և կնոջ միջև այն աստիճան, որ աշխարհում այլևս ավելի մեծ սեր չգտնվեց, քան հարս ու փեսայինը: Եվ հենց այս պատճառով Աստված ոչ թե հողից, այլ Ադամի ոսկորներից ստեղծեց

Եվային, որպեսզի մարդն իբրև օտար էակի չնայի կնոջը, այլ՝ իբրև իր իսկ մարմնի, որը Բանն Աստված, ինքն իր հետ միավորելով, կնոջ սերը բարձրացրեց նրա ամուսնու սրտում և օրինադրեց, որ եթե նույնիսկ հարկ լինի, ամուսինը թողնի իր հորն ու մորը, ովքեր ծնեցին ու դաստիարակեցին մարդուն, - նա նրանց թողնի ու գնա իր կնոջ հետևից: Տե՛ս, ուրեմն, թե ի՛նչ մեծ և ամուր կապով միավորեց տղամարդուն ու կնոջը՝ որդեծնության նպատակով: Ընդ որում, ասաց. «Երկուսը մեկ մարմին պիտի լինեն: Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի», ինչպես որ մարդու կամ անասունի կատարյալ կազմություն ունեցող մարմինը ոչ ոք չի կարող երկուսի բաժանել: Ահա այս պատճառով է, որ Առաքյալն էլ, Քրիստոսից սովորելով, ասում է, թե՝ «Մարդիկ պիտի սիրեն իրենց կանանց, ինչպես իրենց մարմինները»: Եվ սրանից ավելի բարձր և վեհ մի խորհուրդ է հայտնում՝ «Տղամարդի՛կ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց եկեղեցին և իր անձը նրա համար խաչի մահվան մատնեց»: Տեսնու՞մ ես՝ իրենց կանանց հանդեպ մահու չափ զորավոր սեր է պահանջում ամուսիններից: Իսկ կանանց էլ օրինադրում է, որ հնազանդ լինեն իրենց ամուսիններին, և ավելացնում է, թե ինչպես որ Եկեղեցին՝ Քրիստոսի հարսը, հնազանդվում է Քրիստոսին, այնպես էլ կանայք ամեն ինչում պիտի հնազանդվեն իրենց ամուսիններին: Աստուծո այս պատկառազդու հրամանն է, որ ես՝ իբրև միջնորդ և քահանա, Աստծո իսկ հրամանով այժմ երկրորդում և պատգամում եմ հարսիդ ու փեսայիդ:

Ահավասիկ, աստվածային այս ընթերցումներից պարզ դարձավ, որ կինն ու տղամարդն անքակ կապով են իրար միանում և հնարավոր չէ նրանց միմյանցից բաժանել, ինչպես որ անհնար է մարմնի անդամներին գլխից բաժանել: Եվ երբ մարմնի վրա վերք է լինում կամ սաստիկ ցավ է պատահում, գլուխը չի կտրում և իրենից հեռացնում հիվանդ անդամին, այլ խնամում ու գուրգուրում է հատկապես այդ հիվանդ անդամին և մեծապես վշտանում, պրպտում և հոգ է տանում, որպեսզի այդ հիվանդ անդամն իրենից չբաժանվի. որովհետև քաջ գիտի, որ անդամի հատումը ցավ է և պակասություն, իսկ մեկ այլ իմաստով՝ նաև ամոթ ու դժբախտություն հենց իր՝ մարմնի համար: Նմանապես նաև երբ գլխին է որևէ վտանգ պատահում, ամբողջ մարմինը վշտանում է և անմիջապես մեծ փութով սպասավորում գլխին, որպեսզի ինքն էլ հիվանդ գլխի հետ չկորչի: Արդ, այսպիսի սիրով պիտի միասին ապրեն այր ու կին և կյանքում պատահող ամեն դիպված ու պատահար հավասարապես կիսեն ու բեռը կրեն, ըստ աստվածադիր հրամանի, այսինքն՝ ակամա բոլոր այն սխալներն ու թերացումները, որ մարդը կարող է գործել, համաձայն իր սխալա-

կան բնության, կենցաղային և ընտանեկան հարցերում, - ամուսինները պետք է այդ հարցերում ներեն միմյանց՝ հանուն սիրո օրենքի: Եվ բոլոր հիվանդությունների պարագային, որ հաճախ են պատահում՝ տկարություն, կուրություն, հաշմանդամություն և այլն, անկեղծ սիրով միմյանց դարմանել: Սրանց համար, անշուշտ, պետք է աղոթել, որպեսզի բնավ չպատահեն, բայց առկայության պարագային էլ՝ առանց տրտնջալու և ձանձրանալու խնամք տանել, ինչքան որ պահանջում է Աստվածային օրենքը: Եվ այս ամենը պահանջվում է մասնավորապես տղամարդուց՝ իբրև ուժեղ սեռի ներկայացուցչից: Այս բոլոր մարմնական դժվարություններից և հիվանդություններից առավել տղամարդը պետք է ջանա չնչին և փոքր սխալների համար կնոջ հանդեպ ներողամիտ լինելու: Աստվածային օրենքին հակառակ է այս պարագային բռնությամբ և ծեծով առաջնորդվելու, այլ՝ երկայնմտությամբ և համբերությամբ զգաստության բերելու, ինչպես որ Պետրոս առաքյալը պատվիրում է ամուսիններին, իմաստությամբ կանանց շահելու և իբրև տկար անոթների նրանց խնամք տանելու: Տե՛ս, օրինակ՝ մեր կարիքների համար պատվական ու պայծառ է ապակե շիշը: Բայց իր դյուրաբեկ բնույթի պատճառով եթե խնամքով չվերաբերվենք, անմիջապես կփշրվի և նրա մեջ եղած պարունակությունն անմիջապես գետին կթափվի և օգուտի փոխարեն միայն վնաս կպատճառի»[63]:

[63] «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», էջ 231-232:

Գենդերային հասկացությունների ցանկ

Ա

Աղքատության գենդերային տեսանկյունները – վիճակ, երբ մարդու կենսական պահանջները գերազանցում են դրանց բավարարման համար նրա հնարավորությունները: Աղքատությունը լինում է բացարձակ (երբ միջոցները չեն բավարարում ֆիզիկական կյանքի և առողջության պահպանման համար) և հարաբերական (երբ միջոցները չեն բավարարում տվյալ հասարակության մեջ ընդունված կյանքի մակարդակը ապահովելու համար): Բնակչության զարգացմանն ուղղված միջազգային փաստաթղթերում (**«Պեկինյան գործողությունների ծրագիր», «Կոպենհագենի գործողությունների ծրագիր», ՄԱԿ-ի «Հազարամյակի նպատակներ»**) առաջնային է համարվում աղքատության վերացումը և պայքարը աղքատության ֆեմինացման դեմ: Աղքատության մեջ են հայտնվում հատկապես խոցելի սոցիալական խմբերում հայտնված կանայք՝ անձինք միակողմանի ծնողազուրկ ընտանիքներից, միայնակ թոշակառուներ և հորիզոնական **խտրազատման** հետևանքով ցածր վարձատրվողներ:

Աշխատանքի վարձատրության գենդերային շերտադասում – աշխարհի գրեթե բոլոր երկրներում տղամարդկանց աշխատավարձը բարձր է կանանց աշխատավարձից: Դա կարող է ամրագրված լինել օրենքում կամ հորիզոնական և ուղղահայաց **խտրազատման** (**սեգրեգացիայի**) արդյունք լինել: Օրինակ՝ Հայաստանում կանանց միջին աշխատավարձը 2008 թ. տվյալով կազմում էր տղամարդկանց միջին աշխատավարձի 58%: Իհարկե, դա չի նշանակում, որ միևնույն աշխատանքի դիմաց կանայք ավելի ցածր աշխատավարձ են ստանում, այլ ուղղակի նրանք աշխատում են ավելի ցածր վարձատրվող ոլորտներում կամ նույն ոլորտում ավելի ցածր պաշտոններում:

«Ապակյա առաստաղ» – անտեսանելի մի խոչընդոտ, որն իշխանության սանդղակի որոշակի աստիճանից չի թողնում կնոջը բարձրանալ:

Առնականություն /մասկուլինություն/ – պատկերացումների ամբողջություն անհատական որակների և վարքի վերաբերյալ, որը վերագրվում է «իսկական տղամարդուն»:

Բ

Բռնություն կանանց նկատմամբ – ագրեսիվության յուրօրինակ տեսակ, որը կարող է արտահայտվել ամենատարբեր ձևերով՝ հայհոյանքով, անձը նվաստացնող արգելքներով, ֆիզիկական բռնությամբ, բռնաբարությամբ: Տարածված տեսակ է բռնությունը ընտանիքում:

Գ

Գենդեր - սոցիալ-մշակութային նորմերի համակցություն է, որը հասարակությունը պարտադրում է մարդկանց՝ նրանց սեռին համապատասխան: Գենդերը բացահայտում է կանանց և տղամարդկանց գործունեության ձևերի, վարքի և զգայական բնութագրերի տարբերությունները:

Գենդերային ադապտացիա – գենդերային սոցիալականացման փուլ, որի ընթացքում անձը հարմարվում է հասարակության մեջ տիրապետող գենդերային հարաբերություններին, նորմերին, դերերին:

Գենդերային անհավասարություն – կանանց և տղամարդկանց, որպես առանձին սոցիալական խմբերի կայուն տարբերություններից առաջացող անհավասար հնարավորություններ հասարակական կյանքում: Անհավասարությունը ստեղծվում է սոցիալական պրակտիկայի ընթացքում, ընդ որում տղամարդկանց սոցիալական կարգավիճակը որպես կանոն ավելի բարձր է, քան կանանց կարգավիճակը: Կանանց մոտ ցածր կարգավիճակ ունեցող այլ սոցիալական խմբերի անդամների նման, տղամարդկանց համեմատությամբ, ավելի ցածր է նույնականացումն իրենց խմբի հետ: Կանայք իրենք իրենց թերագնահատում են և ընդունում տղամարդկանց, որպես ավելի բարձր կարգավիճակ ունեցող սոցիալական խմբի տեսակետը: Դրա հետ է կապված նաև կանանց «**ինքնախտրականությունը**»:

Գենդերային ասիմետրիա - գենդերային անհամաչափություն, կյանքի բոլոր ոլորտներում տղամարդկանց ու կանանց սոցիալական և մշակութային դերերի (և դրանց մասին պատկերացումների) անհամաչափ ներկայացվածություն: Օրինակ՝ Հայաստանում կանայք կազմում են բնակչության կեսից ավելին, սակայն ՀՀ Ազգային Ժողովում (2007 թ.) նրանք կազմում են պատգամավորների 9 %-ը, սեփական բիզնես ունեցողների 3,7%-ը, կանայք աշխատում են տղամարդկանցից շատ, սակայն նրանց աշխատավարձը կազմում է տղամարդկանց աշխատավարձի 58,2%-ը և այլն: ՀՀ-ում կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ, իսկ գենդերային անհամաչափության հիմնական պատճառը թաքնված **խտրականությունն** է և իշխող գենդերային կարծրատիպերը:

Գենդերային կոնֆլիկտ – հոգեբանական վիճակ, որի հիմքում ընկած է գենդերային արժեքների, հարաբերությունների, դերերի հակասական ըմբռնումից առաջացող շահերի և հետաքրքրությունների ուժեղ բախումը: Փաստորեն, կոնֆլիկտային հակասությունները կարող են առաջանալ սեռերի ավանդական և նոր դերերի միջև:

Գենդերային գաղափարախոսություն – գաղափարների և հայացքների, հասկացությունների և պատկերացումների համակարգ՝ տղամարդկանց ու կանանց, որպես երկու սոցիալական խմբերի փոխհարաբերությունների, հասարակության մեջ նրանց դերի ու կարգավիճակի մասին:

Գենդերային գործոնի հաշվառմամբ զարգացման ցուցանիշ /ԳԳՀԶՑ/ – Կյանքի սպասվելիք տևողության, կրթության մակարդակի և եկամուտների հաշվառումը գենդերային անհավասարության տեսանկյունից: Օրինակ՝ տղամարդկանց կյանքի միջին տևողությունը Հայաստանում 6 տարով պակաս է կանանց կյանքի տևողությունից: Բարձրագույն կրթություն ունեցողների 60 տոկոսը Հայաստանում կանայք են: Ինչպես և շատ երկրներում, տղամարդկանց եկամուտը Հայաստանում շատ ավելի բարձր է, քան կանանց եկամուտը:

Գենդերային դերեր – հասարակության կողմից սեռի «համապատասխան» թելադրվող վարքի մոդելներ (արտաքին տեսք, խոսք, հագնվելու ոճ, ժեստերի համակարգ, շարժ ու ձև և այլն): Լինել կին կամ տղամարդ նշանակում է հասարակության մեջ խաղալ կանխորոշված որոշակի դեր:

Գենդերային դիսփլեյ – Այս եզրն առաջադրվել է ամերիկյան սոցիոլոգ Իրվին Հոֆմանի կողմից: Գենդերային դիսփլեյը հասարակության կողմից տղամարդկանց ու կանանց գործողությունների և փոխհարաբերությունների վերաբերյալ թելադրված նորմերի հետ առնչված արտահայտությունների բազմազանությունն է: Մարդու անունը, արտաքին տեսքը, ձայնը, խոսելու և շարժվելու ձևը, զգացմունքների արտահայտման ոճը ներկայացնում են գենդերային դիսփլեյը, որը թույլ է տալիս նույնականացնել մարդուն կնոջ կամ տղամարդու հետ: Սակայն այն չի սահմանափակվում միայն վերոհիշյալով: Իրականում դա վարպետորեն իրականացվող խաղ է, որը վաղուց արդեն սերտաճել է «դերասանների»՝ կանանց և տղամարդկանց կյանքերի հետ:

Գենդերային զգայուն քաղաքականություն – քաղաքականություն, որը հաշվի է առնում կանանց և տղամարդկանց ֆիզիկական, սոցիալական, տնտեսական բնութագրերի և կյանքի փորձի, ինչպես նաև

առանձին խմբերի (օրինակ՝ հաշմանդամների) տարբերությունները՝ իրականացվող քաղաքականության դրական արդյունքների մատչելիության հանդեպ հավասար հնարավորություններ ապահովելու համար:

Գենդերային լուսավորություն – *անհրաժեշտ գործիք է հետևյալ նպատակների իրականացման համար.*

- հասարակության գենդերային իրավագիտակցության բարձրացում.
- հասարակության գենդերային էգալիտար մշակույթի զարգացում.
- ժողովրդավարական այնպիսի հասարակության կառուցում, որը «կգիտակցի և կզգա» սեռի առանձնահատկությունները.
- ազգային անվտանգության համակարգի ապահովում կանանց ներուժի լիարժեք օգտագործմամբ.
- միջազգային ասպարեզում Հայաստանի մրցակցային հնարավորությունների ուժեղացում.
- սոցիալական քաղաքականության վրա իշխանության ուշադրության հրավիրում.
- քաղաքականության մեջ սոցիալական արդարության սկզբունքի հաշվառում:

Գենդերային կարծրատիպեր – մշակույթում ձևավորված համեմատաբար կայուն ընդհանրացված պատկերացումներ՝ կանանց ու տղամարդկանց և համապատասխանաբար նրանց վարքի վերաբերյալ:

Գենդերային համակարգ – տղամարդկանց և կանանց միջև հարաբերությունների ամբողջություն, որը ներառում է այն պատկերացումները, ֆորմալ և ոչ ֆորմալ նորմերն ու կանոնները, որոնք որոշվում են հասարակության մեջ տղամարդկանց և կանանց գրաված դիրքի, տեղի, նպատակների համապատասխան:

Գենդերային հավասարություն – հավասարություն սոցիալական իշխանության մեջ, հասարակական ռեսուրսների հավասար հասանելիություն: Հավասարությունը և նույնությունը տարբեր հասկացություններ են: Կանայք և տղամարդիկ հասարակության մեջ կարող է չունենան նույն դերերն ու բնութագրերը, բայց կարող են հավասար լինեն:

Գենդերային մոտեցում – երկու սեռերի շահերի հաշվառում պետության քաղաքականության մեջ, որը հատուկ է ներկայացուցչական ժողովրդավարությանը: Հասարակական կյանքի զանազան երևույթներ տարբեր ազդեցություն են ունենում կանանց և տղամարդկանց վրա: Սրա

գիտակցումը և հաշվառումը պետական քաղաքականության մեջ նշանակում է ցուցաբերել գենդերային մոտեցում: Պեկինյան գործողությունների ծրագրում այն նշվում է որպես գենդերային չափման ինտեգրում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Գենդերային մշակույթ – քաղաքական մշակույթ է, որը ցույց է տալիս, թե որքանով է գենդերային գործոնը ընդգրկված քաղաքական ինստիտուտների բնութագրերի և պետական քաղաքականության մեջ, թե ինչ չափով է գենդերային գործոնը ընդգրկված քաղաքականության կառուցվածքային տարրերում, ճանաչողական (քաղաքական գիտելիքներ, քաղաքական մտածողություն, կրթություն), բարոյա-արժեքային (ավանդույթներ, արժեքներ, իդեալներ, համոզմունքներ), քաղաքական վարքի տիպերում, ձևերում, ոճում, հասարակական-քաղաքական գործունեության օրինակներում:

Գենդերային նորմեր – վարքի որոշակի կանոններ, որոնք պարտադրվում են մարդուն՝ ելնելով նրա կենսաբանական սեռից: Դրանք պարտադրվում են՝ համապատասխանեցնելով այն պատկերացումներին, թե ինչպիսիք պետք է լինեն «իսկական տղամարդը» և «իսկական կինը»:

Գենդերային նույնականություն – բնութագրում է մարդուն՝ այս կամ այն սեռին նրա պատկանելիության տեսանկյունից և ելնելով նրանից, թե ինչպես է իրեն զգում մարդը որպես կին կամ տղամարդ: Գենդերային նույնականության համար նշանակություն ունի անհատի սոցիալականացման փորձը: Վաղ հասակից է երեխան յուրացնում, թե ինչ է նշանակում լինել կին կամ տղամարդ, այնուհետև ինքնորոշվում է որպես կին կամ տղամարդ, ապա իր վարքը փորձում է համապատասխանեցնել հասարակության գենդերային կարծրատիպերին: Գենդերային նույնականությունն ավելի լայն հասկացություն է, քան սեռադերային նույնականությունը, քանի որ այն ներառում է ոչ միայն սեռադերային տեսանկյունը, այլև **գենդերային դիսֆլեյը**: Այն ներառում է նաև սեռական նույնականությունը:

Գենդերային չեզոք քաղաքականություն – քաղաքականություն, որն անտեսում է կանանց և տղամարդկանց ֆիզիկական, սոցիալական, տնտեսական բնութագրերի և կյանքի փորձառության, ինչպես նաև առանձին խմբերի (օրինակ՝ հաշմանդամների) տարբերությունները: Այսպիսի քաղաքականությունը չի նպաստում գենդերային խտրականության վերացմանը:

Գենդերային քվոտա – իշխանության մարմիններում կանանց և տղամարդկանց ներկայացվածության օրինականացված մակարդակ:

Քվոտաները ժամանակավոր միջոց են՝ գենդերային հավասարության ապահովման համար: Օրինակ՝ քաղաքական ոլորտում գենդերային քվոտաները հնարավորություն են տալիս կանանց ներգրավել քաղաքական որոշումների ընդունման մակարդակում և թույլ չեն տալիս, որ կանայք օտարվեն քաղաքական կյանքից:

Զ

Զուգակշռված ժողովրդավարություն – Այս հայեցակարգը մշակվել է Եվրախորհրդի կառույցում գործող Մարդու իրավունքների դեպարտամենտի տղամարդկանց և կանանց հավասարության կոմիտեի կողմից: Այն նախատեսում է տղամարդկանց հետ միասին կանանց լիարժեք մասնակցություն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Զուգակշռման գլխավոր կարգախոսն է՝ իշխանության մարմիններում կանանց և տղամարդկանց ներկայացվածություն, 50/50 բանաձևի համաձայն:

Է

Էգալիտար պետական քաղաքականություն – քաղաքականություն, որի հիմքում ընկած է հավասար պայմանների ստեղծումն անձի՝ անկախ սեռից, ինքնադրսևորման համար հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Թ

Թրաֆիքինգ – Մարդկանց թրաֆիքինգ նշանակում է՝ շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը ուժի սպառնալիքով կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով: Շահագործումը նվազագույնը ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը

կամ ստրկությանը համանման սովորույթները, անազատ վիճակը կամ մարմնի մասերը կորզելը:[64]

Ի

Ինտերիորիզացիա – գենդերային սոցիալականացման փուլ, որի ընթացքում տեղի է ունենում գենդերային դերերի, նորմերի և արժեքների սերտաճումը անձի էությանը:

Խ

Խտրականություն – սեռի հատկանիշով ցանկացած տարբերություն, բացառություն կամ սահմանափակում, որն ուղղված է կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիման վրա քաղաքական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական, կամ ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներից ու հիմնական ազատություններից կանանց օգտվելու նվազեցմանը կամ ի չիք է դարձնում դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը՝ անկախ նրանց ընտանեկան դրությունից:

Կ

Կանանց դրությանը նվիրված միջազգային առաջին խորհրդաժողով Մեխիկոյում (1975 թ.) – այս խորհրդաժողովի ընթացքում ընդունվել է մի կարևոր որոշում: Եթե մինչ այդ համարվում էր, որ զարգացման արդյունքում կանանց դրությունը կբարելավվի, ապա այժմ հասկանալի դարձավ, որ զարգացումը անհնար է առանց կանանց մասնակցության: Այդ պատճառով ընդունվեց «Համաշխարհային գործողությունների ծրագիր», որի ծրագիր-մինիմումով նախատեսվում էր մինչև 1980 թվականը կանանց համար ապահովել կրթության, առողջապահության, զբաղվածության, քաղաքական գործունեության, ընտանիքի պլանավորման և այլնի հավասար մատչելիություն: Խորհրդաժողովը կոչ արեց կառավարություններին հատուկ ռազմավարություն մշակել դրա

---

[64] Եվրոպայի խորհրդի Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիա,հոդված 4:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրություն, հոդված 3, հոկտեմբերի 4-15, 1999թ., Վիեննա:

համար: Խորհրդաժողովի պահանջով և ՄԱԿ-ի որոշմամբ 1975-1985 թթ. հայտարարվեց «Կանանց տասնամյակ»:

Կանանց դրությանը նվիրված միջազգային երկրորդ խորհրդաժողով Կոպենհագենում (1980 թ.) – խորհրդաժողովին մասնակցել է ՄԱԿ-ի անդամ 145 երկիր: Այս խորհրդաժողովում հաստատվել է այն, որ անհամապատասխանություն գոյություն ունի երաշխավորված իրավունքների և դրանցից կանանց օգտվելու միջև: Համաշխարհային հանրության ուշադրությունը հրավիրվեց հատուկ միջոցների կիրառմանն երեք ոլորտներում՝ կրթության հավասար մատչելիություն, աշխատանքի տեղավորման հնարավորություն և բժշկական սպասարկում: Խորհրդաժողովում դրվեց ղեկավար պաշտոններում կանանց ոչ բավարար մասնակցության հարցը և խորհուրդ տրվեց կառավարություններին մշակել նաև գործողությունների ծրագիր կանանց օգնելու նպատակով (կանանց ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով սոցիալական ենթակառուցվածքի զարգացում, կանանց ինքնագիտակցության բարձրացում և այլն):

Կանանց դրությանը նվիրված միջազգային երրորդ խորհրդաժողով Նայրոբիում (1985 թ.) – հրավիրվել է ՄԱԿ-ի հայտարարած «Կանանց տասնամյակի» արդյունքների գնահատման համար: Այս շրջանում կանանց շարժումն արդեն հզոր համաշխարհային ուժ էր դարձել՝ միավորվելով հավասարության, զարգացման և խաղաղու- թյան կարգախոսներով: Պետությունների ներկայացրած հաշվետվու- թյունները ցույց տվեցին, որ կանանց դրության էական բարելավում տեղի չէր ունեցել: Մշակվեցին նոր ռազմավարություններ, որոնք միաձայն ընդունվեցին 157 մասնակից երկրների կողմից: Այս խորհրդաժողովում իշխանությունը գենդերային տեսանկյունից դիտվեց որպես սոցիալական ներգործության մեծ հնարավորություն, ուստի դրվեց իշխանության բնույթի վրա կանանց ազդեցության ուժեղացման և իշխանության բնույթի փոփոխման հիմնախնդիրը:

Կանանց դրությանը նվիրված միջազգային չորրորդ խորհրդաժողով Պեկինում (1995 թ.) – Պեկինի 1995 թ. Կանանց դրությանը նվիրված Համաշխարհային չորրորդ խորհրդաժողովը բեկումնային եղավ: Խորհրդաժողովի աշխատանքներին մասնակցում էին 17000 պատգամավորներ 189 երկրներից: Խորհրդաժողովում միաձայն ընդունվեց «Պեկինյան հռչակագիրը» և «Գործողությունների ծրագիրը»: «Գործողությունների ծրագրում» նշվեցին 12 կարևորագույն հիմնախնդրային ուղղություններ՝ կանայք և աղքատությունը, կանանց կրթություն և մաս-

նագիտական պատրաստություն, կանայք և առողջապահությունը, բռնություն կանանց նկատմամբ, կանայք զինված հակամարտության շրջանում, կանայք և տնտեսությունը, կանանց մասնակցությունը որոշումների ընդունման մեջ, կանանց դրության բարելավման ինստիտուցիոնալ մեխանիզմներ, կանայք և մարդու իրավունքները, կանայք և ԶԼՄ-ները, կանայք և շրջակա միջավայրը, աղջիկները: Դրվեց հավասար հնարավորությունների խնդիրը: Կառավարությունները պարտավորություններ ստանձնեցին՝ համալիր մոտեցում ցուցաբերելու գենդերային խնդիրների լուծման համար: Խնդիր դրվեց ոչ թե բարելավել կանանց դրությունը, այլ վերակառուցել քաղաքական ու տնտեսական որոշումների գործընթացը և քաղաքական ինստիտուտները: Մեծ նշանակություն ունեցավ նաև այն, որ ազգային կառավարությունները պետք է պարբերաբար հաշվետվություններ ներկայացնեին «Պեկինյան գործողությունների ծրագրի» կատարման մասին:

Կանանց իրավունքներ – վերաբերում է մարդու իրավունքների երրորդ սերնդին՝ կոլեկտիվ իրավունքներին: Կանանց իրավունքներն առանձնացվում են որպես մարդու իրավունքների առանձին խումբ: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից հետո ՄԱԿ-ն ընդունել է գենդերային հավասարությանն ուղղված ավելի քան 100 փաստաթուղթ, այդ թվում՝ «Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիան», որը հաճախ կոչվում է «Կանանց կոնվենցիա»:

«Կանանց կոնվենցիա» – Կոնվենցիան միջազգային իրավական փաստաթուղթ է, որն ունի օրենքի կարգավիճակ և պարտադիր է այն պետությունների համար, որոնք իրենց խորհրդարաններում վավերացրել են այն: Պատահական չէ, որ կանանց շահերին նվիրված ՄԱԿ-ի կոնվենցիաները անվանում են «Կանանց հանդեպ խտրականության կանխարգելման իրավական զենք»: Դրանցից է 1979 թվականին ընդունված «Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման» կոնվենցիան, որը հաճախ անվանում են «Կանանց կոնվենցիա»: Կոնվենցիան պարտավորեցնում է բոլոր պետություններին.

- կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքը մտցնել Սահմանադրության և այլ օրենսդրական ակտերի մեջ ու իրագործել գործնականում.
- անհրաժեշտության դեպքում կիրառել կանանց խտրականությունն արգելող հատուկ սանկցիաներ.
- ապահովել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքը՝ օգտվելու տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական և քաղաքական իրավունքներից:

Կոնվենցիայում տրվում է խտրականության բնորոշումը և առանձնացվում երկու ոլորտ՝ զբաղվածության ոլորտում խտրականության վերացում և քաղաքականության մեջ առաջխաղացման համար հատուկ քվոտաների կիրառում: Հայաստանի Հանրապետությունը «Կոնվենցիան» վավերացրել է 1993 թվականի հունիսի 9-ին:

Կանացիություն – անհատական որակների և վարքի վերաբերյալ պատկերացումների ամբողջություն, որ վերագրվում է «իսկական կնոջը»:

«Կպչուն հատակ» – կանանց մոտ գենդերային կարծրատիպերի ազդեցությամբ ձևավորված հոգեբանական արգելքներ, որոնք խոչընդոտում են կանանց առաջխաղացմանը:

Կենսաբանական սեռ – անատոմիական, ֆիզիոլոգիական, բիոքիմիական և գենետիկական բնութագրերի ամբողջությունն է, որը հիմք է հանդիսանում իգական և արական սեռի ներկայացուցիչների օրգանիզմների տարբերակման համար: Սեռային կենսաբանական տարբերությունները կարող են չափազանց ընդգծվել կամ ընդհանրապես անտեսվել՝ պայմանավորված հասարակությունում տիրապետող գաղափարախոսությամբ: Դա կախված է ժամանակաշրջանից, մշակույթից, քաղաքականությունից: Այսինքն՝ կենսաբանական սեռը, որպես գենդեր, ձևավորվում է գաղափարախոսության ներգործությամբ: Հետևապես, կարելի է ասել, որ գենդերը նաև գաղափարախոսության արդյունք է:

Հ

Հավասար արդյունքների հայեցակարգ – Հավասարության ժամանակակից հայեցակարգի համաձայն, կանանց և տղամարդկանց հավասար արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է նրանց հանդեպ ցուցաբերել տարբեր մոտեցում: Դա բացատրվում է նրանով, որ սեռերի կյանքի պայմանները խիստ տարբեր են, և կանանց նկատմամբ խտրականությունը բացառելու համար անհրաժեշտ են հատուկ միջոցներ:

«Համալիր մոտեցում սեռերի հավասարության հիմնախնդրին» – Այս ռազմավարությունը նախատեսում է գենդերային հավասարության հիմնախնդրի հաշվառում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և մակարդակներում: Այն հայտնվեց միջազգային տարբեր փաստաթղթերում Կանանց դրությանը նվիրված երրորդ խորհրդաժողովից հետո: Եվրախորհուրդը կազմակերպեց մասնագետների հատուկ խումբ, որը մշակեց ըստ «Համալիր մոտեցման» հայեցակարգային

սկզբունքներն ու մեթոդները: Դա նշանակում է, որ պետության բոլոր օրենքները և քաղաքական բոլոր ծրագրերն ընդունելիս պետք է հաշվի առնվի գենդերային հավասարության հիմնախնդիրը:

- **«Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիր»** – հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2004 թ. ապրիլի 8-ին, ստորագրվել ՀՀ նախագահի կողմից 2004 թ. մայիսի 17-ին:

Հորիզոնական սեգրեգացիա սեռի սկզբունքով – հորիզոնական խտրազատում, որն արտահայտվում է տնտեսության ճյուղերի մասնագիտություններում տղամարդկանց և կանանց անհավասար բաշխմամբ: Հորիզոնական սեգրեգացիայի դեպքում մասնագիտությունները բաժանվում են «կանացի» (օրինակ՝ ուսուցչություն) և «տղամարդկային» (օրինակ՝ բիզնես) մասնագիտությունների: Որպես կանոն, տղամարդկային մասնագիտություններում աշխատավարձերը և եկամուտներն ավելի բարձր են:

Ճ

Ճգնաժամային կենտրոններ – կենտրոններ, որոնք հոգեբանական և իրավական օգնություն են ցույց տալիս ընտանեկան բռնության ենթարկված կանանց:

Մ

Մարդկային ներուժի զարգացման ցուցանիշ – անհրաժեշտ կրթական մակարդակի և եկամուտների հաշվառում՝ կյանքի ակնկալվող տևողության, անձի հնարավորությունների զարգացման համար: Մարդկության ներուժի հայեցակարգը մարդու կենսամակարդակը հռչակում է որպես հիմնական նպատակ: Այս ցուցանիշի համաձայն երկրները բաժանվում են տարբեր խմբերի: Մարդկային զարգացման բարձր մակարդակ ունեն այն երկրները, որոնց ՄՆՁՑ-ն բարձր է 0.8-ից, միջին մակարդակ՝ 0.5-0.8, ցածր մակարդակ՝ 0.5-ից ցածր:

Ն

Նախապաշարումներ կանանց նկատմամբ – յուրահատուկ առասպելներ կանանց մասին, որոնք ձևավորվել են հայրիշխանական մշակույթի պայմաններում և ամրագրվել հասարակական գիտակցության մեջ:

Ներկայացուցչական ժողովրդավարություն – Ժողովրդավարության բանաձևն է՝ ժողովրդի իշխանություն ժողովրդի միջոցով՝ ժողովրդի համար: Ներկայացուցչական ժողովրդավարությունը նախատեսում է բոլոր սոցիալական խմբերի համաչափ ներկայացվածություն ներկայացուցչական մարմնում: Սակայն, իրականում, պետությունների մեծ մասում այդ սկզբունքը խախտվում է, նկատվում է ուժեղ անհամաչափություն: Օրինակ՝ ՀՀ Ազգային Ժողովում այսօր կանայք ինը տոկոս են կազմում:

Պ

Պետական քաղաքականություն կանանց նկատմամբ – սոցիալական քաղաքականության կարևոր բաղկացուցիչ, որը վերաբերում է կանանց, որպես մեծ սոցիալ-դեմոգրաֆիական խմբի, ձևավորում է նրանց իրավական և սոցիալական կարգավիճակը, կարգավորում հարաբերությունները հասարակության հետ: Պետական քաղաքականությունը կանանց նկատմամբ զարգանում է **գենդերապես չեզոքից** մինչև **գենդերապես զգայունը** և սերտորեն կապված է ժողովրդավարական գործընթացների խորացման հետ:

Պոզիտիվ խտրականություն – Հասարակության մեջ գենդերային խտրականության առկայության պայմաններում իրավունքների հավասարությունը չի առաջացնում հնարավորությունների հավասարություն կանանց համար: Արտոնությունների համակարգը կանանց համար այս դեպքում հնարավորություն է տալիս հավասարեցնել իրենց և տղամարդկանց մեկնարկային հնարավորությունները: Այդպիսի համակարգի ստեղծումը և իրագործումը կոչվում է պոզիտիվ խտրականություն:

Ս

Սեգրեգացիա (խտրազատում) սեռի սկզբունքով – կանանց և տղամարդկանց աշխատանքի տեղավորման կայուն տենդենց խիստ որոշակի մասնագիտություններում, ճյուղերում, պաշտոններում: Այն ունի երկու մակարդակ՝ հորիզոնական և ուղղահայաց: Սեգրեգացիայի հականիշն է ինտեգրացիան, երբ տվյալ մասնագիտության մեջ կանանց և տղամարդկանց տոկոսը համապատասխանում է բնակչության թվաքանակում առկա նրանց տոկոսին: Պատմության մեջ սեգրեգացիայի բարձր աստիճանն ավելի հաճախ է հանդիպում, քան ինտեգրացիայինը:

Սեռական ոտնձգություն աշխատանքի վայրում – սեռական բնույթի առաջարկներ, պահանջներ, հետապնդում, որոնք որպես նախապայման են

նկատվում՝ կանանց աշխատանքի ընդունելիս կամ աշխատանքը պահպանելու, մասնագիտական առաջընթացն ապահովելու համար: Սեռական ոտնձգություն նշանակում է իշխանության չարաշահում՝ աշխատանքային դիրքի կամ պաշտոնի օգտագործմամբ: *Սեռական ոտնձգու- թյուն են համարվում՝*

1. կնոջ համար անցանկալի որևէ բնույթի ֆիզիկական հպումները.
2. սեռական բնույթի պահանջներն ու խնդրանքները, այդ թվում՝ ժամադրությունը.
3. սեռական բնույթի վիրավորանքները խոսքով կամ կատակների ձևով, որոնք հաճելի չեն կնոջը:

Ու

Ուղղահայաց սեգրեգացիա սեռի սկզբունքով – ուղղահայաց խտրազատում, որն արտահայտվում է պաշտոններում տղամարդկանց և կանանց անհավասար բաշխմամբ: Ընդ որում, օրինաչափ է հետևյալ երևույթը՝ որքան բարձր է պաշտոնը և աշխատանքի վարձատրությունը, այնքան նվազ՝ կանանց թվաքանակը:

Ֆ

Ֆեմինացում – սոցիալական, տնտեսական, քաղաքական գործընթացներում կամ ոլորտներում կանանց քանակի ավելացում, ինչպես նաև կանանց հատուկ բնութագրերի առաջացում (օրինակ՝ ժուռնալիստիկայի ֆեմինացում, կրթության ֆեմինացում, աղքատության ֆեմինացում):